



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2015

Հ. ՄԵԼԻՔ - ՀԱՅԿԱԶԵՐ

ՄԻ ՊՏԱՑ  
ՃԱԳՈՎՈՒՄ

910.4  
Ա-47

IawP



22461

Знайдено урвище в супроводі Лягушка **10 NOV 2011**  
ІІІ. зупинки

910.4

U-47

wf. Uh

## ՀԵՂԻՆԵ ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱԴ

Papirus

10 Supra.

ΨΣΩΣ

ՃԱՊՈՆԻԱ



Իմ յուշերից եւ սպաւորովի համեմատ

1004  
1001  
8959

91

Հրատարակութիւն  
«Ս. Լեսի Տեսանկան»  
Ընկերութեան

ԹԻՖԼԻԶ

Էլեկտրաշաբան «ՀԵՐՄԻՍ» ընկեր., Մադարեան փողոց 15.

1905



Съдебноделови дела

СУ

8888


# Ամպամակ

Дозволено цензурою. Тифлисъ, 23 декабря 1904 г.



Այսուհետու այս աշխատանքը պահանջվում է  
600

ՄԻ ՊՏՈՅՑ ՀԱՊՈՆԻՄ



## ՆԱԳԱՍՍԿԻՒԹ ԾՂՑԸ

Յունիսի առաւօտը նոր էր ծագում, երբ մեր  
առջևը ծովի մէջ նկարւեցին ճապոնական լեռների  
անորոշ զժերը:

Առաւօտը թարմութիւն ու զով էր շնչում:  
Եւ կուրծքը աղատ ու թեթև էր շունչ քաշում:  
Անընդհատ շարրով ձգում էին սարերը, մեր  
ամեն շարժումին նկատելի կերպով աճելով, մինչև որ  
երկու կողմից մեզ բոլորովին մէջ առան:

Մտանք նազասակի ծոցը, ճապոնի նախա-  
գուռը:

Նքանչելի է այդ ծոցը:

Նա սուր գալարուն օձի պէս խորը խրւում է  
ցամաքի մէջ և ձեզ մի անդամից փոխաղրում է մի  
այլ, ուրոյն աշխարհ, ուր ամեն-ինչ զարմանք է պատ-  
ճառում ձեր աչքերին իր մինիատիւր չափերով:

Բաց ծովը թողնելուց յետոյ շողենաւը մտնում  
է նեղ ու երկար նեղուցը և առաջ է սողում բլբոտ  
ու անտառապատ մանրիկ կղզեակների ամբողջ մի  
լարիքինտի միջով:

Կանաչ պուրակների անդրադարձումները իրար  
կցւում են ջրի մէջ, ծածկում են ծովի ամբողջ մա-  
կերեսը՝ ջրի մէջ մի նոր ցոլածու անտառ կազմելով:

Ճողենաւը առաջ է գնում այդ իրար հիւստող կանչի խիտ ցանցի միջով, յամառ ու անխնայ պատրուտելով նրան:

Կղզեակները առաջ են վազում աշխց, ձախից, դէմ են տալիս իրանց կուրծքը նրա ճամփին, կարծես ուզում են առաջը կտրեն, կանզնեցնեն շոգենաւի արագ ընթացքը: Բայց յանկարծ նորից բացւում է բարակ նեղուցը—և նորից առջեղ զմբուխտ կղզիներ:

Վերջ չկայ քմահաճ գալարներին: Ճողենաւի պտուտակի ամեն դարձին տեսարանը փոխւում է: Դէմ եկող ամեն մի հրւանդան բերում է իր հետ և մի նոր անակընկալ:

Երբեմն նաւակների մի ամբողջ շարք է, որ խըմբել է մանրիկ խորշում ձկնորսի խըճիթի տակ, երբեմն մի գերեզմանոց, որ սարն ի վեր է մագլցում, կամ ճզնաւորի լուիկ խուցը, որ գաղտուկ ցած է նայում անտառակի թագուն անկիւնից:

Թէս օրը շատ վաղ էր դեռ, բայց մեր շոգենաւի ամբողջ բնակչութիւնը դուրս էր թափել տախտակամածը, որ զմայլէ առատօրէն մեր դէմ բացւող տեսարանով ու այդ սար ու ծովի իրար զըկող դոյներով, որոնք աւելի էին գեղեցկացել «ծագող արեի» ճառապայթների տակ:

Մի առանձին պարզութիւն, փափկութիւն ու իդիլիկ անզորբութիւն է բուրում այդ ոչ-բարձր կենսուրակ սարերից, այդ օրօրուն մեզմ ծովից և երկընքի ջինջ կապոյտից:

Ո՛չ մի խիստ բեկւող գիծ չի խանգարում նկարի փափուկ ներդաշնակութիւնը, չի զրգում դիտողի երևակայութիւնն ու ջիղերը:

Ամեն ինչ կարծես ձգտում էր ճամփորդին էլ ներշնչելու մի խաղաղ ու զւարժ տրամադրութիւն այդ ժպտուն, կանաչ աշխարհը մտնելիս:

Կեանքը հետզհետէ զարթնում էր ծոցում: Զօնկերը ծալաւոր առագաստները բացած սլանում էին մեր մօտից ու շտապում բաց ծովը ձկան որսի:

Ճապոնական երկճեղ վերջով նաւակները ճօնւելով լող էին տալիս ամեն ուղղութեամբ: Ծովի կապոյտի վրա որոշակի գծագրում էր զեկավարի բնորոշ կերպարանքը, որը կանզնած կառավարում էր միակ թին, որը միենոյն ժամանակ և զեկի պաշտօն էր կատարում:

Նրա ընկերները մէկը միւսի ետևից գուրս էին սողում փոքրիկ խցիկից, որ անխուսափելի է ճապոնական ամեն մի նաւակի վրա, և սիրավը ժպիտով նայում էին մեր ետևից:

Մի ոլոր էլ, և ահա երևացին ույզում կանզնած մեծ նաւերի կայմերն ու ծխնելոյզները. սա՝ նազսակիին մօտ լինելու նշանն էր:

Նեղուցը յանկարծ բացւում է:

Քաղաքը ինքը մեր դէմ է լողում և շուտով պատում է մեզ օղակի պէս:

Ամերիկեան կրէյսերը, որի մօտով մենք անցնում ենք, նւազում է ի պատիւ մեզ ոռւսական օրհներգը,

որին շուտով յաջորդում է ամերիկական ազգային երգը, հնչուն ու սահուն կերպով փուլելով ծովի վրա: Բայց ընդհանրապէս շատ քիչ շարժում կայ ծոցում ամառայ շնորհիւ:

Ուեյգում կանգնած են մի քանի կէտորս նաւեր, երկու-երեք ճապոնական սովորական շոգենաւ, այլ և լայն ծոցի խորքում միայնակ կանգնած է ֆրանսիական մի գեղեցիկ զբահակիր:

Բոլորովին այլ պատկեր է ձմեռը, երբ այդ ծոցի մէջ աշխարհի ամեն կողմից հաւաքում են ռազմական տորմիղները: Այն ժամանակ օդի մէջ ծածանում են հազարաւոր զոյնզոյն դրօշակներ. ծովը կենդանանում է փորձեր անող մակոյիներով. սուր ճշում են շոգեմակոյիների սովորիչները, որոնք զինուորական հիւրերին մի նաւից միւսն են փոխադրում. նըրանց ետևից թնդում է հրազդների զարկը, որը մի ճշմարիտ թնդանօթաձգութիւն է դառնում, երբ ծոց է մտնում մի նոր կրէյսեր:

Իսկ այժմ ամեն-ինչ հանդիսատ է ու խաղադ:

Լսում է միայն ջրերի ճողփիմը մօտից սլացող ջօնկի տակ, և կրկին լուռ է:

\* \*

Խարիսխ ձգեցինը:

Ճապոնական նաւակների, «Փունէների» մի ամբողջ արշաւ շրջապատում է մեզ ու տիրում է մեր նաւին:

Ամեն կողմից առջևող բուսնում են փոքրիկ շարժուն մարդիկ իրենց երկար շորերով ու խոր ծունկի տալով՝ բարեսում են քեզ իրանց բարի ժպիտովք:

Ումանք գալիս են յանձնաբարական քարտերով, որոնց վրա գրած է ռուսերէն, թէ պ. Տակասիմա կամ Մերուտակի լաւ լւացք է անում, արագ ու վարպետորէն կարում է հագուստ, կամ կարող է հիանալի առաջնորդ դառնալ ու ցոյց տալ քաղաքի բոլոր նշանաւոր տեղերը:

Քարտի տակը փայլում է յանձնաբարողի ստորագրութիւնը, սովորաբար մի ծովային սպայի:

Սակայն խուժողների մեծ մասը ապրանք է բերում: Նրանք տիրում են տախտակամածին, բաց են անում իրանց անհամար կապոցները, արկղիկները, և ճամփորդի զարմացած հայեացքի զիմաց դուրս են գալիս մէկը միւսի ետևից սիրուն օրիժինալ փոքրիկ իրեր:

Տախտակամածը ամբողջովին մի եռուն խանութի է փոխարկում: Ամեն կողմ կանոնաւոր կերպով շարաւած են յատակին սափորներ, ալ' քօմներ, արկղիկներ, և նրանց մօտ ճապոնացին, որ ծունկի նստած հանդիսատ սպասում է յաճախորդին:

Ինձ ամենից շատ զարմանք էր պատճառում այդ իրերի շափազանց էժանութիւնը, որ բնաւ չէր համապատասխանում աշխատանքի մնանութեանը: Ու բոլորովին անհամականալի էր թւում, թէ ինչպէս նըրանք կարողանում են դիմանալ, երբ այդքան ցած

Են գնահատում իրանց աշխատանքը:

— Ասացէք ինպղեմ, — զարձայ ես վերջապէս իմ ծանօթ մի նաևսպայի, որ մտազբաղ կանգնած էր այդ ընդհանուր շարժման մէջ. — Ի՞նչն է ստիպում ճապոնացուն, որ այդպէս քիչ գնահատի իր աշխատանքը: Ի՞նչ է մնում նրան այս առուտուրից:

— Դուք մոռանում էք, ազնիւ օրիորդ, — առարկեց ինձ նաևսպան մի մեղմ ժպիտով. — մոռանում էք, որ ճապոնացու կեանքը շատ է պարզ. ի՞նչին է հարկաւոր շատ ստանալը, երբ իր պէտքերն էլ ամենեին բարդ չեն:

— Իսկն ասած, այդ իրերը աւելի շարժեն, — միշամտեց արհամարհու շեշտով մի նիհար ու մաղձու պարոն, որ կանգնած էր քիչ հեռուն. — Պրանք այժմ զրաւում են ձեզ իրանց զեղեցիկ գոյներովն ու էժանութեամբը. միայն գիտէք, ի՞նչպէս շուտ են կոտրըւում: Արդէն նրանց ոչ մի բանը դիմացկուն չէ: Ապա, որ ասում եմ, այս ժողովուրդը չափազանց անբարեխիղն է:

— Ի՞նչպէս կարող էք այդպէս թեթև կերպով պախարակել մի ամրող ժողովուրդ, — տաքացաւ նաևսպան. — կարո՞ղ էք ուրանալ, թէ այս իրերի վրա մեծ աշխատանք է դրած, այն էլ ի՞նչ նստուկ, մանր ու յամառ աշխատանք: Ոչ, պարոն, ճապոնացու անբարեխողութեան մասին խօսելն անդամ մեղք է: Դուք մեղաղըում էք, որ նրանց շինածը յաւիտենական չէ: Բայց իզուր: Մենք, իրքի եւրոպացիք, ամեն-

նից առաջ տեսական ու դիմացկուն լինելու ետևից ենք ընկնում, դիզում ենք այնքան անպէտք ու աւելորդ առարկաներ, որոնք մեզանից շատ աւելի են ապրելու: Մենք ընդհանրապէս խիստ ենք կապւած կեանքին ու կեանքի մանր բաներին. այդ պատճառով էլ մահը մեղ համար կարծես միշտ յանկարծակի է գալիս, իբրև մի անակնկալ, երկնքից ընկած բան: Այլ է ճապոնացու հայեացքը: Նա հինց իր մանկութիւնից նայում է իր կեանքին, ինչպէս մի արագ անցնող ու ժամանակաւոր բանի, ու զրա համար մեղպէս երբէք մեծ կարեսորութիւն չի տալիս այս աշխարհի բաներին: Ի՞նչու այդշափ հոդ տանենք իրերի տեսականութեան մասին, մտածում են նրանք, երբ մենք ինքներս տեսական չենք:

— Գիտէք, օրիորդ, — խօսքը շարունակեց նա դառնալով ինձ. — այս տեսակէտից խիստ բնորոշ է ճապոնական այբուբէնը:

— Ի՞նչպէս.

— Լսած չէք. դա մի ոտանաւոր է. այ, մօտաւորապէս կարելի է թարգմանել. «Դոյնն ու բոյրը կորչում են. մեր կեաներում ի՞նչն է մշտական: Այսօրն էլ սուզեց ոչնչութեան անդունդը. դա երազի մի անկայուն նմանութիւն էր և իր ետեից ոչ մի հետք չը թողեց»: Այս խօսքերը երեխաները կըկնում են շարունակ դպրոցում, և այս խօսքերի դբոշմը մնում է նրանց սրտում ամբողջ կեանքի մէջ: Այդ կնիքը դրւած է նրանց բովանդակ կենցազի վրա, նրանց

պարզ ու ազատ նիստ ու կացի, նրանց ընակարանների վրա, որոնք այն աստիճան թեթև և օդային են, որ ամեն մի անգլիացի նաւաստի ուսովը կարող է տեղիցը հանել. նոյն կնիքն է նրանց ամուսնական կապերի վրա, որ այնպէս հեշտ խզելի է:

— Զարմանալի է, — ընդհատեցի ես, — որ այս տեսակ հայեացքը նրանց մոռայլ չի դարձնում:

— Ի՞նչու. ընդհակառակը, դա շատ ընական է: Ապագայի խախուտ լինելը մարդ որքան խորն է զիտակցում, այնքան աւելի սիրով է փարում ներկային,

\* \*

Մինչդեռ վերնախւտում (տախտակամածի ետև մասում) առևտուրն էր տիրել, սպարդէկի (միջի մասի) վրա եռում էր աշխատանքը: Այստեղ ածուխ են բեռնում, միւս կողմից ջուր են քաշում շողենաւ:

Ածուխի նաւը կանգնած է մեր շողենաւին կից, ու մի երկու տասնեակ ճապոնացի յարդէ զլխարկները զլխներին կանգնած են խիտ շարքով նեղ տախտակի վրա՝ ածխանաւի զողից սկսած մինչև շողենաւի տախտակամածը: Նրանք անց են կացնում ձեռքէ ձեռք ածուխի զամբիւղները, որոնք կարծես սլանում են օդի մէջ, և զործը առաջ է սլանում մի զարմանալի աշխոյժով:

Ճուրը քաշում են մի փոքրիկ նաւակից, ուր բա-

նում էին մարդ ու կին, ամեն մէկը իր ջրմուղի գըլխին: Կինը մարդուց պակաս չէր աշխատում, մերթընդ մերթ նայում էր դէպի մեզ մի լայն ժպիտով, որի միջից, աւազ, երկում էին մուրի նման սկ ատամները, իբրև ամուսնական հաւատարմութեան զերագոյն նշան: Դա մի սովորութիւն է ձապոնում, որ կինը ցոյց տալու համար, որ բացի իր մարդուց ոչորի դուր դալու ցանկութիւն չունի, սեացնում է իր ատամները:

Հասաւ ժամանակը ափը ելնելու:

Իմ ուղեկիցներին ճանկել էր արդէն մի ճապոնացի, որ խոստանում էր մեզ առաջնորդել ուսական խոհանոց ունեցող մի հիւրանոց:

Սանդուխի տակ նաւակների մի այնպիսի խիտ բազմութիւն էր հաւաքւել, որ ստիպւած էինը անցնելու մի ամբողջ շարքի վրայից հասնելու համար վերջապէս ետևի ազատ նաւակներից մէկը:

Նաւավարը թռաւ նաւի վերջը, ձեռք առաւ թիւակը, որ միաժամանակ դեկի դերն էր կատարում, ու մեր նաւակը թափ-թափ տալով դէպի ափը շարժւեց:

Սրախօսները Վլաղիվօստոկում ֆունէին «յուլիու» են ասում, որովհետև զնալիս այնպէս է ճօճւում, որ որոշ աստիճանի հմտութիւն պիտի ունենաս առանց մի բանից բռնելու ոտքի վրա մնալու համար:

Եւ ահա աւելի ու աւելի մօտենում է մեզ տափարակ ափը իր փայտակերտ շէնքերով:

Մաքուր քարափը ձգում է եղելքին՝ խուզած ծառերով ստերաւորւած։

Այստեղ են ընդհանրապէս եւրոպական առևտրական հաստատութիւնները, բանկերն ու զանազան այդ կարգի շենքերը, իսկ աւելի վեր, սարի լանջին, ցըրւած են եւրոպական վիլաներն ու գետպանատները իրանց զանազանագոյն ծածանւող դրօշակներով։

Նէնքերը թէև եւրոպական են, բայց նրանց վրա մի ինչ-ոք ճապոնական դրոշմ կայ։ Նրանք բոլորը աշքի են ընկնում իրենց շինւածքի մի առանձին թեթևութեամբը, որի շարժառիթը ճապոնում յաճախ կրկնող երկաշարժներն են։


Մենք կանգ առանք վերջապէս քարէ նաւամատոյցի առաջ։ Մեր ափի վրա երեալը ամեն կողմից դէպի մեզ քաշեց լծւորների (ջինըիկիշաների) մի ահազին բազմութիւն, որոնք ճարտարախօս ժպիտով մատնանիշ էին անում իրանց մանրիկ կառքերի վրա։

Անշուշտ լսել էք, որ ճապոնում, ձիերի սակաւութեան պատճառով, ամբողջ մի դասակարգ կայ, որ նրանց պաշտօնն է կատարում։

Կառքերը խիստ փոքր են, միայն մի մարդու նստելու համար. ջենըիկշան բռնում է նրա երկայն թևերից և արագ վազ է տալիս, ոտները թափահարելով իսկական ձիու պէս։

Յոլորովին հարթ ու յարմար խճուղին ձգւում է ժապաւէնի պէս, որի վրայով երկանիւ թեթև կառքը գլորում է շատ հեշտ ու առանց առանձին ջանքի։

Ն Ա Գ Ա Վ Ա Ւ Ի Ք Ա Ր Ա Փ



Այդ պատճառով ջինըիկիշայի աշխատանքը նրա ուժեցից վեր չէ, անասնական մի բան չի համարւում. չի ճնշում, չի նւաստացնում նրա մարդկային արժանաւորութիւնը; Նա միշտ ուրախ ու բաւական է և մի առանձին հոգածութեամբ է վարւում իր հեծնորդի հետ: Նրա առածն էլ մեծ բան չէ. մէկ մեքսիկեան դօլարով (ոուբլի) կարելի է նրան ամբողջ օրով վարձել: Եւ նա բացարձակ յօժարութեամբ կատարում է ձեր բոլոր պատէրները, քաշում է, կանզնում կամ անփոյթ նստած իր կառքի առջևի մասում՝ սպասում է ձեզ, մինչև որ գուք ձեր գործը վերջացնէք:

Եւրոպացին իր երկրի հասկացողութեամբ չի կարող մի ոուբլին բաւական համարել այդ աշխատանքի համար, և տալիս է ընդհանրապէս աւելի: Դրա համար էլ օտար եկտորների տեսքը մագնիսի ազգեցութիւն է անում, իսկոյն թափում են դիմիդ և յամառ հետևում են քեզ, մինչև որ ձանձրանաս ու զիջես նրանց խնդրանքին:

Բայց այս անգամ նրանց յամառութիւնը յաջողութիւն չունեցաւ:

Մենք մեր ճապոնացու առաջնորդութեամբ վըճռաբար անցանք նրանց միջով, քարափից մտանք մի կողմնակի փողոց ու կանգ առանք մի փոքր երկարկանի տնակի առջև, որի ետեր սեպ քարաժայոի գլխին գեղեցիկ եւրոպական վիլաներն էին բազմած:

Այս տան տէրը մի ոուս էր, որ անհեանհերէր տալիս վարձու գլխաւորաբար Վաղիվոստօկից եկողներին:



Վերցըինք երկու սենեակ, մարդապլուխ երկու դօլլար, ուտել-խմելով։

Հազիւ էինք տեղատրւել, որ մեզ ճաշի կանչեցին։ Սեղանին նախագահում էր տեսքոտ ու բարձրահասակ տանտիկինը, ծագումով սիբիրուհի։ Նա արդէն վաղուց էր ապրում ճապոնում և ծառաների հետ բոլորովին ազատ խօսում էր ճապոներէն։

Սեղանակիցները բացառապէս ուտաներ էին, որոնք ոչ մի կերպ չէին կարողացել ընտելանալ անդլիական կերակուրներին, քանի որ շոգենաւներում ամեն տեղ ճաշը անզիփական է, և հիմա բոլոր սրտով ուրախ էին, որ վերստին սեղանի վրա տեսնելու են ուտական կաշան ու շշին։

Խօսակցութիւնը բնականաբար դառնում էր զրլիսաւրապէս ճապոնի շուրջը։

Տանտիկինը բացատրում էր իր տեսութիւնները ճապոնացիների մասին, ասում էր, թէ նրանք խիստ փափկանկատ են և ծիծաղելի դառնալու չափ քաշւող են փողային հարցերում։

Գալիս է օրինակ մի արհեստաւոր կամ բանտոր վարձը ստանալու. փոխանակ ուղղակի իր գալու նպատակը յայտնելու, նա քաշը տում է, հազում։—Ի՞նչ ես ուզում, հարցնում ես զարմացած։ Պատասխան՝ ոչ մի բառ։ Նա միայն ոտից ոտ է անցնում, ու լաւում է նրա թեթև չոր հազը, մինչև որ նրա դէմքին դրոշմած շփոթութիւնից, վերջապէս զլիի ես ընկնում, թէ բանն ինչումն է։

Երբ սեղանից ելանք, գուրսն արդէն կիսով չափ մութն էր։ Փափուկ զերմ գիշերը իջնում էր նազասակիի վրա և շուտով բոլորովին պարուրեց ամբողջ քաղաքը։

Բայց մինչև ուշ գիշեր կեանքը չէր դադարում փողոցներում։ Շարունակ վայլկտում ու արագ անց են կենում վազող ջիների թղթէ լապտերները. հեռուից լսում են օտարազգի հարբած նաւաստիների խոպոտ ձայները և փողոցային մանրավաճառի ականջ ծակող ճրռանի ձայնը։


Մեր հանդիպակաց տան բաց պատուհաններից դէպի մեզ էին գալիս մի երգի յստակ ուժեղ հնչիւնները, որոնց ընկերակցում էր ֆիս-հարմօնիայի ներդաշնակ նւագը։

—Երգողն ո՞վ է. —հարցը տանտիկնոջից։

—Դիտէր, —ասաց նա, —այդ տան մէջ հաւաքում են քաղաքում մնացած անզիփացի նաւաստիները, և անզուհիք գալիս են երգելու հարբեցութիւնից նրանց քիչ հեռու պահելու համար։

Մեր փողոցի դուռը ամբողջ գիշերը բաց էր. բաց էին նաև բոլոր պատուհանները, և ես իմ անկողինը մոծակներից պաշտպանող ցանցի տակից երկար ժամանակ լսում էի փողոցից անցնող ճապոնացիների փայտէ կօշիկների թխթխկոցը։

Ուրիշի սեփականութիւնը սուրբ է համարում ճապոնացու աշքում, և կարող ես հանգիստ քնել պատուհաններդ բաց։



## ՄԻ ՊՏՈՅՅ ՔՍՂԱԳՈՒՄ

Առաւոտը շատ վաղ ջինը իկիշաները արդէն խըմբ-  
մել էին լուսամուտների տակ, ուշադիր մեր գուրս  
գալուն, և հէնց որ երևացինք դռների մէջ, նրանք  
ուրախ վաղ տիին դէպի մեզ, իրար առաջը կտրելով։

Ըստանց վարանումի չէր, որ մենք տեղի տւինք-  
նրանց խնդրանքին ու հեծանք թեթև կառքերը։

Ջինը իկիշաները իսկոյն հանգստացան. սրբւեց-  
նրանց դէմքից պաղատանքի արտայայտութիւնը, և  
մեզ մի թեթև ու խնամածու ժպիտ ձօնելով՝ աշխոյժ-  
լծւեցին ու առաջ վաղեցին։

Ազ ու ձախ երևում ու աչքից կորչում էին շի-  
նացի դերձակների ու կօշկակարների աշխատանոց-  
ները իրենց ցուցանակներով և այլ այդ կարգի ուրիշ  
խանութներ, որոնք ծառայում են եւրոպացիների  
պէտքերին։ Զինացիք շատ վարժ եւրոպական շորեր  
են կարում, ճարպիկ կերպով յարմարւելով մեր ճա-  
շակին ու տարագին, որ նրանց համար այնքան  
խորթ է։

Այդ տեսակէտից առանձին յաջողութիւն ունեն

կնոջ հագուստ կարողները, այնպէս որ եւրոպունիք յօժարութեամբ դրանց են յանձնում իրանց արդուզարդը:

Ուրախ է կեանքը եւրոպական թաղում: Ենթիւ զարեցրատների բաց դռներից դուրս են խուժում հարբած երաժշտների հնչիւնները, որի չափի տակ զւարթ պարում են գլուխները տաքացած օտարազգի նաւաստիները:

Մենք արագ անցանք կամրջով այն բազմաթիւ ցրանցրներից մէկը, որոնք ցանցի պէս կտրտում են քաղաքը, և մտանք արդէն գուտ ճապոնական մասը:

Մի վայրկեան ամեն բան շուրջդ խաղալիքի տըպաւրութիւն է անում, ամեն-ինչ այնքան մանը է ու փոքրադիր: Փողոցը այնպէս նեղ է, որ եթէ պատահմամբ եւրոպական մի կառք ներս մտնէր, կը խցէր ամբողջ փողոցի շարժումը. Էլ ի՞նչ ասել կուզի, որ շուր տալ բացարձակապէս կարող չէր լինի: Ինչքան էլ շատ փոքր լինէին մեր կառքերը, նորից ստիպւած էինք իրար ետկից գնալու, ոտքով գնացողների ճամփան չըփակելու համար: Սակայն փողոցը ոչ մութէր թւում, ոչ էլ մուայլ շնորհիւ շէնքերի ցածութեանը: Տները բոլորն էլ անխտիր երկարկանի են, կըդմինդըէ միօրինակ թեք կտուրներով և բամբուկի բարակ պատերով: Ցածի յարկում գետեղւած է լինում խանութը կամ արհեստանոցը, վերևում ապրում է տէրը: Ընդհանուր տպաւրութիւնը մօտաւորապէս նոյնն է, ինչ որ ասիական բազարը Կովկասում: Այս-

տեղ էլ չկան արտաքին պատեր, այստեղ էլ ապրանքը դարսւած է զուրաը: Ամեն ինչ բաց է, ամեն ինչ մատչելի ցանկացողի աշքին: Հիմնական մեծ տարբերութիւնն այն է, որ այստեղ հետք անգամ չկայ ասիական համբաւաւոր անկարգութեան ու կեղտի:

Հուրջդ ամեն բան փայլում է մաքրութիւնից: Ճիշճերը այնպէս սեղմ ու անընդհատ կցւած են իրար, որ մարդ ակամայ սարսափում է, մտածելով, թէ ինչ է լինելու քաղաքը, եթէ յանկարծ հրդեհ ընկնի: Ի՞նչ ճարակ կայ այստեղ բոցերին: Կարտոնի նման բարակ տները չոր յարդի պէս մի վայրկեանում կայրւեն: Բայց խկապէս հրդեհը այնքան էլ մեծ ու յաճախ չի լինում այստեղ համեմատաբար: Ճապոնացին կրակի հետ չափազանց զգոյշ է:

Նա երբէք գիշերը չի թողնի նաւթի լամպը վառ, այլ միայն իւղի կանթեղը, որ հեշտ է յանդշում:

Բացի այդ, իր թանկագին իրերը նա միշտ պահում է տան կից մի փոքրիկ քարաշէն մասում:

Իսկ հրդեհի ժամանակ նրանք խմբովին օգնութեան են վազում այրուղ տան ներսը. վերջն էլ օդնում են հրկիղեալին, ընդհանուր օժանդակութեամբ նրա համար մի նոր տուն գնելով:

Տները խիստ էժան են և ծախտում են պատրաստ. նրանց թեթևութեան ու կազմի պարզութեան պատճառով հեշտ է և տեղափոխելը:

Փողոցը լի է կեանքով:

Փափուկ գետնի վրայով արագ սլանում են ճարպիկ ջիները, քաշելով իրանց փոքրիկ կառքերի մէջ մի կոկետ ճապոնուհու կամ տուրիստների մի ամբողջ շարք:

Անց է կենում մանրավաճառը, կրելով իր ուսին՝ փայտից կախած զամբիւղները, որոնք լիքն են ամեն տեսակ բանջարեղինով, պտուղով կամ ձկնով:

Փողոցում անասում զրեթէ չես տեսնի: Սակաւ, շատ սակաւ է հանդիպում մի ձի կամ եղ, սմբակները յարդով կապած պայտի փոխարէն: Տիրոջ ցոյց տւած մեծ հողածութիւնից պարզ երևում է, որ նրանք մի առօրեայ երևոյթ չեն ճապոնացու կեանքում:

Ահա մի փոքրիկ աղջիկ անփոյթ կերպով իր լայն գօտու մէջ տանում է փոքրիկ եղրօրը, որը հանգիստ նիրհում է նրա մէջըին. մինչդեռ աղջիկը հետաքրքրութեամբ կանգ է առնում զոյնզգոյն ապակէ գնդակների դէմ, որ ծախու է զրել փողոցում թափառական մանրավաճառը:

Երիտասարդ ճապոնուհիները մանը քայլերով զգոյշ անց են կենում, իրանց բարձր փայտէ կօշիկները շարունակ թխթխկացնելով: Նրանց մուգ սև մազելի գեղեցիկ շինեօնը հիւսւած է կօրալներով. գլխարկ երբէք չկայ. պաշտպանւում են արեից ու անձեւից իրանց տարօրինակ ու գեղեցիկ հովանոցներով: Հագի կիրիմօնը (խալաթ) գրկում է ճապո-

նուհու ճկուն մէջքը, սահում է ցած ու պինդ փաթաթում նրա ոտներին։ Զունեն ոչ օղ, ոչ մատանի, ոչ էլ ընդհանրապէս մեր կանանցից այդշափ սիրւած միւս ոսկեղին զարդերը։

Նրանց զլխաւոր հպարտութիւնն է կազմում գեղեցիկ օբին (գօտի), որ լայն շերտով մի քանի անգամ գալարւած է նրա մէջքին և մի տեսակ կօրսէտի դեր է կատարում։ Այդ գօտին նրա հոգածութեան մասնաւոր առարկան է միշտ և նրա ճաշակի ու շընորհքի սովորական չափը։


Որքան օրիի կտորը զեղեցիկ է, որքան հարուստ է նրա բանւածքը և որքան շնորհալի կապւածքը, այնքան աւելի ընտիր է համարւում ճապոնուհու տուալէտը և այնքան աւելի է իր ընկերուհիների նախանձը շարժում։

Տղամարդու կիմօնօնը (խալաթ) կնոջինից շատքիչ է տարբերում, մանաւանդ անվարժ աշքի համար։ Նա էլ է կապած գօտիով, միայն շատ աւելի նեղ, որը պարզապէս կըեպ-դը-շինի մի նեղ շերտ է ներկայացնում։

Իսկ նրանց մինչև ականջները բաշած եւրոպական զլխարկը, հազի փայտէ ծանը կօշիկների հետ միասին մի հետաքրքիր խառնուրդ է կազմում եւրոպայի ու Ասիայի։ Անբաժան հովհարը կամ մի հովանոց բոնած ձեռքին՝ նրանք հանգիստ դնում են ու դալիս իրանց բարի ու մտածկոտ դէմքերով։

Մի շատ բնորոշ դէմք էր ներկայացնում և ու-

ս ս ո ր ս կ ս գ ս դ



տիկանը, որ ամբողջապէս եւրոպական սպիտակ զգեստ-ների մէջ, երկար սուրբ մէջքին, կանգնել էր այնտեղ իր վսեմ պաշտօնի խորին գիտակցութիւնը երեսին:

Մօտիցս լսում է յանկարծ զանգակի սուր հնչիւնը: Մի բարձրահասակ մարդ կանգ է առել փողոցի ճիշտ մէջտեղը և թատրոնական վեհափառութեամբ, յենած ձեռքի դրօշակին, որի վրա մի քանի ճապոնական տառեր են գրած, մի անբնական ձայնով ինչ-որ ասում է արագ, շարունակ դիմելով աջ ու ձախ շըշապատողներին, որոնք սակայն մի մեծ հետաքրքրութիւն չեն ցոյց տալիս:

Կրկին զանգակ, և ձայնողը շարժւում է առաջ, տանելով հետը իր այդ ճարտասանական բացական-չութիւնների հանելուկը:

Մի այլ տեղ բարձր պոռում է մի ուրիշը, երեկ յանձնաբարելով իր ձեռքի բռնած գիրքը. միւս կողմը մի մարդ անդադար զանգահարում է, անցորդների ուշը իր ապրանքի վրա դարձնելու համար:

Քիչ հեռուն լսում է յանկարծ մելամաղձոտ մի սուլոց. և երեսում է մի կոյրի կերպարանք, յենած իր գաւազանին, որ զգոյշ առաջ է զալիս շուրջի իրարանցումի միջով: Դա մի մասսաժիստ է, որ իր սուլոցով իր անցնելն է յայտնում:

Այդ արևեստը ճապոնում անյիշելի ժամանակներից կոյրերի մենաշնորհն է կազմում:


ուուրք խառիս մայուսուն \* \* սկսութան ու շատիք  
բանին ով ընթանք մզուն պատ դադա և մ հյան  
Տները մասնաւորապէս հետաքրքիր են նրանով,  
որ դրսի պատ չունենալով անցորդին միջոց են տա-  
լիս ճապոնացու նիստն ու կացը կատարելապէս ու-  
սումնասիրելու և բաց են անում բնորոշ տեսարան-  
ների մի ամբողջ շարք:

Ամեն մի տուն կարծես մի շրջանակ լինի, որի  
մէջ պարզ ցուցադրւած են նրանց բնակիչների կեանքն  
ու աշխատանքը:

Ոհա այստեղ բոլորովին ճաղատ մի ճապոնացի  
շրջապատւած թղթէ լապտերների ու հովանոցների մի  
ամբողջ կոյտով՝ մեծ հոգածութեամբ նկարում է: Մի  
անսովոր լրջութիւն կայ նրա դէմքին: Այն բարեսիրտ  
ու միամիտ կենտրոնացումը, որով կատարում է նա  
իր աշխատանքը, քեզ ակամայ երեխայ է յիշեցնում:  
Կից խանութում մետաքս են ծախում. պատե-  
րին կախւած են կտորներ ըմահաճ նկարներով: Գոր-  
ծավար ճապոնուհիները մէկը միւսի ետևից բաց են  
անում յաճախորդի առաջ մետաքսի նեղ փաթեթնե-  
րը, մինչ տէրը, չոր նստած իր մանրիկ սեղանի առ-  
ջև, բոլորովին խորասուզւել է հաշիմների մէջ:

Մի բիչ դէնը մոմ են պատրաստում. խանութի  
մեծ մասը բոնում է կանաչ հեղուկով լիքը տաշու,  
որի մէջ թաթախում են անդադար փոքր կլոր փայ-  
տեր. չորացնում են, թաթախում նորից. և այսպէս  
մի քանի անդամ, մինչև մոմը պատրաստ լինի:

Լ Ա Պ Տ Ե Ր Հ Ա Ռ Ո Ւ Ղ



Կողքին մի աշխատանցում պատանիները իրանց ձեռագործի վրա ծռած ասեղնագործում են ոսկեթել բմահաճ նկարներ:

Ոսկերիչի խանութում շինում են զեղեցիկ գոտիներ, փոքրիկ բոոշներ, որոնք սուր են ներկայացնում, և այլ մանր զարդեր. սրանց գլխաւոր գնողները տուրիստներն են: Բայց այնտեղ բնաւ չէք տեսնի թանկագին քարեր, որին ճապոնացին արժէք չի տալիս: Նրան գրաւողը շինւածքի զեղարւեստական կողմն է:

Յաճախ աչքիդ հանդիպում են սափրիչի խանութներ, ուր յաճախորդները բոլոր ուժով գլուխները յետ ճկած նստած են մի յուսահատ դիրքով, քթները յանձնած սափրիչի բարեհաճ տրամադրութեանը. կամ մի ճապոնուհի, որ զբաղւած է իր տուալետն աւարտելով:

Ապա նորից զալիս են խանութները:

Հովհարներ, ափսէներ, զամբիւղներ, բոլորն էլ, կախւած առաստաղից, ծածանւում են անցորդի քթի տակ: Նրանց ետևից նկատում է մի ամբողջ շարք յարդէ ոտնամաների իրանց թաւշէ զեղեցիկ օղակներովը. կամ մի չաստած, որ իր ահագին փորովը բազմած է սեղանի գլխին:

Ճատ են ժամագործները: Ժամացոյցը արևելքում խիստ է յարգւած: Զինացիք նկարւելու ժամանակ ժամացոյցը դնում են իրանց մօտը սեղանի վրա, երբեմն նոյն իսկ երկուսը, իրանց աւելի փառհեղութիւն տալու համար:

Լուսանկարիչների ցուցանակներն էլ բաւական յաճախ են աչքի ընկնում, մանաւանդ եւրոպական թաղի մօտերը։ Լուսանկարը շատ էժան է. 12 հատ գեղեցիկ զունաւոր տեսարանը արժէ 2 իշն (մօտ 2 ռուբլի)։ 12 փոքր նկար վիզիտ դիբրով այն էլ ամենալաւ լուսանկարչի մօտ արժէ նոյնպէս 2 ռ., իսկ աշխատանքը չափազանց մաքուր է ու սիրուն։

Ուտեստի շուկան նոյնպէս մօտիկ է եւրոպական մասին։ Խանութները շարւած են իրանց տեսակի համեմատ. մի շարք միայն միս են ծախում, վերջը բանջարեղին, պտուղ, ձուկ և այլն։


Միաը դրած է ապակի զանգակների տակ, որ սաստիկ մաքուր են պահում։

Զկան խանութը ներկայացնում է վրան ծածկած մի բակ, ուր խառն թափած են ձկան կոյտերը քարէ յատակին։ Եւ ինչ երկակինցաղ ասես, որ այդտեղ չը լինի. ահազին քանակութեամբ ժժմակներ, ճիճուներ, խեչափառներ և այլն, որին եւրոպացին նայել անգամ չէ կարող։

Առհասարակ ձուկը ճապոնացու գլխաւոր ու նախընտիր կերակուրն է, և բընձից յետոյ առաջին տեղն է բընում։

Չուկը ուտում են մեծ մասով հում։ Մեխով տալիս են գլխին, նրա տանջանքին վերջ տալու համար, հանում են փորոտին, կտրատում են, դնում պնակի մէջ և հրամցընում։

Մ Ե Տ Ս Ա Ր Ո Ւ Ի Բ Ա Ռ Ո Ւ Ի Պ



Այսպէս պատրաստած ձուկը նրանց սիրելի կերակուրն է իբրև դեսսերտ:

Միս ուտում են չափազանց քիչ, գերադասում են պտուղն ու բանջարը: Պտուղներից սովորական են բանան, անանաս, կոկոս և երեխի գլխի մեծութեամբ ահագին նարինջներ (պապելմուս), այլ և եամամօ, որը մի մեծ ելակի է նման ու մի տեսակ ձիւթի հոտ ունի:

Ճատ կան նոյնպէս քաղցրավաճառներ. ճապոնացին սիրում է անուշեղին. խմորեղինը լինում է թէ հում, թէ եփած: Նրանց կարկանդակների ու շաքարեղինների տեսրը այնքան էլ գրաւիչ չէ մեզ համար: Միայն խիստ համեղ է «կաստերա» ասւած տորտը. այն էլ սպանական ծագում ունի:

Բոլոր տուրիստները, մանաւանդ ուսմները, իրանց պարոք են համարում այցելել նազասակիի հոչակը կազմող վարպետ Իեզակիի արհեստանոցը, ուր կրեայի պատեանից գեղեցիկ իրեր են պատրաստում:

Իեզակին, որին ամենքը «Փեներալ Կրեայ» են անւանում սովորաբար, հաստիկ, կարճիկ մի մարդ է, բարի դէմքով: Մեզ ընդունեց մեծ սիրով, սեղմեց ձեռքերնիս եւրոպավարի, բարեկց մեզ մի թո-

թով ռուսերէնով. և իսկոյն հրամայեց թէյ բերեն:

Ճապոնական թէյը հրամցնում են փոքրիկ գաւաթիկներով և առանց շաքարի. բայց համեղ կաստերան լիուլի փոխարինում է շաքարի պակասը:

Թէյից յետոյ իեզակին մեզ առաջնորդեց վերի յարկը, ուր իրերն էին ցուցադրւած: Փղոսկը քանդակումը հիանալի է ուղղակի իր նըրութեամբն ու զեղեցկութեամբը: Ամենից աւելի աշքի ընկնող տեղում զետեղւած էին կրեայի պատեանից շինած ճապոնական ու եւրոպական մի քանի ռազմանաւեր:

Կայմերը իրանց կայաններով, պարանները, եւլարանները, մինչեւ անգամ սանդուխի իւրաքանչիւր աստիճանը դուրս էր բերւած զարմանալի ճշտութեամբ ու մաքուր:

Իեզակիի այդ մանրանկար գեղարւեստական փոքրիկ աշխարհից մենք ընկանք ուղղակի ժողովրդական ու եռուն առևտորի տաճարը, ճապոն-բազարը, որ մեր կարաւանսարային համապատասխանող մի բան է:

Դա մի մեծ կլոր շէնք է, ուր խանութների շարքը ձգւում է ճառագայթի ձեռվ դէպի կենտրոնը, ապա կենտրոնից դէպի շրջագիծը, կազմելով մի նեղ անընդհատ անցք, որից չես կարող դուրս դալ, մինչեւ որ այդ ամբողջ լաբիրինտը անց չը կենաս իր բոլոր անկիւններովն ու թեքումներովը, եթէ միայն, յուսահատած, կէս ճամփիցդ յետ չը դառնաս:

Ապրանքի տեսակները շատ չեն և շարունակ կրկնուամ են: Մասնաւորապէս շատ կան զանազան

գոյնի թաւշեայ քսակներ, զարդ հերկալներ, և անթիւ անհամար թղթէ հովհարներ ամեն տեսակ ֆանտաստիկ նկարներով ծածկւած:

Պատերից կախւած են ճապոնական տիկնիկներ, աշբերը չուած և մոնզոլական տիպիկ դէմքերով: Մեծ տեղ է բոնում զըքերի խանութը:

Նրանց զըքերն էլ են իրանց տեսակի: Թուղթը աւելի հաստ է և խորտուբորդ, տպել կարելի է միայն մի երեսի վրա, այնպէս որ մեր մի թերթին համապատասխանում է նրանց կրկնառակ ծալած երկու երեսը: Կազմն էլ տարօրինտկ է. թղթերը կարում են մետաքսէ թելով, որ դրսից մի զեղեցիկ հանգոյց է կազմում:

Ծախողները կին են մեծ մասամբ: Օտար անցորդներին նրանք կանչում են անզլիերէն կամ ոռւսերէն, բաւական յաջող գուշակելով նրանց ինչ ապագից լինելը:

Նազասակիում օտար լեզուներից ամենից աւելի տարածւածը ռուսերէնն է. դրան նպաստում է Կամաւոր ֆլոտի յաճախակի երթեւեկը և ոռւս ու պազմանաւերի այցը:

Բացի դրանից մի ամբողջ ռուսական գաղութ էլ կայ ինօսա, որ գտնւում է ծոցի միւս կողմը:

\* \*

Նազասակիի փողոցներով իմ անցնելը ոչ որի ու-


շաղրութիւնը չէր գրաւում։ Եւրոպացիներին լնտելացած են արդէն։

Միայն երբ երկար կանգ էի առնում՝ մի՛ որևէ խանութի առաջ, դիտում էին ինձ ոտից գլուխ՝ զարմանալով երեխ, թէ ի՞նչն էր ինձ այդպէս հետաքըլքը ըլողը։

Մի ճապոնուհի նկատելով, որ հայեացքս մի մասնաւոր հետաքըլքը եմ շեշտում խանութի խորքը, խնդրեց, որ ներս մտնեմ նրա բնակարանը, եթէ կը հաճիմ։

Եւ ինչ ասել կ'ուզի, որ մեծ ուրախութեամբ ընդունեցի նրա առաջարկը, և նրա հետ մի նեղ ու փոքր անցքով մտանք ետևի մասը։ Դա արդէն բնակարանն էր, մի մեծ սենեակ, որ հեշտութեամբ կարելի է մի քանիսի վերածել շարժական թեթև պատերի միջոցով։ Յատակը այդտեղ քիչ բարձր է նախասենեակից։ Յետևելով տեղական քաղաքավարութեանը, հանեցի կօշիկներս սանդուվսի գլխին և գուլպաներով կոխեցի սենեակի մաքուր խսիրը։

Շուրջը ամեն-ինչ մաքրութիւնից փայլում էր։ Թղթէ պատերին նկարւած էին արագիլներ։ Անկիւնում զետեղւած էր սիրուն երկթև ճենապատը և մի փոքրիկ թաղար՝ մէջը մանրադիտական մի ծառով։ Սենեակի խորքում պատի մէջ ծալքն էր, ուր ցերեկները անկողիներն են դարսում։ Ճապոնացին, ինչպէս յայտնի է, կահ-կարասի չի սիրում, ասելով թէ զըրանը փոշի հաւաքելուց զատ ուրիշ բանի պէտք չեն։



Անկողինը փոռում են գետնին խսիրի վրա. ճաշում են  
չոք նստած և ամեն մէկի առաջ մի մի ցածլիկ փոքրիկ  
սեղան, կամ յաճախ ուղղակի գետնին:

Սենեակից զուրս գալով, մտանք ցանկով շրջա-  
պատած փոքրիկ բագիկը, իր մանրիկ պարտէզիկով,  
ուր բանդարկւած էր պտուղներով ծանրաբեռնած  
մանդարենի մի ծառ, կարծես վանդակի մէջ:

Այդ պատէզիկի կենդրոնում ցոլցլում էր մի  
աւելի փոքրիկ լճակիկ, մէջն էլ մանրադիտական մի  
ժայռիկ, որի վրա հպարտ վեր էր բարձրանում մի  
մանր-մանր գաճաճ ծառիկ:

Ճապոնացին շատ է սիրում բնութիւնը. գիւղե-  
րում նա աշխատում է շինել իր բնակարանը կարկաչուն  
առւակի ափին, կամ սարի սիրուն լանջին, որտեղից  
լայն գեղեցիկ տեսարան է բացւում: Իսկ քաղաքում  
հեռու այդ բոլորից նա ուզում է բնութեան գոնէ  
մի նմուշը, մի փոքրիկ կտոր իր մօտը ունենայ:

Ճապոնացու տանը, թէ ներսը, թէ բագում, ա-  
մեն բանի վրա մի մասնաւոր դրոշմ կայ գոհանակու-  
թեան, շափաւորութեան և գեղարւեստական պար-  
զութեան:

կարող է անել մի ճապոնուհու, հետևեալ հարցն է.  
«Քանի տարեկան էք»:

Ճապուստները հազնել ու շտկել հակասեռ հիւ-  
բերի առաջ համարւում է բոլորովին ոուու իլֆաւ.  
մինչդեռ կօշիկով սենեակ մտնելը բացարձակ անկըր-  
թութեան ամենամեծ նշանն է:

Նրանց համար ամենեին անպատշաճ չի համարւում,  
եթէ հիւբերից մէկը ճամանակ վերցնէ ուտե-  
լիքից մի կտոր ու դնէ իր ահագին զրպանը, որ  
գտնւում է լայն թեփ ցածի մասում: Հեշտ է երեա-  
կայել, թէ այս սովորութիւնը որքան ծնծաղելի գէպ-  
քերի առիթ է տալիս, մանաւանդ եթէ իրար դէմ են  
զալիս ճապոնացին և անզլիացին, որ ինչպէս յայտնի  
է՝ մի մազ անզամ չի շեղու երբէք իր սովորութիւն-  
ներից և որ ընդունել անզամ կարող չէ, թէ աշխար-  
հի երեսին ուրիշ կերպ էլ կարելի է ապօել:

Ճապոնացու հայեացքով ուտելիքից վերցնելն ու  
միասին տանելը մի մասնաւոր պատիւ է համարւում  
տանտիկնոց համար, քանի որ դա մի շատ պարզ ու  
շօշափելի ապացոյց է, թէ հիւրը գոհ է մնացել նրա  
սեղանից:

Դա հերիք չէ. տուն տանելու համար տանտիկի-  
նը ճաշից յետոյ զեռ տալիս է հիւրերին բարակ տա-  
շեղներից շինած մի-մի փոքրիկ արկղիկ, իիրը եփած  
բըինձով:

Ճաշի ժամանակ կերակուրները բերելու կարգն  
անզամ բոլորովին հակառակ է մերինին:

## ՃԱՊՈՆԱԿԱՆ ԲԱՐՁԵՐԻՑ

Ճապոնացու բարքերը ուսումնասիրելիս, մարդ  
ամենից առաջ ձեռք պէտք է վերցնի եւրոպական  
չափից և մօտենայ նրանց առանց կանխակալ կար-  
ծիքների:

Ճապոնական քաղաքակրթութիւնը զարգացել է  
բոլորովին առանձնակի և դրա համար նրանց կեան-  
քի ու հայեացքների մէջ շատ բան մեզ բոլորովին  
խորթ է թւում և նոյն իսկ յաճախ վիրաւորում է մեր  
բարոյականի կամ պատշաճի զգացումը:

Բայց նոյն բանը զգում է և ճապոնացին մեր վե-  
րաբերմամբ, հէնց որ մօտիկ է շփւում եւրոպացու  
կեանքին: Նա էլ զարմանքով բացականչում է, որ  
բոլոր եւրոպացիք թարս են, անում են և ասում  
ճիշտ հակառակը, ինչ որ ճապոնում պատշաճ ու  
բնական է համարւում:

Մեր ու ճապոնացու մէջ եղած տարբերութիւնը  
մանաւանդ շատ խիստ աշքի է ընկնում այսպէս աս-  
ւած՝ քաղաքավարական ձեռքի մէջ:

Ամենամեծ հաճոյախօսութիւնը որ տղամարդը

Քաղցըեղէնը բերում են ձկան, բանջարեղէնի և  
ապուրի հետ խառն։ Ամենից վերջը հրամցնում են  
հում ձուկ, նորից տուն տանելու համար։ Ինչպէս  
տեսնում էք ձապոնում հիւր գնալը բաւական ձեռն-  
տու բան է։

Ճապոնացիք չեն գործածում ոչ միս, ոչ կաթ և  
ոչ հաց։ Բայց եւրոպացու համար ծախում են։ Նրանց  
զլիսաւոր ուտելիքը բրինձն է, ձուկը, բանջարեղէնը և  
ձուն։ Ի դէպ՝ ձուն էլ շատ տարօրինակ է. կճեպը  
այնքան փափուկ է, որ սեղմելիս ներս է ընկնում։  
Ճապոնում կիրը քիչ է. այդ պատճառով էլ ձուի կը-  
ճեպը չի պնդանում։

Ճապոնացիք լողանալ շատ են սիրում։ Բաղա-  
նիսները ընդհանուր են. տղամարդիկ և կանայք լո-  
ղանում են միասին։ Ճատ եւրոպացու համար դա մի  
նշան է համարում բարքերի ծայրայեղ անկման,  
մինչդեռ իրանք՝ ճապոնացիք, այդտեղ վատ ոշինչ  
չեն տեսնում, դրա մասին չեն էլ մտածում և ընդ-  
հանրապէս լողանալու արարողութեան վերաբեր-  
ում են շատ լուրջ, իրեկ մի սըբազան ծէսի։ Մերկ  
մարմի տեսքին նրանք արդէն վարժւած են, և մեղքը  
եւրոպացուն է, եթէ նա չէ կարող ուղիղ աչքով մեր-  
կութեանը նայել։

Ամեն տուն ունի լողանալու յատկացը իր տա-  
կառը, ուր ամեն օր մկրտում է ամբողջ ընտանիքը.  
միակ անյարմարութիւնն այն է, որ բոլո՞ն էլ, մեծ

ու վորը, տէր ու հիւր, միւնոյն ջրի մէջ են մըտ-  
նում իրար ետեից։

\* \*

Ճապոնացիք իրար վերաբերմամբ չափազանց քա-  
ղաքավարի են ու սիրալիր։ Կասկած չկայ, որ աշ-  
խարհիս ամենաքաղաքավարի ժողովուրդն է դա, և  
այդ զգացումը նրանք մօր կաթի հետ են ծծում։

Դեռ շատ մատադ հասակից երեխային ներշնչում  
են, թէ ինչպէս պէտք է իրան պահէ դէպի ծնողները,  
մեծերը, և ընդհանրապէս իր շրջապատողները։

Այդ քաղաքավարութիւնը տիրում է հասարակու-  
թեան բոլոր խաւերի մէջ անխտիր։ Ամենահասարակ  
կօշկակարը, նոյն իսկ մուրացիկ կինը իր խօսքով ու  
ձևերով իրան ճիշտ այնպէս է պահում, ինչպէս մեր  
մի աղնւական տիկին իր հանդիսաւոր երեկոյթի ժա-  
մանակ։

Մասնաւորապէս քաղաքավարի են դէպի մեծե-  
րը։ Ծերութիւնն ու հնութիւնը շատ է յարգւած ճա-  
պոնում։ Բայց այդ յարգանքի զգացման մէջ ամենեին  
անձի ստորացում չկայ. դա գալիս է սրտից ու բըղ-  
խում է ուրիշներին վիշտ չը պատճառելու անկեղծ  
ցանկութիւնից։

Ճապոնացի ու կոպտութիւն—իրար չը բռնող բա-  
ռեր են։

Թէև քիշքիչ եւրոպական ազդեցութեան տակ ճապոնացու ընաւորութիւնն էլ սկսել է արդէն փոփոխութեան ենթարկել, դժբախտաբար՝ ոչ դէպի լաւը։ Դա մանաւանդ նկատելի է նաւահանգիստ քաղաքներում, ինչպէս են Նազասակի, Հօրէ, Խօկօհամա։

Եւրոպացիների հետ մշտական շփումը ճապոնացուն դարձնում է քծնող ու խոնարհամիտ, կամ նա անգիտացուն հետեւլով՝ մի անթափանցելի սառնութիւն ու անտարբերութիւն է առնում իր վրա։ Անտանելի է այդ տեսակներին հանդիպելը։ Գործից դուրս դրանցից ոչ մի աւելորդ բառ չես լսիլ և ամեն բառ չափած ու ձեած է. մարդ ուղղակի սառչում, մնում է։

Բայց բոլորովին հակառակն է ներքին նահանգներում, ուր եւրոպացիք քիչ մուտք ունեն. այդտեղ ճապոնացին պահել է անխախտ իր նախկին սիրալիրութիւնը և մի տեսակ զուտ մանկական բացսըրտութիւն, որ անմիջապէս քաշում է մարդուն։

Նրա հետ խօսելիս պէտք է հետեւս նրա քաղաքավարութեանը և շխրտնեցնես նրա զգացումը, ինչ որ եւրոպացիք յաճախ մոռանում են, և այն ժամանակ նա շատ պարզ է քեզ հետ ու սիրով խօսակցում։

Նա սիրում է խօսել ամեն բանի մասին, ինչ կատարում է աշխարհիս երեսին, մանաւանդ քաղաքականութեան, որով նա շատ է հետաքրքրուում։

Ճապոնական քաղաքավարութիւնը այն աստի-

ճանի է հասնում, որ մինչդեռ մեզանում վիրաւորանքը սրբելու համար թափում են հակառակորդի արիւնը կամ գոնէ մի ապտակ են տալիս, —ճապոնացին իրան է սպանում։ Նա հրաւիրում է իր բոլոր ազգականներին ու բարեկամներին, պատմում է իրան հասցրած վիրաւորանքը, որից յետոյ էլ ապրել կարող չէ, և բոլորի ներկայութեամբ դանակով ճեղքում է փորք, մի արարողութիւն, որ կոչւում է «խարակիրի»։ Ասենք՝ այդ սովորութիւնը արդէն աւելի մօտաւոր անցեալի պատմութեանն է պատկանում, քան թէ ներկային, որովհետեւ այժմ արգելած է կայսերական հրամանով։

\* \* \*

Ընտանեկան կեանքը ճապոնում հոսում է իր պարզ ու որոշ հոսանքովը։ Ընտանիքի անդամների փոխազարձ յարաբերութիւնը մեղմ է ու ընկերական, թէև շատ պարզ զգալի է հօր վերին իշխանութիւնը։ Նա է, որ հսկում է բոլորի վարքին ու հետեւում խրստիւ, որ բոլորն էլ իրաը հետ լինեն բարի, սիրալիր ու հոգածու։

Եթէ մէկը անկիրթ է կամ վատ քաղաքացի, հանրային կարծիքը նրա հօրն է դատապարտում։

Հայրը կատարեալ իրաւունք ունի որդուն տնից դուրս վոնդելու ու զրկելու նրան բոլոր իրաւունքնե-

ըից, եթէ տեսնում է, որ իր խըատները իզուր են անցնում։ Նրա տեղը նա մի որդեգիր է վերցնում։ Որդեգիրը ընդհանըապէս մի շատ սովորական երևոյթ է ձապոնում։

Որդին էլ վարւում է նոյն կերպով. երբ հայրը նրա հետ չափազանց անհոգ է վարւում, նա հաժարւում է իր հօրիցը ու հայրագրում մի ուրիշ։

Որդուն պսակելով հայրը տալիս է նրան տան կառավարութիւնը և կարծես ինքը մտնում է նրա հովանաւորութեան տակ, ի հարկէ՝ վերապահելով խորհրդատուի դեմքը։ Բայց դրանով նա ոչինչ չի կորցնում, քանի որ, ինչպէս յիշեցի, ծերութիւնը խիստ մեծ յարգ ունի ձապոնում։

Տիրոջ ու իր ծառայողների յարաբերութիւնը խիստ պարզ է ու մտերիմ։ Տան աշխատաւորը ընտանիքի անդամ է համարւում և զրա բոլոր գործերի մէջ չերմ մասնակցութիւն ունի։

Պէտք է տեսնել ճապոնական ընտանիքը աշխատանիքի ժամանակ։ Բոլորն էլ բանում են զոհ ու զւարթ։

Աշխատանիք ամենիք համար զրաւիչ է երևում։ Նրանցից մէկը սովորաբար միշտ կատակելու վրա է, պատմում է, խօսում ու բոլորին ծիծաղացնում։

Բայց որչափ առաջ է գնում նոր քաղաքակրթութիւնը և որչափ որ գործարանները դուրս են մղում տնային արդիւնագործութիւնը, այնչափ էլ հին, նա-

հավետական կարգերը աստիճանաբար տեղի են տալիս նորերին։

Այն մասերում, ուր տիրում է արդէն գործարանը, բանւորական հարցը ստացել է արդէն շատ սուր կերպարանք, մանաւանդ որ հին կարգերից նորերին անցնելը կատարւել է ու կատարւում է շատ արագ և ժամանակ չի տալիս նոր վիճակի համար անհրաժեշտ եղող պայմաններ մշակելու։

\*\*\*

Եւրոպական ճամփորդները մեծ գովեստով են խօսում ճապոնուհու մասին։

Առէք գթութեան քրոջ դէմքը, երբ նա անձնիրաբար իր պարտքը կատարում է. առէք գերատի աղջկայ ժպիտը, երբ սպասում է իր նշանածին. առէք մանկան սիրտը, որը երբէք չի տեսել մօր զըրկանքը. խտացըրէք այս բոլորը մի փոքրիկ շնորհալի մարմնի մէջ, պսակեցէք սկ փարթամ մազերով՝ և լլը ստանաք ճապոնուհի։

Այսպիսի հիացումով է նկարագրում մի անգլիաց՝ Henry Normen։

Պլասիկ մտքով վերցրած՝ ճապոնուհուն չի կարելի գեղեցիկ անւանել, բայց նա սաստիկ գրաւիչ է, մանաւանդ իր փափուկ ժպիտով, որ երբէք չի հեռանում նրա դէմքից։ Զւարթ ու կենսուրախ, եռուն ու

հըապուրիչ մի արարած է դա, խիստ կանացի ու շնորհալի շարժումներով։ Խզուր չէ, որ նրան «արևելքի ֆրանսուհի» են անւանել։

Չատ շուտ են ամուսնանում ու դժբախտաբար շատ շուտով էլ խամրում։

Պատանեկան հասակից հասուն տարիքի անցնելը կատարում է խիստ արագ։ Միջին շըրջան գրեթէ չկայ։ Բոլոր քեզ հանդիպողները կամ թարմ ու դերատի նորապակներ են, կամ թառամած ու կնճռոտ պառաւներ։

Իբրև ամուսին, ճապոնուհին յայտնի է իր հաւատարմութեամբ։ Այդ հաւատարմութիւնը ցոյց տըւող մի հին սովորութիւն է «սև ատամները». մի խիստ տգեղ բան, որ բարեբախտաբար հետդիետէ վերանում է։

Ներկած ատամներով երիտասարդ կնոջ գրեթէ չեմ հանդիպած. դըանք բոլորն էլ մեծ մասով պառաւներ են, որոնք արդէն շատ քիչ հաւանականութիւն ունեն ուրիշին դուր գալու։

Դա վերջին խորամանկ միջոցն է՝ այս տեսակ զրհաբերութեամբ իրանց ամուսնու սիրտը նորից կապւած պահելու։ Մանաւանդ որ ապահարզան ստանալն էլ ձապոնում շատ է հեշտ։

Եթէ բնաւորութիւնները իրար չեն բռնում, եթէ յագենում են միմեանցից, — կատարում են մի քանի պարզ անհրաժեշտ ձևականութիւններ և բաժանում են խաղաղ, առանց աւելորդ կոփների ու աղմուկի։

Ամեն մէկը նորից սարքում է իր կեանքը իր ուղածի պէս։ Յաճախ է պատահում, որ նախկին մի գոյգ, փողոցում հանդիպելով, հանգիստ խօսրի են բռնում և հարց ու փորձ են անում միմեանց իրանց նոր ընտանեկան կեանքից։

— Հը, մարդդ ինչպէս է։

— Ոչինչ։ Իսկ քո՞ կինդ։

— Հիանալի։

Ու գնում են նորից, ամեն մէկն էլ իր բանին։

Ճապոնում ամուսնութիւնը բնաւ կրօնական բընաւորութիւն չունի։ Դա քաղաքացիական մի պարզ պայմանագիր է, որ կնքում ու խզում են երկու կողմերի փոխադարձ համաձայնութեամբ։

Նրանց ամուսնութիւնը անհատական էլ չէ. անձնական հակումն ու սիրահարութիւնը շատ քիչ դեր են խաղում։ Հարմն ու վեսան յաճախ բոլորովին չեն էլ ճանաչում իրար։ Ամուսնութիւնը ճապոնում մի ընտանեկան պարտաւորութիւն է։ Ընտանիքը ինքն է հոգում իր անդամների ամուսնութեան մասին, ցեղի յարատեսութիւնը ապահովելու համար։

Ճապոնում այդ հարցը մի առանձին նշանակութիւն է ստանում շնորհիւ նախնիքների պաշտամունքի, որ նրանց հաւատի հիմքն է կազմում։

Այդ պատճառով այնտեղ շամուսնացած կին ու տղամարդ չկայ։ Բոլորը պէտք է ամուսնանան, եթէ չեն ուղում վրդովել իրանց նախնիքների հոգիները էն, միւս աշխարհում։

Ամուսնութեան ժամանակ մեծ դեր է խաղում միջնորդը, որ ճապոնում մեծ յարդ ու պատիւ է վայելում, իբրև նոր տան օճախը վառող: Ծնողները նըրան են յանձնում ամբողջ դործը:

Նա է, որ ծանօթացնում է երիտասարդներին ու համաձայնութիւն կայացնում երկու տների մէջ:

Հարսանիքի ծէսը շատ է պարզ: Հարսացուն ամբողջապէս սպիտակը հազած, որ խոր սպի նշան է, թողնում է իր հօրանց տոմը և ուղևորւում է պատգարակի մէջ դէպի իր նոր ընտանիքը միջնորդի ու նրա կնոջ առաջնորդութեամբ:


Եւ այդ աղջիկը իր ընտանիքի համար այլևս մեռած է համարւում: Հօրանց տանը նրա զնալուց անմիջապէս յետոյ աւելում են սենեակները: Իսկ տան մուտքի մօտ վառում են սուզի ճրագը, ճիշտ այնպէս, ինչպէս մեռելը դուրս տանելուց յետոյ:

Մինչդեռ փեսայի տանը ուրախութիւն է:

Հարսն ու փեսան խմում են «աակէ», բընձի արադ, երեք փոքրիկ գաւաթիկներից, երեք-երեք կում: Նրանից յետոյ հարսնացուն փոխում է իր սուզի հագուստը, հագնում է տօնի զգեստներ, և ամեն-ինչ վերջանում է ընդհանուր խնջոյքով:

\* \*

Սշխատանքի մէջ ճապոնացի կինը իր մարդու առաջին օգնականն է: Նա մասնակից է դաշտային աշ-



խատանքին, օգնում է առևտրական գործերի մէջ և  
ընդհանրապէս կատարում է նրա հետ ամեն տեսակ  
աշխատանք:

Ճապոնուհու սիրած գործերից են երգը, նւազը,  
նկարչական և գրական աշխատանքը, որոնց մէջ նա  
շատ յայտնի է. մանաւանդ գրականութեան մէջ:  
Առանձին հոչակ է վայելում բանաստեղծուհի Օնօնա  
Կօմաչ: Եւ ընդհակառակը՝ շատ բան, որ մեր հաս-  
կացողութեամբ բացառապէս կնոջ գործ է համար-  
ում, նա չէ կատարում. այսպէս օրինակ, լացքը,  
կարը տղամարդկանց ձեռքն է:

Թէև այսպիսով կնոջ դրութիւնը ճապոնում ան-  
համեմատ աւելի լաւ է քան միւս բոլոր ասիական  
երկրներում, բայց և այնպէս նա դեռ միշտ տղա-  
մարդուց ստոր է զասւած:

Կնոջ վերաբերմամբ եւրոպական մտքով քաղա-  
քավարութիւնը բոլորովին խորթ է ճապոնացուն:

Այսպէս օրինակ՝ մի տեղ գնալիս տղամարդը  
միշտ առաջն է ընկնում, առանց ուշ զարձնելու իր  
ետևից եկող կնոջը: Կինը մարդու հետ չի նստում ճա-  
շի, այլ վերջը առանձին, ամուսնու հոգսը քաշելուց  
յետոյ:

Այստեղ պարզ նկատւում է չինական քաղաքա-  
կը թութեան ազդեցութիւնը: «Ովնա-Դայ-Գաքօ» գրքի  
մէջ, ուր յիշւած են կնոջ բոլոր բարոյական պարտա-  
ւորութիւնները, ասւած է, որ նա լինի հնագանդ ու  
հպատակ՝ աղջիկ ժամանակ հօրը, ամուսնանալուց

յետոյ՝ մարդուն և երբ այրի է՝ որդուն։  
Կնոջ դաստիարակութեան մէջ զլխաւոր տեղը  
տրւած են բնաւորութեան կրթութեանը։ Կինը պէտք  
է լինի միշտ ուրախ, հաճելի, հանգիստ և հանդարտ  
տրամադրութեան մէջ, պէտք է լաւ իմանայ իր  
պարտքն ու բարոյական պարտաւորութիւնները դէպի  
իր շրջապատողները, ինչպէս և արօրեայ կեանքի ան-  
հրաժեշտ ձևականութիւնները։

Իբրև մայր ճապոնուհին շատ է քնքոյշ. և մեծ-  
հոչակ է ստացել նաև իբրև դայեակ։

Նա լաւ է հասկանում երեխայի սիրտը և նրա  
ներքին աշխարհը, զիտէ նրա հետ վարւել հանգիստ-  
ձապոնում երեխայի լաց չես լսիլ։ Եւ ընդհանրապէս  
նրան հիանալի է պահում։

Մենեակը ազատ է ու բաց. կահ-կարասիք չկայ,  
երեխան կարող է ցատկել ու վազգվել, որչափ կա-  
մենայ, նրա աշքի տակ չեն դնում մեզպէս հազարաւոր  
փայլվլուն իրեր ու առարկաներ, խստիւ արգելելով  
զրանց ձեռք տալ։ Եւ վերջապէս՝ նրան չեն խեղում  
ձանձրալի համբոյըններով, որոնք մեզանում մեր փոք-  
րիկների շարչարանքն են կազմում։

Երեխանների կեանքը հոսում է այնտեղ հանգիստ  
ու գւարթ, մօր ու քոյրերի քնքոյշ խնամքի տակ։

Իզուր չէ, որ ձապոնը երեխանների դրախտ են  
կոչում։

\* \* \*

Ճապոնում էլ է արդէն սկիզբն առել կանանց  
ազատագրութեան շարժումը։

Արդէն զոյութիւն ունի մի կանանց միութիւն,  
որ եռանդուն պայքար է մղում։ Նրանք արդէն մի  
քանի անգամ ներկայացրել են կառավարութեանը  
իրանց պահանջները հազարաւոր ստորագրութիւննե-  
րով. ձգտում են, որ կանանց համար էլ մատչելի լի-  
նեն հետզհետէ այն բոլոր պաշտօնները, որ մինչև  
այժմ միայն տղամարդկանց են վերապահած, և ար-  
դէն մասամբ էլ ձեռք են բերել։

Այսպէս նրանք ընդունւած են պօստ — հե-  
ռազրական ծառայութեան մէջ, ինչպէս և երկա-  
թուղու։ Երեի շուտով կը տեսնենք ասպարէզի վրա  
և կին փաստաբան։

Օրէնսդրութեան մէջ հետզհետէ մտնում են բա-  
րեփոխութիւններ ի նպաստ կանանց։

Օրէնքը այլևս հարճ չի ճանաչում, որ մի ժա-  
մանակ ընտանիքի մէջ երկրորդ տեղն էր բոնում օրի-  
նաւոր կնոջ կողքին։ Եթէ կինը ամուլ էր, օրէնքը  
թոյլ էր տալիս, որ հարճ պահեն, և նրանից ծնւած  
երեխանները համարւում էին օրինաւոր։ Նոյն իսկ  
թագաժառանգը մի հարճի որդի է։

Բայց միւս կողմից այդ նոր կանայք շատ դժգոհ  
են ապահարզանի օրէնքից։ Եւ իրաւացի են։

Ամուսինների բաժանումը թէև շատ հեշտ է,

բայց բոլոր առաւելութիւնները, ինչպէս և Եւրոպացում, մնում են տղամարդու կողմը: Երեխանները պատկանում են հօրը:

Պրօպագանդիստ կանանցից ոմանք յայտնի են և Եւրոպացում, օրինակ Ռւսմէ Յուցան, որ մասնակցել է միջազգային կանանց կօնդրէսներին և արժանաւոր աջողութեամբ:

\* \*


Ճապոնական կեանքում շատ հետաքրքիր երեսյթ են կազմում այսպէս կոչած Գէյշաները, երգչուհիները, որոնք Աթէնքի հետերանների նման խնջոյքների ու տօնների գարդն են կազմում իրանց սրախօսութեամբ ու նուրբ ձեռովի:

Գէյշաները իրանց կրթութիւնը ստանում են թէյատրներում, ուր սովորում են պար, երգ, նւագ, գըականութիւն, այսպէս ասած՝ անցնում են մի գեղարքուստական դպրոց:

Նըանք մասնաւոր սէր են ցոյց տալիս գըականութեան մէջ և զբում են երբեմն բաւական աջող:

Ես առիթ ունեցայ նըանց այցելելու մի քանի ծանօթներիս հետ: Մեզ ընդունեցին շատ սիրալիք և հրաւիրեցին վեր: Գուլպաններով բարձրացանք սանդուխներից, որ մարդու ապշեցնում են իրանց մաքրութեամբ, և մտանք սենեակ խոր բարեններով:

գ է օ շ ն ե ր



Իսկոյն կաշւէ բարձեր բերին, որ եւրոպացիներիս  
համար չոքած նստելը աւելի յարմար լինի:

Դէյշաները բոլորն էլ հազնւած էին գեղեցիկ.  
Հագուստի կտորը գոյնզգոյն, որի վրա բանւած էին  
քմահաճ պէյզածներ, սարեր ու ձորեր, տուն ու կա-  
մուրջ: Նրանք չէին իմանում եւրոպական լեզուներ, և  
այդ թերին աշխատում էին լրացնել առատ ժպիտ-  
ներով:

Ճուտով բերին սամիսենը, որ եռալար գիտարի  
մի տեսակն է, և սկսեցին երգն ու պարը:

2եմ կարող ասել, թէ մի մեծ հաճոյք ստացանք:  
Աւելի ճշում էին, քան երգում ու արագ անցնում  
էին piano-ից forto, ու հակառակը: Առհասարակ իմ  
տպաւորութիւնս այն էր, որ ճապոնուհիների երաժշգ-  
տական զգացումը թոյլ է:

Դէյշաների մէջ կային և մի քանի շատ փոքրեր:  
Սրանցից մէկը, մօտ 11—12 տարեկան, սաս-  
նաւորապէս աշքի էր ընկնում իր աշխուժովն ու չա-  
րաճընիութեամբ: Նրա նշան աշխիկները խելք ու  
ծաղը էին առկայժում: Մի վայրկեան անգամ հան-  
գիստ չէր նստում մի տեղը. դառնում էր մեր շուրջը  
ու ճօճում անընդհատ, անզուսպ ծիծաղ պատճա-  
ռելով իմ ընկերակից նաւապաներին, որոնք քիչ-միշ  
հասկանում էին ճապոներէն:

—Դեկուսկէ-սան, —բացականչեց նաւապաներից  
մէկը. —ապա ցոյց տուր շնորհրդ, տեսնենք, ինչպէս  
ես ուրիշներից ձև առնում:

Նա գլխով արեց. շարաճճի մի բան փայլեց նրա աշքերում: Եւ մի վայրկեանի մէջ բոլորովին կերպարանափոխւեց, կծկւեց, կնճիռներ եկան դէմքին և դարձաւ մի փնթփնթող ծերուկ, որ իր համար կերակուր է պատրաստում: Եփում էր, խառնում էր կերակուրը, երեսակայական ամանի մէջ, համն էր առնում, դժգոհութեամբ շարժում էր գլուխը ու շարունակ փնթփնթում: Չայնը զուրս էր զալիս մի տեսակ խուլու ու սեղմած, կարծես իսկապէս բերանը կերակուրով վեր լինէր:

Վերջապէս թողեց, բըրչաց երեխայական հնչուն ծիծագով և հոլի պէս սկսաւ պտոյտ գալ: Նա զզում էր, թէ այդ վայրկեանին բոլորի սիրելին էր:

Յետոյ ներկայացրեց մի ամբողջ տեսարան, փոխնիփոխ դառնալով բարկացոտ ամուսին, քմահաճ կին և նրանց ծառա: Մաստիկ ծիծաղաշրժ կերպով կիտում էր յօնքերը, բուռն շարժումներ էր անում, ամուսինը ներկայացնելիս, պճրանքով շուռ ու մուռ էր զալիս սենեակում հովանոցը ձեռքին, երբ կնոշն էր ներկայացնում, և ամենալուրջ ձայնով խըրատներ էր կարդում, երբ դերը հասնում էր ծառային:

Շատ բնորոշ էր նոյնպէս մի տեսարան, որ պատմում էր ու ներկայացնում մի՝ կախարդական աշխարհն ընկած ճամփորդի: Կախարդը նրան երկար տարիներ իր մօտ պահելուց յետոյ արձակում է և տալիս է նրան, իբրև հրաժեշտի նւէր, մի արկդ, պատի-

ըելով, որ չը բանայ: Բայց ճամփորդը շատ երիտասարդ, ուրեմն և չափազանց հետաքրքիր լինելով բաց է անում արկղը. զուրս է զալիս, որ այնտեղ պահած էին նրա՝ կախարդի մօտ ապրած տարիները, և նա իսկոյն դառնում է ալեռը ծերուկ, այսպիսով անմիջապէս պատիժ ստանալով իր հետաքրքրութեան համար:

Միւս աղջիկները չունէին նոյն աշխոյժը և Դեկուսկէի առջև բոլորովին կորչում էին:

Բայց շատ գեղեցիկ էր ջրվէժների պարը, որ նրանք բոլորը միասին կատարեցին: Ամեն մի աղջիկ ձեռքին ունէր սպիտակ շորի մի նեղ փաթեթ, որը պարի ժամանակ արձակում էր, որպէս մի երկար շերտ. շերտերը ծածանում էին գեղեցիկ զալարումներով և ճշմարիտ որ նմանում էին քմահաճ վիժումով թափող ջրվէժին:

Սյդ միջոցին մեզ համար բաղցըեղին բերին մանրիկ պնակների վրա դրած, որոնց ձեռք տալ սակայն վախում էինք, այնքան անհրապուրիչ էր նրանց տեսքը: Իմ ուշադրութիւնս զրաւել էին խիստ փոքրիկ, կլորիկ խնձորները:

— Ի՞նչ էք կարծում, ի՞նչ բան է սա. — Հարցըց ինձ՝ մօտս նստած տիկինը, իմ հետաքրքրութիւնը նըկատելով:

— Խնձոր, — ասացի ես:

— Ապա վորձեցէր, — Ժպտաց նա:

Ես ձեռք տւի մէկին և անմիջապէս ետ քաշեցի

ակամայ զգանքով։ Կարմիր մաշկը ներս ընկաւ մատերիս տակ։ Դրանք՝ կճեպը հանած, պինդ խաշած ձուեր էին, cocotte-ի նման քսւած ու ներկւած, իսկ մէշը խրած կոթը բոլորովին խնձորի տեսք էր տալիս նրանց։

Բոլորը ծիծաղեցին, ու ոտքի ելանք։

Գէյշաները մեզ նոյն սիրալիր ժպիտով ճամփայ դրին, որով և ընդունել էին։

Դուրսը խոր գիշեր էր արդէն։

Ես նայեցի շուրջս. ամեն բան նոր էր թւում ինձ ու անծանօթ, կարծես բոլորովին մի նոր քաղաք էի ընկել։

Փողոցները դատուրկ էին բոլորովին. ճամփան լուսաւորում էր իր դողոզուն, աղօտ լոյսով մեր թղթէ մեծ լապտերը, որ կախւած էր կառքի տողեից։ Ամենից շատ ինձ զարմանք էր պատճառում տների մելամաղձուտ ու սառն տեսքը։

Ցերեկը նրանք բոլորը բաց էին ու կենսալից. իսկ այժմ պատերը պինդ քաշած ու փակած, լուռ ու հանդարտ, առանց կեանքի մի նշոյլի. ոչ դուռ, ոչ պատուհան, նաւահանգստում իրաք կողքին ու իրաք վրա շարւած ապրանքների արկղների պէս։

—Խխունչը մտել է իր պատեանը. — լսեց իմ ետևի կառքից ընկերներիս մէկի մեզմ ձայնը, կարծես նա վախենում էր խանգարել շրջապատող լուռթիւնը։

Զինը վագում էր անընդհատ, լապտերը ճօճ էր զալիս իր միակերպ, տխուր լոյսով։

Աչքերս յառել էի այդ լոյսին, որի մէջ հովի պէս պտոյտ էր զալիս Դեկուսկէ-սամփ կայտառ կերպարանքը, ծիծաղում էր, ծռմռւռում, ժպտում ու փոփոխուում, այնպէս կենսուրախ, այնպէս անփոյթ ու մանկական անհոգութեամբ։

Ու չը զիտեմ՝ ինչու, մի խոր տխրութիւն իջաւ վրաս։

Ի՞նչ է զառնալու քնութեան զւարթ աղջիկը մի քանի տարի յետոյ։ Գուցէ մի վայլուն գէյշա՝ հըռչակւի, ամբողջ ճապոնում տարածւած։ Դուցէ մի կոմս կամ իշխան կին վերցնի նրան, քանի որ ճապոնացու համար նշանակութիւն չունի կնոջ անցեալը և բարձրաստիճան անձերի ամուսնութիւնը գէյշաների հետ այնչափ էլ հազւադէպ չէ։

Բայց բոլորին չի վիճակում այդ «բաղդը»։

Ոչշափ, որչափ մեծ է այդ «մեծ մասի» թիւը, որոնք մի կերպ քաշ են տալիս իրանց ողորմելի կեանքը, երբ երիտասարդ տարիները թռել—փախել են, իրանց հետ տանելով և հրամլոյը, և զւարթութեան հմայքը։

Եւ Աստւած իմ, ի՞նչ մայր պիտի լինի, և կամ ի՞նչ պայմանների տակ ճնշւած, որ ինքն իր ձեռքովը իր հարազատ դուստրը նետէ այս ճամփի վրա. որովհետեւ ծնողներն են ընդհանըապէս, որ բերում են իրանց աղջիկներին ու վարձու տալիս թէյարանում, և յաճախ պարզապէս ծախում։ Արդէն ճապոնական կեանքի ամենասև կէտերից մէկն է դա։

Նոր հոսանքի ազգեցութեան տակ կառավարութիւնն արգելեց այդ անբարոյական առուտութը, բայց ճապոնացիք չը զիջեցին և հեշտութեամբ գուրս եկան օրէնքի տակից:

Փոխանակ պայմանագրով «ծախելու», տալիս են նրան իրեւ զըաւ իրանց վերցրած գումարի փոխարէն, որ առհասարակ անվճար էլ մնում է:

Խեղճ աղջիկներ:

Ու հայեացքս անթարթ մեխւել էր լապտերին, որի վրա նոյնպէս պար էր դալիս մի նկարւած աղջիկ իր երիտասարդութեան պարը. երեխ դա էլ մի գէյշա էր:


\*\*

Նազասակից մի քիչ վեր լեռների դալար լանջին պառկած է գերեզմանոցը, որի կողքին հըսկում են տաճարները:

Մահկանացուների քաղաքին անմիջապէս յաջորդում է անմահների քաղաքը, և պէտք է ասեմ, որ այդ յաւիտենական հանգստի վայրերը քաղաքի լաւագոյն մասերն են կազմում, ամբողջովին կանաչի մէջ թաղւած:

Այդ տաճարներից ամենահետաքրքրականն է շինոյեան աղանդի Օսովա կոչւած տաճարը:

Մի շատ երկար, ուղիղ ու լայն քարէ սանդուխ



տանում է վեր. ճամփին տեղ-տեղ հարթակներ կան  
դադարի համար: Ինչպէս ներքեր, սանդուխի սկզբին,  
այնպէս էլ այդ հարթակներից ամեն մէկի վրա շին-  
ւած են քարէ կամար-դռներ, որոնք «տօրի» են կոչ-  
ում և ընդհանրապէս կազմում են սրբավայրի ար-  
տաքին մուտքը:

Սանդուխի բարձրից հրաշալի տեսարան է. հա-  
յեցքը տիրում է ամբողջ բազարին, որ գէպի սարն  
է սողում, և նեղ, կապոյտ գեղանկար ծովին, ուր թա-  
փւած են բանաստեղծական անկարգութեամբ կղզեակ-  
ներն ու շոգենաւերը իրանց կայմերի՝ անտառներով:

Վերջին հարթակի վրա բարձրանում է ինքը տա-  
ճարը, որ ոչ իր փարթամութեամբն է աշքի ընկնում,  
ոչ էլ իր մեծութեամբը:

Դա խիստ պարզ ու հասարակ փայտէ մի շինը  
է, ինչպէս ընդհանրապէս բոլոր շինտօյեան տաճար-  
ները: Նրա միակ զարդն է կազմում գեղեցիկ գոգա-  
ւոր տանիքը իր յասուկ ոլորուն կերտածքով, որի  
վրա շատ աշխատած է լինելու ճարտարապետի ե-  
րեակայութիւնը:

Տաճարի մուտքի մոտ մի փոքրիկ գիլ զանգակի  
լեզւակից կախ է ընկած մի պարան, որը ամեն մի ճա-  
պոնացի գալիս-քաշում է, երբ իր ազօթքն է սկսում:

Շինտօն ձապնի ազգային կրօնն է, որ գոյու-  
թիւն ունէր ձապնում բուզգչիզմի զալուց դեռ շատ  
ու շատ առաջ:

Բուզգչիզմը մտաւ ձապն 2ինաստանից Կօրէայի

միջոցով, ընդունեց շինտօյի շատ գծերը և մասամբ էլ խառնեց նրա հետ։ Նոյնը և շինտօն, այնպէս որ հիմա շատ դժւար է որոշելը, ինչն է իսկապէս պատկանում մի կրօնին և ինչը միախն։

Ճապոնացին անխտիր միևնոյն յարգանքով մըտնում ու ազօթում է թէ բուղդհիստի և թէ շինտօյի տաճարներում։

Նա ծննելիս մտնում է մի շինտօ աստծու հովանաւորութեան տակ, բայց այդ նրան չի խանգարում, որ թաղի բուղդհիստ ծէսերով։

Վերջերս միայն նկատում է մի խոր հակում հին, պարզ ու զուտ շինտօյականը վերականգնելու, իբրև բուն ազգային կրօն։


Շինտօ կրօնի հիմքը բնութեան աստւածացումն է, այլ և նախնիքների ու հերոսների պաշտամունքը։ Շինտօն իր հետևողների վրա շատ քիչ ծիսական պահանջներ է դնում։ Որոշ տօներին պէտք է այցելեն տաճարը և կատարեն հանգուցեալների յիշատակը, ուրիշ ոչինչ։

Սա մի վերին աստիճանի կենսուրախ կրօն է։

Այստեղ բացարձակապէս չկայ այն բոլորը, ինչ որ ան ու դող է պատճառում ուրիշ ազգերին։

Նրա բոլոր էութիւնը մի ձգտում է դէպի երջանիկ կեանքի իրականացումը այս աշխարհիս վրա, երջանիկ, գւարթ և ախորժելի, թէ իր և թէ ուրիշների համար։ Իսկ այդ կեանքին նրա դաւանանքով կարելի է հասնել միմիայն մաքուր հոգով ու հանգիստ խղճով։

Օ Ս Ո Վ Ա Կ Յ Ա Յ Ի Տ Ս Ա Հ Ա Ր



Հաստ եւրոպական հետախոյզներ խիստ ցած են դասում շինտօ կրօնը, առարկելով թէ նա չունի կաղմակերպւած ու զարգացած բարոյական օքնքներ, աւելի բարձր աստիճանի կրօնների նման:

Այս կարծիքի դէմ ջերմօրէն բողոքում է Լաֆկադիօ Հիրն (Lafcadio Hearn), որ երկար ժամանակ ձավոնում ապրելով կարողացել է խոր կերպով թափանցել ու ըմբռնել նրանց կեանքն ու հոգին:

Եւրոպացին վինտրում է շինտօյի էութիւնը ոչ այնտեղ, ուր պէտք է. նա դիմում է խիստ սակաւաթիւ կրօնական գրքերին, մինչդեռ շինտօն ուժեղ է հէնց նրանով, որ գրքի հետ զործ չունի, այլ ապրում է բուն իսկ ժողովրդի սրտում:

«Շինտօ—դա նշանակում է հաստատուն կամք, արիութիւն, պատիւ, սիրալիք վարք և մանաւանդ ազնւութիւն։ Այդ կրօնի օգին է կազմում որդիական սէրը և սկզբունքի համար իր անձը զոհելու պատրաստականութիւնը։ Նրա ստեղծագործութիւնն է ճապոն կնոջ քնքոյշ սիրտը։ Դա մի տեսակ պահպանողական ոյժ է, որ ամեն կերպ արգելում է ժողովրդին իր անցեալի լաւ կողմելոր բաց թողնել՝ օտար նորութիւններին յարելու համար։ Այդ կրօնը այնքան խոր է թափանցել ժողովրդի սիրտը, որ արդէն մի ժառանգական բարոյական գրդիչ է դարձել, մի զեկավարող բնազդ» («Glimpses of Unfamiliar Japan» Lafcadio Hearn).\*

մէ նայ ոսիլ դժմարուի \* \* մայիսարուց ուահ  
րայի վմւոց առ Եկ. իրադյունաս պաօղի օտածէ նուսար

Մեռածն ու ապրողը ձապոնում սերտ կապւած  
են իրար հետ անտեսանելի խորհրդաւոր հանգոյց-  
ներով:

Նրանք հաւատում են, որ մեռնողի հոգին շա-  
րունակում է իր զոյութիւնը մեզ շըջապատող մի ան-  
երևոյթ աշխարհի մէջ:

Այդ հոգիները սաւառնում են տաճարների վրա,  
իրանց նախկին բնակարանների շուրջը, ուրախա-  
նալով իւրայինների ուրախութեամբը և վշտակցելով  
նրանց վշտին: Նրանք շարունակ խառնում են ընտա-  
նիրի զործերին և մինչև անզամ ճնշում են զործ  
դնում մարդկանց արարքների վրա՝ այս կամ այն  
միտքը ներշնչելով նրանց:

Բայց դա երբէք չի ապատում ճապոնացուն իր  
գարմունքի պատասխանատւութիւնից. նա պէտք է  
ընդունակութիւն ունենայ կշռելու իր սրտում եղած  
գատ ու լաւ աստւածների ազգեցութիւնը:

Այնպէս որ մարդու խիզճն է գերագոյն չափը,  
նա է միակ անկաշառ դատաւորը և շիտակ անաշառ  
ուսուցիչը:

Նախնիքների պաշտամունքը սրբութեամբ կա-  
տարուա է ամեն ճապոնացի, անխտիր թէ շինտօ, թէ  
բուդդիստ:

Ամեն տուն ունի իր փոքրիկ ընտանեկան խո-  
րանը, ուր պահում են փայտէ փոքրիկ տախտակ-

ներ, որոնց վրա գրւած է ընտանիքի հանգուցեալ  
անդամի անդրաշխարհիկ անունը:

Որոշեալ օրերին խորանի առջև կանթեղ են վա-  
ռում, դնում են թէյ ու կերակուր այն համոզումով,  
որ հոգիները կարող են այդ բոլորը վայելել, միայն  
ի հարկէ՛ ոչ նիւթապէս, այլ միայն կերակուրների ոգին:

Մեռելուների հոգսը քաշելը այն աստիճան խոր  
է նստած ճապոնացու մէջ, որ հնում հաւատարիմ  
ծառաները անձնասպան էին լինում, որպէս զի նոր  
մեռած տէրը ծառայութեան կարօտ շը մնայ միւս  
կեանքում:

Մեռելոցը մասնաւորապէս մի հանդիսաւոր տօն  
է և տեսում է երեք օր, յուկիսի 13-ից մինչև 15-ը:

Ընտանեկան խորանը գեղեցիկ կերպով զարդա-  
րում են ծաղիկներով, իսկ տան մուտքի մօտ արել  
մայր մտնելուն պէս վառում են մի լապտեր, որպէս  
զի հոգիների գալու ճամփան լուսաւոր լինի. լապտեր-  
ների ամբողջ մի երկար շաքք վառում են նաև ծովի  
ու գետերի ափին հոգիների գալը տօնելու համար:

Հոգիները պիտի գան ջրով, որովհետեւ ճապոնա-  
ցու համոզումով ջուրը անմիջապէս հաղորդակցու-  
թիւն ունի հոգիների ստորերկրեայ աշխարհի հետ:

Գիշերը մեծ կենդանութիւն է տիրում գերեզմա-  
նոցում, ուր բոլոր շիրիմները ունեն իրանց ծաղիկն  
ու լապտերը:

Սգւորները նւէր են բերում, խունկ ծխում ու  
նւիրական իւղ են թափում ջուրը:

Ամենից հետաքրքրականը վերջին գիշերն է, հոգիների հրաժեշտի գիշերը:

Յարդէ մանրիկ նաւակների մէջ դնում են ուստեղք, վառում են մի ճրագ և գիշերը իշնելուն պէս ծով են զցում: Այնպէս որ ծովի ամբողջ մակերեսոյթը ծածկում է այդ հազարաւոր փոքրիկ լոյսերով, որոնց հեռու ու հեռու է քշում մեղմ քամին դէպի հոգիների աշխարհը:

Մի խոր միստիկ բան ունի այս տեսարանը:

Իջնող գիշերւայ խոր լուսութիւնը, մուժ երկնակամարի վառող աստղերը և ծփուն ծովի վրա այդ շողշողուն ճրագների անընդհատ սայթաքելը դէպի խորհրդաւոր հեռուն՝ այս բոլորը միացած մի ջերմ ներդաշնակութիւն են կազմում և յուզում հոգին, կարծես հեռուից մեկնող հոգիները իրանց հրաժեշտի բարեն են ուղարկում մեզ:

\* \*

Բուղդիստների հաւատով հոգիները ապրում են ստորերկեայ աշխարհում, Սայ-Նօ-Կաւարա:

Մահից յետոյ ամեն մի հոգի ներկայանում է սրտատրով էմմա-Օ, դժոխքի դատաւորին: Նրա առջե կարդում են զործած մեղքերի երկար ցուցակը, մինչդեռ դէմը բռնած հայելիի մէջ նա տեսնում է իր բոլոր վատ արարիները:

Բուղդիստի դժոխքն ու արքայութիւնը ըիշ են տարբերում քրիստոնէականից: Նոյն տանջանքները ու նոյն երանութիւնը, միայն անշուշտ այս բոլորը ճապոնական շրջապատի մէջ:

Ողիների խորհրդաւոր աշխարհում ամենից հետաքրքրական է ժիգօի կերպարանքը, երեխաների հովանաւորն է նա, որովհետեւ խեղճ փոքրիկ երեխաները նոյնպէս ընկնում են ստորերկեայ աշխարհը:

Նրանք պարտաւոր են այնտեղ կառուցանելու մանը քարերից փոքրիկ աշտարակներ, բայց չար ողիները շարունակ գալիս են, քանդում ու խեղճ երեխաներին հանգիստ չեն տալիս:

Իսկ ժիգօն երկար ձողը ձեռքին օդնութեան է վազում, վերցնում է երեխաներին իր լայն թերթի տակ և հեռու է քշում չար ողիներին:

Դրա համար էլ ժիգօի արձանի մօտ ծնողները քարի կրյտեր են զիգում միշտ, աղաչելով, որ չը թողնի իրանց մեռած երեխային անօգնական:

Այս հաւատը խիստ որոշ ցոյց է տալիս մի աւելորդ անգամ ճապոնացու քնքոյշ սէրը դէպի փոքրիկները: Նա մի հոգատար է որոնում իր երեխայի համար նոյն իսկ այն միւս աշխարհում, որտեղ իր խնամքը արդէն հասնել չի կարող:

նախաճաշից յետոյ բարձրացաւ իր կառքերը և առաջ շարժւեց:

Խառն ու աղմուկով անցնում ենք փողոցները:  
Մեզ հետ վազում են ուրիշ ջինը կիշաներ, հրելով  
ետևից մեր կառքերը ու խնդրելով իրանց օգնական  
վերցնել, մինչև որ, մեր անտարբերութիւնից յու-  
սահատուած, մնում են ետ:

Խսկ մեր ջիները վազում էին մի առանձին ո-  
գեռութեամբ, թափահարելով ոտները իսկական ձիու  
պէս, կարծես ճամփի հեռաւորութիւնի նրանց աշ-  
խոյժ էր տւել: Կին ու մարդ, խանութ ու ապրանք  
արագ փախչում էին մեր աշքի տակով ու ձուլում ի-  
րար, մուլթ ու անորոշ մի զանգւած դառնում:

Քաղաքի ծայրում մեր դէմ եկաւ մի անորոշ աղ-  
մուկ, որ զգալի կերպով մեծանում ու շեշտում էր:  
Թմբուկի միօրինակ զարկերը դուրս էին խուժում մի  
փոքրիկ փայտաշին տնակից և գրաւում բազմաթիւ  
անցորդներ, որոնք բերանաբաց կանգ էին առել պա-  
տերին նկարած տարօրինակ պատկերների առաջ: Խսկ  
մի ծերուկ նստած դրան մօտ, մի բարձր տեղ հրա-  
ւիրում էր ներս:

Մինչդեռ թմբուկը խուլ որոտում էր անընդհատ,  
մենք դուրս նետւեցինք ժխորից: Եւ երբ բաղաքը ետ-  
մաց իր յատուկ հոտովն ու նեղ փողոցներովը, ու  
մեզ մէջ առին դալար սարերը, ակամայ թեթևացման  
մի խոր հառաչ դուրս թռաւ մեր կրծքիցը:

Գնում էինք ձորի գեղեցիկ լանջով, որի վրա

## ԴԵՊԻ ՈՒՆՁԵՆ

Որոշեցինք մի քանի օրով գնալ Ռմզէն, որ  
յայտնի է իր գեղանկար դիրքով և ծծմբի չերմուկ-  
ներով:

Մրա հոչակը տարածւած է ոչ միայն ճապոնում,  
այլ և այն եւրոպացոց մէջ, որոնք ապրում են Հե-  
ռուսոր Արևելքում: Այնտեղ զնում են բժշկւելու յօ-  
դացաւից, կամ պարզապէս շնչելու նրա լեռնային  
կազդուրիչ օրը:

Գալիս են նոյն իսկ Սիբիրից, թէև Ամուր գետի  
հովտում բաւական լաւ տեսակի հանքային ջրեր կան,  
բայց նրանք այնպէս երեսի վրա են թողւած և կեան-  
քը այնքան թանգ է, որ հիւանդները գերադասում  
են երկար ճամփորդութեան դժւարութիւնները, անց  
են կենում հազարաւոր վերստեր, գետով ու ծովով.  
Խոյս տալու համար Սիբիրի բուժաբանների անյար-  
մարութիւններից:

Ջինը կիշաները հոտ էին առել մեր գնալու դիտա-  
տութեան մասին և մէկը միւսի ետեից գալիս էին  
իրանց ծառայութիւնը առաջարկելու: Բոլոր պատ-  
րաստութիւնները վերջացնելով, մեր փոքրիկ խումբը

մեր ուղղին նկատելի կերպով վեր էր սողում:

Ամեն կողմ՝ ուր նայում ես, թարմ ու կանաչ, որ աշք է շոյում:

Ճամփի երկու կողմը մեզնից վերև ու ներքե փուած էին բրնձի արտեր, որոնք անվերջ հալթակներով սանդուխի աստիճաների պէս իջնում էին վար: Զուրը առատօքին ոռոգում էր ու ողողում նրանց և աղմկոտ առւակներով հօսում էր ձորը ու մի գետակ կազմում:

Ամբողջ սարի լանջը բաժանւած էր փոքրիկ բառակուսիների, որոնց մէջ ամեն տեղ եռում էր աշխատանքը:

Կանաչի մէջ սպիտակին էին տալիս գեղչկուհիների գլխի թաշկինակները և գիւղացիների յարդէ սրնկածե գլխարկները: Նրանք՝ մարդ ու կին՝ մէջքը երկտակ ծալած ու մինչև ծունկները մածուծիկ ցեխի մէջ կանզնած ձեռքով շուռ էին տալիս հողը ու փափկացնում, որ բրինձը լաւ աճի, արդէն աճած ցողունները փոխաղրում էին մի ուրիշ, աւելի ազատ տեղ ու նորից տնկում:

Մի քիչ դէնը դեռ նոր են վարում հողը:

Ծանրամարմին եղը զբի մէջ շրփչրփացնելով բաշում է թեթև արօրը. Նրա ետևից վազում է փոքրիկ երեխան՝ արօրին ուղղութիւն տալով:

Հողի մշակութիւնը ձապոնում խիստ բարձր աստիճանի է հասած, թէև գործիքները չափազանց պարզ են և նախնական: ձապոնը իրաւամբ կարելի է

անւանել «մանը հողաբաժինների» երկիր: Պետութեան զլսաւոր եկամուտն էլ ստացւում է հողի արդիւնագործութիւնից:

Մեր ճամփան շարունակ բարձրանում էր վեր: Գնացող եկողների թիւն էլ շատանում էր: Մենք շարունակ պատահում էինք վազող ջիների ու նրանց կառքերի, կամ գիւղացիների, որոնք ուսին դրած երկար ձողերից կախած զամբիւզները, պտուղ ու բանջարեղին էին տանում բաղաք:

Մեր ճամփին կից յաճախ մեր հանգէպն էր գալիս մի տօրի, սրբավայրերի այդ սովորական նախաղուռը, և իսկապէս որոնող հայեացը գտնում էր շուտով այս կամ այն փոքրիկ բլրակի գլխին միայնակ Բուդգհայի միայնակ արձան, մի ծածկի տակ իր բոլոր ստացած նւէրներով բաշւած:

Հասանք ջիներիկիշաների կայանը: Նրանք արդէն շատ էին յոգնել շարունակ սարը բարձրանալուց: Իսկոյն նետւեցին ստւերնոցի տակ ու սկսեցին իրանց պարզ նախաճաշը, որ պինդ եփած բրինձ էր:

Ճնորհալի տանտիկինը մեզ էլ ուտելիք բերեց ու դրեց փոքրիկ սեղանների վրա:

Ամբողջ դադարը հազիւ մի-երկու վայրկեան տեսեց:

— Սայնարա, սայնարա (ցտեսութիւն), — փոխադարձ խոր բարեներով բաժանեցինք ու արդէն սկըսեցինք իջնել դէսի ձորը:

Եռվը բոլորովին անհետացաւ մեր աշքից, փոխւեց

նոյնպէս շրջապատի բնաւորութիւնը, դառնալով աւելի փայրի ու գեղեցիկ:

Մնտառները գալիս, բռնում են բընձի հարթակների տեղը և շրեղ ու ձիգ տարածւում ճանապարհի երկու կողմից: Արմաւենիների ճկուն ու թեթև պուրակները ու բամբուկի խիտ ու բարձր ծմակները սքանչեցնում են մարդուն իրանց թարմ դալարով:

Հազիւ էինք գուրս եկել անտառից, որ յանկարծ երևացին կղմինդրէ կտուրները:

Հասել էինք Մօգի:

Դա մի ձկնորսական զիւղէ, որ քմահաճ անվիժութեամբ փուել է ծովի ափին:

Ճապոնում զիւղը ընդհանրապէս շատ քչով է տարբերում քաղաքից. նոյն փայտէ շէնքերը, նոյն կըդմինդրէ կտուրներով և նոյն մարդութիւնը ամեն տեղ:


Դրեթէ բոլոր պատերից կախած էին ուռկաններ, իսկ հեռուում՝ ծովում օրօրուում ու սպիտակին էին տալիս ձկնորսների մակոյկները:

Ճապոնացի ձկնորսը խիստ յայտնի է իր անվեհերութեամբ: Նրանք թեթև, խարխուլ նաւակներով զնում են շարունակ հեռու, հեռու բաց ովկիանոսը, թէև շատերն էլ զոհ են դառնում սարսափելի տալֆունեն քամուն:

Յանկարծ լսեց շոգենաւի սոյլը, և մենք ուրախ շտապեցինք դէպի ծով:

Ծովի տեղատութեան ժամանակն էր: Զոգենաւը, ի հարկէ, կանգնած էր հեռուն. նաւակն անդամ չէր

Բ Ս Ե Ռ Ո Ւ Կ Ի Ռ Ա Տ Ե Ս Ա Շ



Կարողանում մօտենալ, այնքան ծանծաղ էր ափը:  
Եւ շոգենաւը հասնելու համար ստիպւած էինք դի-  
մելու ամենանահապետական միջոցին։ Տղամարդկանց  
գիւղացիք տանում էին իրանց ուսերին, իսկ կանանցս  
համար երկու-երկու ճապոնացի իրանց ձեռքերը մի-  
ացնելով, նստարան էին հիւսում։ Նստողը ամուր  
բոնում էր իր երկու բեռնակիրների վզիցը ու սուր  
քրքիչով աշխատում էր ծածկել իր վախը։ Ծիծաղե-  
լի էին նոյնպէս և պարոնները այդ կարճլիկ ուժեղ  
ճապոնացիների ուսին։

Այսպէս այդ կենդանի պատգարակներով հասանք  
նաւակին, որը մեզ շոգենաւ փոխազընեց։

Շոգենաւը շատ փոքր էր, և այն էլ ամբողջա-  
պէս բոնւած էր մեքենայով, ուղևորների համար կար  
մի փոքրիկ խցիկ միայն։

Այս խցիկում էլ խոնւեցինք մինչև Օբամա, որ  
երկու-երեք ժամւայ ճամփայ է։

Մօտենալիս, Օբաման ծովի կողմից շատ գեղեցիկ  
է։ Ափը ժայռոտ, սեպ ու խիստ բարձր։

Տները կարծես կախւած լինեն օգի մէջ անդըն-  
դի զլխին ու նայելիս ներքե, որտեղ ծովը անընդհատ  
քծնում է, մոնշում ու փրփրում։

Այստեղից ուղին շարունակ բարձրանում է մինչև  
Ունդէնը, և այնպէս ցից, որ ջինըիկիշաները տանել  
չեն կարող։ Հաղորդակցութիւնը կատարւում է պատ-  
գարակներով, և այս անդամ արդէն իսկական պատ-  
գարակներով։

Մտանք հիւրանոց նախաճաշելու, թէև դա բաւական բարդ գործ զարձաւ: Եւրոպացիների գալը բոլորովին անակընկալ էր. և մեր սիրուն տանտիրուհին ուղղակի չը գիտէր՝ մեզ ինչ առաջարկի: Իսկ մենք խիստ անօթի էինք և լաւ ախորժակ ունէինք մի հիւթալի խորովածի:

Սակայն ամբողջ գիւղում միս գտնել անկարելի եղաւ, և մենք ճարահատւած ստիպւած եղանք մի կերպ բաւականանալու ձուով և բանջարեղինով:

Այդ միջոցին դուրսը խոնւել էին արդէն պատղարակ կրողները, ու ամեն-ինչ պատրաստ էր մեր ճամփան շարունակելու:

Եւրոպացուն յատկացրած պատղարակը պարզապէս մի աթոռ է, երկու կողերին մի-մի երկար ձող կպցրած տանելու համար:

Ես շատ էլ չօգտագի այդ պատղարակից, որի մէջ նստելը ուղղակի մի տանջանք է անսովոր մարդու համար. կարելի է մինչև անդամ ծովային հիւանդութիւն ստանալ, այնքան մարդ ճօճւում է աջ ու ձախ, առաջ ու ետ:

Դրեթէ ամբողջ ճանապարհը ես ոտով անցայ և բնաւ չը յոզնեցի. այնքան հրապուրիչ էին դէմս բացող ու անդադար փոփոխող լեռնային տեսարանները:

\*\*\*

Արև արդէն մայր էր մտել, երբ հասանք կօջի-

գոկու և իջանք մի զուտ ճապոնական հիւրանոց: Աւանում կային նոյնպէս ուրիշ հիւրանոցներ, արդէն յարմարեցրած եւրոպացու ճաշակին, բայց մենք այս անդամ ուղեցինք ճապոնականի համն առնել:

Մեզանից ամեն մէկին յատկացրին մի փոքրիկ գողտրիկ սենեակ, որի գլխաւոր տարօրինակութիւնն ու հրապոյըն է՝ պատոհան չունենալը:

Ամբողջ պատը ներկայացնում է մի շարք շարժական դռներ ճապոնական թղթով կպցրած: Այդ շարժուն դռները կարելի է քաշել աջ կամ ձախ, միացնել ու բաժանել, տալով սենեակին քո ուղած մեծութիւնն ու ձեր:

Կարելի է բոլորովին հեռացնել պատերը, և այն ժամանակ սենեակը դառնում է մի պատշգամբ, որից կարող ես վայելել բնութեան գեղեցկութիւնը առանց աշխատանքիդ սեղանից հեռանալու: Բայց կա արդէն մի նեղ ու իսկական պատշգամբ էլ, որ գօտիի պէս գըկում է ամբողջ տնակը: Գիշերը այդ գօտին էլ է պատեր ստանում, վայտէ ծանր տախտակներ, որ բերում են ամրացնում պատշգամբի եղերքին:

Այսպէս որ տունը դրսից մի ամուր կողպւած փայտէ սնդուկի տեսք է ստանում: Այդ սնդուկը ես մինչև այդ տեսել էի միայն դրսից. իսկ այժմ յանկարծ ինքս ընկել էի մէջը:

Առաւոտը արկը ծագելուն պէս տախտակները հանում են մեծ դղբդոցով ու աղմուկով:

Ինձ զարթեցնողը հէնց այս դղբոցն էր:  
Ես կախեցած բացի աշքերս:

Մեր տունն արդէն թափ էր տւել իր պատեանը,  
արևի մեղմ ու տաք ճառագայթները թափանցել էին  
սենեակս, այնպիսի մի գեղեցիկ վարդագոյն փայլ  
տալով թղթէ պատերին, որ ես իրականութիւնը մո-  
ռացած՝ ինքս ինձ մի վայրկեան հէքիաթային մի էակ  
երեակայեցի, որ ով գիտէ ինչ կախարդանքով եկել  
ընկել էր այս բոցավառ լապտերի ծոցը:

Վեր թուշելս ու հագնելս մի ակընթարթի գործ  
եղաւ. ետ հրեցի իսկոյն պատը ու սքանչացած կանգ  
առայ:

Ուղիղ ոտներիս տակ բացւում էր մի խոր ան-  
գունդ թարմ կանաչով ծածկած. դէմս կուտակւել էին  
անտառախիտ սարերը իրար ուսին. իսկ հեռնւն, հե-  
ռաւն, հորիզոնի մօտ երեսում էր կապոյտ ծովի մի  
կտոր:

Աջ կողմս ցըիւ էին եկած գիւղի տները լերան  
լանջին, որ քանի ետ, այնքան վեր էր բարձրանում:  
Եւ այդ բարձրութեան վրա օձի պէս ոլորտում էր ա-  
րահետը, որ տանում էր դէպի Սինբուի և Ռնզէնի  
ծծմբային ջրերը:

Ահա դէպի այդ արահետը շտապեցինք մենք գիւ-  
ղի միջով, մի կերպ արագ նախաճաշը վերջացնելով:

Գիւղում բարքերը շատ պարզ են, իսկ ինչ վե-  
րաբերում է սիրալիքութեանը, գիւղացիք գերազան-  
ցում են քաղաքացիներին անգամ. Ամեն մի գիւղացի

օտարին հանդիպելիս, պարտք է համարում մի քաղցր  
խօսքով նրան բարեւելու: Իսկ երեխաները բոլորը  
դուրս են թափւում փողոց ու բարձրածայն բղաւում  
«օխայօ, օխայօ (բարե)», ջանալով իրանց փոքրիկ  
իրանները կուցնելու իսկ և իսկ մեծերի նման: Երե-  
խանները ձապնում շատ զբաւիչ են ու կայտառ.  
Բնաւ չոնեն մեր երեխաններին յատուկ ամաչկոտու-  
թիւնը օտարի առաջ:

Գիւղը վաղուց արդէն ետ էինք թողել:

Երբ սարի գլուխը հասած՝ թեքւեցի դէպի ձորը  
ու աշք ձեղեցի ցած, ինձ թւաց, թէ Դանտի դժուպից  
մի տեսարան էր փուել առջևս իր ամբողջ շարագու-  
շակ գեղեցկութեամբ:

Գոլորշու ահազին մուայլ քուշանները դուրս էին  
ժայթքում ամենն կողմից ձորի յատակին, և պատում  
ամբողջ շրջակայքը. յետոյ ծանր-ծանր բարձրանում  
էին վերև և կազմում թանձը, քաւթառ ամպեր, որոնք  
ծոյլ-ծոյլ սահում էին կանաչազգեստ լեռների վրա-  
յով ու խիստ աշքի ընկնող մի հակապատկեր էին կազ-  
մում նրանց մատաղ ու կենսալից թարմութեան հետ:

Զորում ամեն-ինչ եռում էր, ծխում ու աղմկում:

Զուրը թափով դուրս է ցայտում ու բարձրա-  
նում Յ-ից մինչև Յ ոտնաշափ, տարածելով շուրջը  
ծծմբի խեղդող հոտը:

Զորս կողմը, ժայռերից, գետնից, քարերից, և  
մինչև անգամ ճամփի եղերքից ջրի փոքրիկ շարա-  
ճընի շատրւաններ են դուրս նետում:

Պիտի գնաս մեծ զգուշութեամբ, քարէ քար թըռչելով, թէ չէ հողը փուլ կը գայ ոտքիդ տակ ու կընկնես փոսը և կայրես ոտներդ:

Զրի տաքութիւնը շատ է բարձր, հասնում է մինչև 204 աստիճան ըստ Փարենհեյտի:

Բամբուկի խողովակներով նա վազում է՝ դէպի լողարանը, ուր եւրոպացիների համար վաննաներ են շինած:

Իսկ իրանք ճապոնացիք լւացւում են մի ուրիշ առանձին շէնքի մէջ, որի պատերը այնքան մեծ ճեղքեր ունեն,՝ որ փողոցից ազատ կերպով կարելի է տեսնել հոսող ջուրը և միասին լողացող կանանց ու տղամարդկանց խումբը:

Արդէն յիշեցի, որ ճապոնացիք մեզանից բոլորովին տարբեր գաղափար ունեն բարոյականութեան մասին և բնաւ չեն ամաչում իրանց մերկութիւնից: Բայց այդ ոչ մի տեղ այնքան աշքի շէր ընկնում, ինչպէս Ունգէնում: Գիւղում շատ և շատ յաճախ կարելի է պատահել բոլորովին մերկ մարդկանց, որոնք լողանալուց յետոյ հանգիստ ու խաղաղ տկլոր վերապառնում են տուն, ճամփին կանգ են առնում մի ծանօթի պատահելիս և խօսում են կատարեալ պարզութեամբ ու այնպէս բնական կերպով, կարծես դա իրանց մշտական ու սովորական վիճակը լինէր:

\*\*\*

Հրաբուղիսային այդ ջերմուկները բնականաբար

ազգել են ժողովրդի երևակայութեան վրա, և գուցէ դա է պատճառը, որ Ունգէնն ու իր շրջակայրը դարձել են բազմաթիւ աստածների բնակավայր:

Ամեն բայլիդ մի աստծու կը հանդիպես կամ բազմած մի բլրակի գլխին, կամ քաշւած ձորի մի անկիւնը՝ ցայտող ջերմուկի կողքին:

Քիչ այն կողմ աստածների ամբողջ մի ատեան է, որ կիսաշրջան կազմած՝ նստել են խոր մտածկոտ գէմքերով, ու ո՞վ զիտէ բնութեան ինչ գաղտնիքների մասին են խորհրդածում:

Բոլորն էլ տարբեր-տարբեր կերպարանք ունեն և շինած են բաւական կոպիտ ձեռվ. կան և այնպիսիները, որոնք պարզապէս մանր քարերի մի կոյտ են ներկայացնում, միայն այնպէս վարպետ դիզւած, որ որոշակի երեւում է աստծու բնաւորութիւնը: Միւսները տաշած քարից են ու ներկայացնում են մի այր կամ կին՝ բաւական կանոնաւոր դիմագծերով:

Ճամփիս աջ կողքին երկու բարակ ձողերի վրա կանգնած էր խուփը բաց արկդի պէս մի բան, որի առաջ մի զառամեալ փոքրիկ պառաւ կուշ եկած ջերմեռանդ աղօթում էր:

Արկդի մէջ իրար դէմ նստած էին չորս փոքրիկ աղլէս, ատամները սրած ու մազոտ պոչերը տնկած դէպի վեր: Ամեն մէկի առջև եփած բըինձ էր դրւած իրեւ նախաճաշ:

Աղլէսը, կամ ինչպէս նրան անւանում են «կետմէ», մի առանձին յարգանք է վայելում հասա-

ըակ երկրագործ ժողովրդից, նրանից վախենում են, իբրև մի խորամանկ ու նենդամիտ էակից, որ միշտ աշխատում է մարդկանց վնասել:

Նրանց քարէ արձաններին մարդ յաճախ հանդիպում է բրնձի աստծուն, ինարիին, նիրւած տաճարի մօտ: Սակայն խորամանկ կենդանին հետզհետէ կարողացել է անկախութիւն ձեռք բերել ու ստանալ իր մասնաւոր պաշտամունքը:

Աղէսի պաշտամունքի հետ կապւած են անթիւ մնապաշտութիւններ, որովհետև նրան երևակայում են ամենակարող, նրա առաջ բաց է ապագան, նա գիտէ մարդու ամենազաղտնի մտածմունքները և հեշտութեամբ կարող է վնաս հասցնել: Այդ պատճառով էլ ամեն կերպ աշխատում են նրա սիրտը միշտ շահել:

Մնապաշտ ժողովուրդը աղէսին է վերագրում միշտ շարք ջղային հիւանդութիւններ, որոնց մէջ մեծ զեր է խաղում ինքնհիանողը-ինքնաներշնչումը: Այնպէս որ, ճապոնը ունի իր աղէսից բռնւածները, ինչպէս որ Միջին դարերը իրանց դիւահարներն ունէին:

Հիւանդութիւնը մօտաւորապէս նոյնն է, ինչ մեր ընկնաւորներինը: Նրան առհասարակ աւելի ենթակայ են գիւղացի կանայք, իբրև աւելի սնահաւատ տարը:

Անհատի եսը, որի մէջ մտել է աղէսը, դառնում է երկու: Մէկը հիւանդն է, միւսը աղէսը, որ շարունակ խօսում է նրա բերանով ու վիճում է նոյն իսկ նրա հետ մի տարբեր, օտարոտի ձայնով: Նա է, որ

հիւանդին խելքիցը հանում է, վագել է տալիս փողոցով վայրի ճիշերով, կամ նետում է գետին՝ փրփուրը բերնին:

Բայց ինչպէս որ աղէսը ինքն է մտնում ու տիրում մարդուն, այնպէս էլ սնահաւատ ժողովրդի հաւատով կան մարդիկ, որ մի մասնաւոր իշխանութիւն ունեն աղէսների վրա: Եւ ահա զրանց է, որ զիմում է սնահաւատ ճապորացին իրեն բռնող աղէսից ապատւելու համար: Այդ տեսակէտից մասնաւոր մեծ հոչակ ունեն նիշըրեն աղանդի բուրմերը, որոնք գալիս են հիւանդի մօտ, սկսում են խօսակցել աղէսի հետ ու սլարգեններ խօստանալով մի կէրպ ստիպում են, որ աղէսը թողնի հիւանդի մարմինը: Եւ հիւանդը իսկապէս բժշկում է, ի հարկէ նորից հիանողով:

Անշուշտ բաղաբակըթութեան ոյժի առաջ այդ մնապաշտութիւնը հետզհետէ կորցնում է իր նախկին թափը: Գիւղական դպրոցը նրա ամենաառաջին թըշնամին է:

## ՃԱՊՈՆԱԿԱՆ ՄԻԶԵՐԿՐԱԿԱՆՈՎ

Նազասակիից Կօրէ անցանք ճապոնական «Nigo-Maru» շոգենաւով, որ մշտական երթևել ունի Կօրէի, Նազասակիի և չինական նիու-Չանդ նաւահանգստի մէջ:

Նաւը փոքր էր, մաքուր ու կոկիկ: Ճաշի սրահում առաստաղից կախւած էր ահաղին պանկերը, այսինքն պաստառի մի լայն կտոր, որ անդաղար հոգհարելով զով էր տալիս սեղանակիցներին:

Այդ յարմարութիւնը զեռ չի մտած ոռւսաց կամաւոր ֆլոտի շոգենաւերի մէջ, ուր ճամփորդները մինչև այժմ սաստիկ շարշարում են տօթից, տրոպիկներն անցնելիս:

Գրեթէ բոլոր նաւաստիներն ու նաւապետները բացառապէս ճապոնացի են: Ճապոնը եւրոպական բաղաքակրթութեան նորութիւնները իւրացնելուց յետոյ ամեն կերպ աշխատում է իր ձեռնարկութիւններից հեռու պահէ եւրոպացիներին:

Ճապոնացիք նախ ձգտում են զործին տէր դառնալ, իրանք իրանց ոտին կանգնել, և յետոյ արդէն ճարպիկ և աննկատելի կերպով հետզհետէ իրանց եւ-

բոպացի ուսուցիչներին փոխանակում են տեղացիներով: Եւ սրանով էլ խուսափում են նրանք բազմաթիւ զեղծումներից, թէս ի հարկէ զրգուում են եւրոպացիների գժգոհութիւնը:

Մեր շոգենաւի հասարակութիւնը մեծ չէր, բայց երգիներանգ էր. եւրոպական մի քանի ազգութիւններ ունէին այդտեղ իրանց ներկայացուցիչները, իսկ աւելի մեծ մասը ճապոնացի էր, պաշտօնեայ կամ զինուրական:

Վերջինների թւում մասնաւորապէս խիստ տիպիկ էր մի զննապետ, որ ամբողջ օրերով փուած էր մէջքին long-chaise-ի վրա, իր անշարժութեամբ կարող էր իր ազգի անվրդով աստւածների նախանձը շարժել: Նա ոչ մի ցանկութիւն ցոյց չէր տալիս եւրոպացիների հետ խօսակցութեան բռնւելու և ընդհանրապէս վերաբերուում էր իր շուրջը կատարւածին բացարձակ ու միակերպ անտարբերութեամբ:

Սրա կատարեալ հակատիպն էր ներկայացնում մի երիտասարդ, կոմս Հիսամատսուն, որ պատկանում էր ճապոնական մի յայտնի ազնւական ընտանիքի: Նա իր կրթութիւնը առել էր Փրանսիայում, ուր մինչև իսկ մի տարի ծառայած էր իրեւ սպայ: Սյժմ զինուրական զլիսաւոր հրամանատարի կցորդ էր նա:

Հազնւած էր Պարխզի վերջին մօղայով. աշքի էր ընկնում ընդհանրապէս նրա մասնաւոր պճնասիրութիւնն ու գւարճասիրութիւնը: Ֆրանսիայով նա

ուղղակի ոգեսրւած էր և անւանում էր իր երկրորդ  
հայրենիքը:

—Ես սիրով ամբողջ կեանքումս Փրանսիայում  
կապրէի, —ասում էր նա, --թէ պարտականութիւնս ինձ  
հայրենիք չը կանչէր: Ժամանակ անցկացնելու համար  
չէր, որ ինձ արտասահման են ուղարկել: Ինչ լաւ բան  
որ ես այնտեղ իւրացնել կարողացայ, պէտք է գոր-  
ծադրեմ այստեղ, հայրենիքումս:

Նա վերին աստիճանի նւիրւած էր իր հայրենի-  
քին և մինչև անզամ միամտօրէն զարմանք էր ար-  
տայայտում, թէ միթէ աշխարհում կարող են լինել  
մարդիկ, որ հայրենասէր չը լինեն:

Միայն հաւատն էր այն կէտը, որի մասին նա  
ընաւ խօսել չէր սիրում: Երբ ասացի, թէ նրանց  
տաճարները ազգել էին վրաս, նրա դէմքից մի ինչ-  
որ կասկած ու հեգնութիւն անցաւ. լռեց մի վայր-  
կեան ու յետոյ ասաց ժպտալով.

—Գիտէք, մեր զրող, Փուկազավան ասում է. «կրօն-  
ները տարբերում են իրարից այնքան, ինչքան թէյի  
տեսակները: Միսիօնարներն են միայն, որ փոքրիկ  
խանութպանի նման՝ իրանց թէյն են գովում»:

Երբորդը ճապոնացի մի պաշտօնեայ էր, կըր-  
թութիւնը Ռուսաստանում առած: Նա պատմում էր,  
թէ ինչ դժւարութիւնների էր յաղթել, մինչև յար-  
մարւել էր ուսւ կեանքի սովորութիւններին ու լեզվին:

—Դուք երևակայել անզամ չէք կարող, —ասում  
էր նա, —թէ ի՞նչպէս դժւար է մի ճապոնացու հա-

մար, երբ առաջին անգամ ոտ է դնում եւրոպա:  
Խորթ է ամեն ինչ, ոչ միայն օտար լեզուն, այլ  
և բարքն ու սովորութիւնները, որոնք հիմնովին օ-  
տար ու անհասկանալի են մեզ, քանի որ ձեր կեանքը  
ամենին նման չէ մերինին: Մենք ստիպւած ենք մեր  
ամեն մի բայլը հաշւի առնելու և ուշի ուշով հետե-  
լու մեզ շրջապատողների վարմունքին, մի սխալ բան  
չանելու և ծիծաղ չը յարուցանելու համար: Ես  
երբէք չեմ մոռանալ անյարմար դրութիւնս, երբ  
ուսւ ծառան առաջին անգամ ներս բերեց սե-  
նեակս ցոլցուն ու եռացող ինքնաեռը: Ուղղակի չէի  
հասկանում, թէ զա ինչացու է, և միևնույն ժամանակ  
վախենում էի տղիտութիւնս ծառայի առաջ ցոյց  
տալուց:

—Իսկ ոռւսերէն շնուր սովորեցիք, —հետաքրքրւե-  
ցի ես:

—Բաւական շուտ. ուսուցչս տւած զասը հերիք  
չէր ի հարկէ: Ես սովորում էի տանը, դուրսը, ամեն  
տեղ, որոշում էի սիւնեակներով բառեր, որ անզադար  
կլինում էի Պետերբուրգի փողոցները շրջելիս: Եւ  
կարծեմ բաւական օտարուի տպաւրութիւն էի թող-  
նում, որովհետեւ ինձ հանդիպողներից շատերը կանգ-  
նում ու ետ էին նայում:

Որքան մօտենդում էի իմ ճապոնացի ուղեկիցնե-  
րիս, այնքան համակրանքս աւելանում էր և այնքան  
էլ ինձ զարմանք էր պատճառում մեզ հետ եղող միւս  
եւրոպացիների դէսի նրանց ցոյց տւած վերաբեր-

մունքը: Վերջինները մեծ մասով վաճառականներ էին, ներկայացուցիչներ արևելքում յայտնի առևտյական տների:

Ճապոնացիք հաճոյքով էին խօսակցում նրանց հետ և իրանց պատրաստականութիւնն էին ցոյց տալիս ամեն կերպ նրանց օգտակար լինելու, մինչդեռ եւրոպացիների վարմունքը աւելի քան տարբի էր: Ճապոնացիների ներկայութեամբ խօսում էին նրանց հետ, ծիծաղում ու կատակում. իսկ հէնց որ առանձին էին մնում, ծաղրում էին նրանց ու հայհոյում: Դա այն աստիճան ինձ անախորժ էր, որ վերջապէս դիմեցի մի շիկահեր զերմանացու.

— Ի՞նչու էք այդպէս վարւում նրանց հետ. միթէ չէք սիրում ճապոնացիներին:

Նա Ժպտաց:

— Ի՞նչու չեմ սիրում. Օ ոչ, սիւալում էք: Ես շատ եմ սիրում. . . ճապոնուհիներին: Իսկ ճապոնացնեն. էհ, այնպէս անախորժ է այդ ժողովուրդը: Դուք դեռ նրան չէք ճանաչում: Մի զրաւէք նրանց սիրալիր ժպիտով: Ա՛, այդ ժպիտի տակ ինչեր է թագնւած: Հազար անդամ զերադասում եմ չինացու հետ գործ ունենալ քան ճապոնացու: Առաջինի հետ զոնէ զործը մի կերպ կը կարգադրես, իսկ ճապոնացին հոգիդ բերանդ կը բերէ և զործից էլ ոչինչ դուրս չի գայ: Է՛, դուք չը գիտէք. նրա Ժպիտը միայն դէմքի վրա է, իսկ սրտումը թշնամութիւն միայն ունի դէպի եւրոպացին:

Այս ասելով շուռ եկաւ ու հեռացաւ:

Գերմանացու պատասխանը մեծ զայրոյթ պատճառեց մօտս նստած մի պառաւ անգլուհու, որ երկար ապրել էր ձապանում, ինչպէս ինքն էր ասում: Նա արհամարդու մի հայեացը ցցեց զերմանացու երեսին. բայց միայն ուսերը թափ տւաւ և ոչինչ չը պատասխանեց:

— Մրանց նմաններին ի՞նչու համար պիտի սիրի ճապոնացին,—բացականչեց նա՝ շարացած ինձ դառնալով: — Միթէ կարելի է աւելի անկեղծ վերաբերմունք ցոյց տալ եւրոպացուն, երբ տեսնում ես, որ նա միայն խլել ու տիրել է ցանկանում. և ճապոնացին շատ լաւ է հասկացել և հիանալի պաշտպանում է, իսկ այս պարոններն էլ ի հարկէ չարանում են: Ա՛խ, որքան կը կամենային իրանց թաթը զնել այս կապոյտ ծովի վրա էլ, զնել իրանց թաթը այս ջօնկերի ու այս խաղաղ ձկնորսների վրա:

Եւ նա վրզովմունքից աշքերը փակեց մի վայրկեան: Յետոյ բացաւ ու շարունակեց աւելի ջերմ:

— Հաւատացէք, օրիորդ, ճապոնացիք հրաշալի ժողովուրդ են. երբ նրանք զգում են ձեր վերաբերմունքի անշահասէր ու անկեղծ լինելը, նրանցից աւելի սիրալիր ու սրտակից մարդ չէք կարող զտնել աշխարհում:

\* \*

Նազասակիեց մինչև Կօքէ միայն մի կայան կայ,

**Սիմօնօսէկի, որ յայտնի է պատմութեանը 1895-ի 2ին-Ճապոնական դաշինքովը:**

Քաղաքը զետեղւած է նոյնանուն նեղուցի վրա,  
որ բաժանում է Նիպպոնի կղզին Կիու-Միուից, և  
ձապոնի ծովը կապում է գեղանկար Միջերկրական  
ծովի հետ:


“Սիմօնօսէկիում շողենաւը մի երկու ժամ է կանդնում միայն ուղևորներ առնելու:

Ճապոնի Միջերկրական ծովը իրաւամբ կարելի  
է անւանել աշխարհիս ամենագեղեցիկ վայրերից մէ-  
կը։ Արդէն իր անունը ցոյց է տալիս, որ ամեն կող-  
մից շըշապատւած է ցամաքով, միայն մի քանի նեղ  
նեղուցներով միանալով բաց ծովի հետ։

Նա զետեղւած է երեք մեծ կղզիների մէջ, ո-  
րոնք են՝ Նիպպոն, Կիու-Սիու և Սիկոկի. ինքն էլ  
ծածկւած հազարաւոր աւելի սանը կղզեակներով:  
Ծովի ամենամեծ լայնը հազիւ է հասնում 40 անգ-  
լիական մղոնի՝ Բունգո նեղուցի դիմաց, իսկ միւս  
մասերում՝ բնդհանրապէս 8 մղոնից աւելի չէ:

Տեղ-տեղ անցըը այնքան նեղ է, որ իրար հանդիպող շողենաւերը հազիւ են անցնում։ Նաւը շարունակ լողում է կղզիների մի ամբողջ ցանցի միջով, մերթ մանրիկ, մերթ քիչ աւելի մեծ կղզիների, երբեմն հարուստ բուսականութեան մէջ թաղւած, երբեմն նկարչական մերկ ժայռերով ծածկւած։ բայց միշտ էլ քմահաճ ու կենսուլցախ, միշտ տաճարներով պսակւած և ձկնորսների ցրիւ խճճիթները ափին։

*W* *h* *s* *b* *r* *u* *r* *u* *u* *u* *v* *a* *o* *d*.



Բացառիկ կերպով թափանցիկ օդը տալիս է տեսաբանի եղերագծերին մասնաւորապէս պարզ ու փափուկ մի շեշտ:

Մշտական անդորրութիւնն ու հանգիստը թագաւորում են այդ ծովի վրա: Տեղի չունեն այնտեղ փոթորիկն ու մըրիկը: Զրերի կապոյտ մակերեսին ուրախ ու անփոյթ սլանում են սպիտակ ջօնկիրը:

Սրանք երբեմն այնքան մեծ բազմութեամբ են հաւաքւում գիշերները ձկան որսի, որ նրանց ճրագները լոյսի մի անընդհատ երիզ են կազմում մեր ճամփի երկու կողմից. կարծես մի հսկայական լուսավոռութիւն լինի՝ մեր շողենաւի մուտքը տօնելու համար:

Միջերկրական ծովի հետ կապւած են անթիւ առասպելներ, որոնք բոլորն էլ պատկանում են ճապանական գիցարանութեան նախնական շրջանին: Աւանդութիւնը բանաստեղծօրէն պատմում է, թէ ինչպէս իզանագի ու Իզանամի աստւածները, երկնքի շարժական կամուրջի վրա կանգնած, ցած են խրում ջրի մէջ իրանց աղամանդի նիզակը ու խառնում, մինչև որ հեղուկը պնդանում է նիզակի ծայրին: Նիզակը քաշում են ետ, իսկ նրա ծայրից կաթող պնդացած հեղուկից գոյանում են կղզիները: Դրանցից մէկն է ահա զեղեցիկ Ավաշի կղզին, ուր և առաջին անգամ ոտք են դնում ձապոնի արարիչ այդ երկու աստւածները:

մա չ ուրսու զր թեմանի խորոշի թեման  
ու քար ուրսու առաջաւուն\*\* միջներուցիւն վեհան


Երկու օրից յետոյ հասանք Կօրէ: Առաջանց Ա  
Դա մի բոլորովին եւրոպական քաղաք է ճապո-  
նական Հիօգօ'ին կից:

Մենք այստեղ մնալու չէինք, և անմիջապէս ան-  
ցանք կայարան, ուր առաջին մեզ հանդիպող մարդը  
մի ոստիկան եղաւ՝ ամբողջապէս սպիտակ հազած, որ  
իսկոյն պահանջեց մեր ճապոնական անցագրերը: Այդ  
անցագիրը անհրաժեշտ է ամեն եւրոպացու, որ կա-  
մենում է ներքին զաւառները ոտք դնել: Տօմսակ զը-  
նելիս՝ նոյնպէս հարցըին այդ անցագիրը:

Դեռ բաւական ժամանակ կար մեր գնացըին:  
Ուզեցի ելնել հարթակը, չը թողին: Ստիպւած էի  
բաւականանալու կայարանի պատուհանով: Գնացը-  
ները անընդհատ գնում էին ու զալիս: Ճարժումը մեծ  
էր: Ճապոնացին ճամփորդութիւն սիրում է: Վագոն-  
ները լի էին բերնէ բերան:

Երբ հերթը վերջապէս մեզ հասաւ, սրահի գռնե-  
րը լայն բաց արին ու մենք խուռն բազմութեամբ  
դուրս թափւեցինք հարթակը. մեր առաջը փակած  
էր վանդակով. ուղեղըների համար մի նեղ անցք կար  
միայն, ուր կանգնած էր կօնդուկտօրը և ստուգում  
էր տոմսակները:

Ամենքը խոնւում են դէպի այդ մուտքը, հրում,  
սեղմում, մինչ որ վերջապէս դուրս են զալիս վա-



դօնների առաջ եղած ազատ տեղը, բոլորովին ու-  
ժասպառ ու ժմրուտած:

Ուղին նեղ զիծ է, վագօնները փոքր, նստարան-  
ները պատի տակ:

Գնացքը կայարանից դուրս սողաց թէ չէ, մեր  
առաջ բացւեց ծովը իր բոլոր գեղեցկութեամբ և հե-  
ռուն կանդնած շոգենաւերով:

Հետզհետէ այդ կապոյտ շերտը սկսեց նեղանալ,  
հեռանալ, մինչև որ խսպառ կորաւ աչքից: Առջև  
փուած էր այժմ լայն դաշտը, ամբողջապէս ծածկ-  
ւած բընձի կանաչ տունկով: Արդէն ծանօթ տեսա-  
րան: Նոյն ջրով ծածկւած մարգերը, նոյն բան-  
տորները մինչև ծունկը ջրի մէջ աշխատելիս: Զը-  
կային միայն առուները իրանց կարկաչով, որ այն-  
քան կենդանութիւն էին տալիս տեսարանին: Տեղը  
բոլորովին հարթ էր և ջուրը բաշում էին հորից մի  
ահազին անիւով, որ զբակից աստիճաններ ունէր, որոնց  
վրա շարունակ քայլեր էր փոխում մի բանւոր, կարծես-  
րարձրանալու համար, և այդ Սիզիֆեան աշխատան-  
քով շարժեցնում էր անիւր:

Յանկարծ այս բոլորին փոխանակեց մի երկար  
ցանկապատ, ծածկւած ահազին յայտարարութիւններով, ուր վիթխարի հասակով մի ջենտմէն իր գա-  
րեջուրն էր առաջարկում՝ Օսակա beer: Ահա և ինքը  
գործարանը, որ ծխի մի սկ ամպ էր տարածում եր-  
կաթուղու հէնց գծի կից:

Օսական գործարանական մի մեծ քաղաք է և

Ճապոնի արդիւնագործական ամենայայտնի կենտրոն-ներից մէկը: Դրան վկայ՝ քաղաքի գլխին ցցւած ան-համար ծխնելոյզների բազմութիւնը:


Կայարաններում բուֆետ չկայ. գնացքներն էլ զուրկ են ճաշարան-վագօնից, այնպէս որ պէտք է քաղցրած մայինք, եթէ նախապէս հետներս ուտելիք վերցրած չը լինէինք, հետևելով բարի մարդկանց խորհուրդին:

Ճապոնացիք իրանց ուտելիքը գնում են կայա-րանի հարթակի վրա ձեռքի ծախողներից, մեծ մա-սով եփած բըինձ կամ ձուկ, որ դրած է լինում փայտէ բարակ շերտերից շինած փոքրիկ ու սիրուն տփերի մէջ, հետն էլ երկու նուրբ փայտիկ՝ բըինձ ուտելու համար:

Հարթակի վրա կարելի է գնել նաև թէյ, որ ծա-խում են ամանն էլ հետը: Վաճառողը մի ձեռքում բոնած ունի ահազին լիքը թէյի ամանը, իսկ միւս ձեռ-քում տախտակի վրա շարած մանրիկ սիրուն թէյա-մանները, որոնց մէջ, ծախելիս, ածում է թէյը, ծած-կում սիրուն մի գաւաթիկով և հրամցնում է ձեզ: Այդ ըոլոր պատմութիւնը արժէ Յ կոպէկ, ամանները հետը հաշւած: Յաջորդ կայարանում դուք կարող եք ձեր դատարկ թէյամանը փոխանակել մի լեցունի հետ, Յ կոպէկ վերադիր վճարով:

Թէյից ոչ պակաս վաճառում է սառուցը: Ճա-պոնացիք առնում են ու գնում իրանց բաժակի ջրի մէջ և ջուրը խմելուց յէտոյ այնպէս ախորժակով

Բ Ռ Վ Զ Ի Պ Ա Ջ Ը



կրծում են սառուցը պակսիմատի պէս, որ մարդ ակամայ նախանձում է նրանց ատամներին:

Այդ ձեռքին ծախողները բազմաթիւ են, վազ են տալիս հարթակի երկայնքով, մէկը միաժց առաջը կտրելով, գլուխները ներս են կոխում վագոնի պատուհանից, կանչելով իրանց հնչուն ձայնով։ Մէկը պոռում է. «ի կորի-կորի» (սառուց). նրա ետևից լը-րագիր ծախողը—«շեմնայ, շեմնայ»։ «Զա, չա», (թէյ), աղաղակում է երրորդը։ Եւ բոլորը վագում են իրար անցած, արագ ու աղմկելով։ Բայց այդուեղ էլ զուրս է ցայտում նրանց դէպի ներդաշնակութիւնն ու գեղեցկութիւնն ունեցած հակումը։ Իրար չեն ընդհատում երբէք, չեն պոռում բոլորը միասին, այլ կանչում են իրար ետևից, այնպէս որ ինքնօրինակ մի եղանակ է ստացւում, որ ոչ բոլորովին զուրկ է գրաւչութիւնից։

Վագօնում իսկոյն որոշում են եւրոպացիք, որոնք յայտնի են իրանց դէպի կինն ունեցած թեթև ու անզուսպ վերաբերմունքով, մանաւանդ այստեղ, մտածելով, որ եւրոպացուն ամեն ինչ թոյլատրելի է Արևելքում։ Յաճախ նրանք ներս են խուժում վագօն կիսահարբած, խօսում են բարձր ու հրհում, ու մարդ ակամայ իր փեշերը հաւաքելով կրթւած եւրոպացու կողքից կուշ է գալիս դէպի անկիրթ ասիացին, որ հանգիստ ու զգաստ նստած է իր տեղը, ոչ հայեացրով, ոչ էլ խօսքով որևէ մէկին նեղացնելով։

**ՀԻՆ ՃԱՊՈՆ**

## ՀԵՂԻ ՃԱՐԱԿՈՆ


Մի քանի վայրկեանից յետոյ մտնելու էինք սըր բազան կիօտօն, ձապոնի հին սրբավայրերից մինը ու միկաղուի նախկին մայրաքաղաքը:

Եւրոպայի միավետներից ոչ մէկի հարստութիւնը  
չունի ան հնութիւնը, ինչ որ միկադոյինն է:

Նա իր նախորդների ծագումը անընդհատ գծով հասցնում է մինչև աստιածները. Նրա անմիջական նախամայրը Ամատերասուն է, արևի աստιածուհին, որ ինքն էլ ծնւած է ձապոնի արարիչ Իզանագիի ձափառք:

Միկաղօնելի, ինչպէս և ընդհանրապէս ձապոնի վաւերական պատմութիւնը սկսում է հինգերորդ դարից Քրիստոսից ետոյ։

Սկզբներում միկաղօն էլի բաւական մատչելի է եղած ժողովրդին. բայց ժամանակի ընթացքում քիչ-քիչ զըստապատել է իրան փառահեղութեամբն ու ծէսերով, և քաշւել է բոլոր աշխարհական գործերից. Հազիւ էր պատահում, որ ժողովրդին երեար և այն ժամանակ ամենքն ընկնում էին զետին երեսնի-



վայր, չը համարձակւելով աշք ձգել նրա աստւածային երեսին:

«Մեր կայսրները, —ասում է ճապոնացի մի պատմագիր, —անցնում էին իրանց կեանքը ծածկոյթի ետև. նրանց ոտքը երբէք հողին չէր դիպում: Դրսի ոչ մի ձայն չէր հասնում նրանց ականջին ու չէր վրդովում նրանց հանգիստը»:

Միկադոյի այդպիսի առանձնացման շնորհիւ սկսեց ուժեղանալ դայմիօսների ազգեցութիւնը. այդպէս էին կոչում Ճապոնի աւատական իշխանները, որոնք բացարձակ անկախութեամբ կառավարում էին միկադոյից աւատ ստացած իրանց հողը: Ապրում էին նրանք իրանց ամուր բերդերի մէջ, անընդհատ կռւիւ էին մզում իրար հետ, քարուքանդ անելով երկիրը: Սյդ անվերջ կռիւների մէջ հետզհետէ ուժեղացաւ հօրիտօմօի ցեղը, որ բոլոր միւս դայմիօսներին յաղթելով ստիպում է ճանաչել իր վերին իշխանութիւնը և այսպէս էլ հիմք է դնում սիօգունի (զօրավար) իշխանութեանը: Նա իր բնակութիւնը նախ հաստատում է Կամակուրայում, վերջն էլ նէզօ, և դառնում է Ճապոնի իսկական բացարձակ տէրը:

Միկադօն ստիպում է եղածի հետ հաշտւել. իր կորցրած ոյժը ետ խլելու փորձը բոլորովին անաջող է անցնում. բայց և այնպէս սիօգունը շարունակում է որոշ օրերին ներկայանալ միկադոյին, նըրան երկրպագելու համար: Այսպիսով առաջանում է հոգեսոր և աշխարհական իշխանութեան բաժանումը,


որ և տեսեց 12-րդ դարից սկսած մինչև ժամանել  
վերջին յեղաշրջումը 1868-ին:

Սիօգունը թէև ուժեղ էր իր զէնքի զօրութեամբ,  
բայց հաստատ չէր նրա դիրքը. մի ուըիշ զօրեղա-  
ցած դայմիօսը խլում էր նրա ձեռքից իշխանութիւ-  
նը և բոնում էր նրա տեղը: Մինչդեռ միկադօն թէև  
արտաքուստ անզօր, բայց դարէ դար իր աստա-  
ծային իշխանութեան մի ինչ-որ առանձին հրապոյրի  
մէջն էր պահում երկիրը իր կիօտոյի պալատի ոսկի-  
բանտից:

\* \*

Դայմիօսների իշխանութեանը ենթակայ էին սա-  
մուրայները, այսինքն ազնւականները. նրանցից յե-  
տոյ գալիս էին ազգաբնակութեան մնացած մասերը՝  
երկրագործները, արհեստաւորները և վաճառական-  
ները: Վաճառականը ամենաստորին աստիճանն էր  
կազմում ձապոնի ազգաբնակութեան մէջ, մինչև ան-  
գամ երկրագործներից էլ ստոր: Դա խիստ ընորոշ է  
ձապոնի նման մի խսկական ոազմիկ ազգի համար և  
մինոյն ժամանակ բացատրում է, թէ ինչու եւրոպա-  
ցիք շարունակ զանգատում են ձապոն առետրակա-  
նի անբարեխղութեան վրա: Դարեւը ստորացումը  
անշուշտ խորին դրոշմ պիտի դրած լինէր նրա բնա-  
տորութեան վրա:

Յ Ա Մ Ո Ւ Ր Ա Ց Ւ Բ Ր Ը



Հետաքրքրական է յիշել, որ նրանց ցեղակից ու դրացի շինացիք բոլորովին հակառակ են. վաճառականները միշտ համարւում են ամենաազգեցիկ դասակարգ. մինչդեռ զինւորականները մինչև այժմ ետին տեղն են բոնում:

Դասակարգերի բաժանումը շատ խիստ էր ձապոնում: Զինք կրելը միայն սամուրայներին էր թոյլ տրում: Կրում էին երկու սուր, որ խրում էին գօտկի մէջ: Նրանք ընդհանրապէս մեծ արտօնութիւններ էին վայելում: Օրինակ՝ մինոյն յանցանքի համար տարբեր աստիճանի պատիժներ էին նշանակւած սամուրայի և ստորին դասից մէկի համար:

Ամենախիստ էտիկետ – ձեականութիւն էր պահպանում տարբեր դասակարգերի յարաբերութեանց ժամանակ: Քաղաքացիք սամուրային հանդիպելիս փուռում էին գետին երեսի վրա, նոյն կերպով էր բարեկում պաշտօնեան իր մեծաւորին, ինչպէս և դայմիօսը միկադօյին ներկայանալիս:

Դայմիօսները անձնական սուրհանդակներ ունեին, որոնք տանում բերում էին նրանց նամակները. այդ սուրհանդակների մերկ մարմինները ծածկւած էին դաճած գունաւոր նկարներով: Մինոյն ժամանակ սովորութիւն էր, որ տօն օրերին նրանք իրար նւէր էին բերում զանազան գեղարվեստական առարկաներ. դրա համար ամեն դայմիօսը իր պալատում պահում էր մի արևեստագէտ, որ իր բոլոր ջանքը գործ էր զնում գեղեցիկ իրեր հնարելու և ուրիշներից այդ բանի մէջ

գերազանց լինելու համար. պարզ է, որ այդ հանգամանքը ճապոնական արևեստի զարգացմանը շատ է նպաստել:

Փէօդօլական կարգերի անկման հետ արևեստագէտները զրկւեցին իրանց խրախուսող մեկենասներից և հետզհետէ զառնում են սոսկ արհեստաւորներ։

\* \*

Կիօտօն ընդհանուր ճապոնական տիպ ունի,  
միայն աւելի մեծ չափերով։


Փողոցները քիչ աւելի լայն են. տներն աւելի գեղեցիկ և կեանքն էլ աւելի եռուն։ Աջ ու ձախ արագ սլանում է էլեքտրական տրամվայը. հեռախօսի թելերի խիտ ցանցը վագում է ամեն ուղղութեամբ. ու ամեն կողմ տիրում է էլեքտրական լուսաւորութիւնը. Եւրոպական կառք զըեթէ չկայ. Փողոցներում վազ են տալիս ջինըիկիշամները։

Քաղաքի կենդրոնումն էինք արդէն, երբ հանդիպեցինք մի գեղեցիկ միաձի կառքի, որի առջևից վազում էին երկու արագավազ սպասաւորներ ի պատիւ կառքում նստած բարձրաստիճան անձնաւորութեան։

— Աւագ քահանայապետն է, — բացատրեց ինձ ջինը։

Դա իմ տեսած միակ կառքն էր։

Շուտով հասանք Ճա-Ամյ հիւրանոցը, որ մեզ



Ճ Ա Պ Ո Ն Ի Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Դ Ա Կ Ը

յանձնարարել էին նրա բարձր դիքքի համար: Հիւ-  
րանոցը կառուցւած էր Մարու-Եամայի (լեռ. Մարու)  
լանջին, որտեղից մի սքանչելի տեսարան է բացւում  
ամբողջ քաղաքի վրա, սկսելով կանաչի մէջ կորած  
մօտակայ տաճարներից մինչև հեռաւոր պագողները:

Դէպի պատշգամբ տանող երկար սանդուխով ան-  
ընդհատ բարձրանում էին անգլուհիները, բոլորն էլ  
սպիտակ հագած և բոլորը զւարթ կատակ անելով  
իրանց զենտլմէնների հետ: Նախաճաշի ժամն էր, և  
ամենը շտապում էին պատշգամբ, ուր սեղաններ  
էին բացւած և ուր մեղմ ճօճում՝ էր պանկերը,  
կարծես այցելուներին վեր կանչելով:

Տօթ օր էր:

Ուղեկիցներս գնացին քիչ հանգստանալու:  
Իսկ ես հանգիստ մնալ չեի կարողանում: Ինչ  
որ խորհրդաւոր ու անորոշ ձայներ էին հասնում ինձ  
զրացի սրբավայրերից ու անդիմադրելի կերպով քա-  
շում էին դէպի իրանք:

Իշայ փողոց:

Մուտքի դէմը կանգնած էին ջինըիկիշաները:  
Դրանք օրերով մնում են այդտեղ իրանց յատկացրած  
ծածկի տակ, ուշադիր հետևում դուրս ելնողներին և  
անմիջապէս ձայն են տալիս այն ջինըիկիշային, որ  
երոպացուն առաջին անգամ բերել է:

Երեալուս պէս մօտ վագեց իմ ջինըիկիշաս:

Նա զարմացաւ, երբ ես գլխով բացասական նը-  
շան արի և քայլերս ուղղեցի դէպի քաղաք: Այն ժա-

մանակ իր կառքը քշեց ծածկի տակ և հետևեց ինձ նախ բաւական հեռուից, յետոյ աւելի ու աւելի մօտենալով, մինչև որ վերջապէս սկսեց քայլել կողքից։ Մի առ ժամանակ զալիս էր հետո, առանց մի խօսք ասելու. ինձ մեծ գլարճութիւն էր պատճառում այդ բորիկ ջենտլմէնիս ընկերութիւնը։

— Տեսէլ էր մեծ զանգը, — դարձաւ նա ինձ վերջապէս՝ լայն ժամանակ երեսին, տեսնելով, որ ես ոչ մի դժգոհութիւն չեմ ցոյց տալիս դէպի ինքը։ — Ոչ, — պատասխանեցի։

— Գնանք, ես ձեզ ցոյց կը տամ։

Մենք շեղւեցինք ճամփից և դիմեցինք նորից լերան կողմը։

Մի երկար ծառուղի տանում էր դէպի 2իօ-ինի ընդարձակ վանքը։ Վանքի մօտ, առանձին մի հարթ բարձրութեան վրա, կախւած էր մեծ զանգը մի գոգաւոր ծածկի տակ։

Մեր զանգից նրա ունեցած զլխաւոր տարբերութիւնն այն էր, որ ձայն հանողը նրա միջից կախւած լեզւակը չէր, այլ մի երկար ձող, որ դրսից կախ էր ընկած զանգի մօտ՝ պառկած դիրքով։

Այդ զանգը ամենամեծն է ձապոնում և մեծ յարգանք է վայելում։ Բարձրութիւնը 10. ստնաշափ է, տրամագիծը — 9-ը։ Ասում են, որ հրաշալի հնչիւն ունի։ Տաճարներից քշերը միայն զանգ ունին. զանգը նւիրական է համարում և ուխտազնացութեան առարկայ է։

Քայլերս ուղղեցի դէպի տաճարը։ Chuda, իմ հոգածու ջինրիկիշաս որտեղից որ է կօշիկներիս համար մի զոյդ կտաւէ շապիկ ճարեց, որով ես կարողացայ մտնել տաճարը առանց կօշիկներս հանելու։

Տաճարի ներսը փայտէ վանդակով բաժանւած է երկու հաւասար կէսերի։ Խորքում երևում էր մի քանի սեղան, ուր կանգնած էին երկար արձաններ տեսքով շատ նման ըրիստոնէականներին։ Նըանցից ամենահետաքրքրականը Ամիդայի արձանն էր, իր ամբողջ հասակով ձիգ կանգնած, բարի ու մեղմ դիմագծերով ու ձեռքերը այնպէս բռնած, կարծես օրհնելիս լինէր։ Նա յաւերժական ու գաղափարական լոյսի մարմարումն է։

Միջին, ամենամեծ սեղանի առջև կախւած էր ոսկի ծոպերով մի ամպհովանի, որի տակը դարսւած էին զանազան զարդեր, յղկած արկղներ, տուփեր. սրանց մէջ պահուում են սրբազան ձեռագիրները։

Փայտէ վանդակի միւս կողմը ծունկ էր չոքած մի բօնզա (բահանայ) և ձեռքի փոքրիկ փայտով խփում էր անդադար կաշէ բարձին, կըկնելով շարունակ միննոյն խօսքերը. «ամնա, ամնա, այդա, այդա»։ Խօսքերը մնում էին նոյնը, բայց ձայնի ելեէջը փոխում էր անընդհատ. մերթ բարձրանում էր, մերթ իջնում, բայց երբէք դադար չէր առնում։ Դրան մօտ նստած էին մի քանի ուրիշ Յօնզաներ, իրանց ազօթքը արդէն վերջացրած։

Նըանցից մէկը ինձ տոմսակ տւեց 5 ցենտով (կոպէկ), վանքի սրբազան սենեակները դիտելու համար:

2իօ-ինը բուղդիստ ժօդո կոչւող աղանդի պըլխաւոր վանքն է: Այդ աղանդի հիմագիրը Ենկօ-Դայշի էր, որ 13-րդ դարում քարողեց «փրկութեան վարդապետութեան» իր նոր ըմբռնումը, որով հաւատացողի համար ճամփայ էր բացւում դէպի ջինջ աշխարհ, դէպի երկինքը, ուր բազմած է Ամիդան: Այդ տեղից էլ աղանդը կոչւեց Փօդօ (Pure Zano):

Ինձ հետ միասին մտան մի քանի ճապոնացի ճամփորդներ, որոնց նոյնպէս հետաքրքրել էր այդ սրբատեղին:

Մեզ դիմաւորեց մի ուրիշ բօնզա, որ վերցնելով մեր տոմսակները՝ առաջնորդեց մեզ դէպի միջանցքը, որ մի շըշան էր կազմում, պարփակելով բագը: Միջանցքի մի կողմը մի անընդհատ թղթէ պատ էր, որի ետեր բազն էր, իսկ արտաքին կողմից անվերջ շարւած էին սենեակները:

Բաց դռնից երևում էր ամբողջ սենեակը, յատակին մաքուր խսիր, պատերին արագիլներ կամ մի որսէ սաղարթախիտ ծառ նկարած: Բօնզան կանչում էր ամեն մէկի մուտքի դիմաց և սկսում իր հոետորական ձիգ շեշտերով ճապոներէն ճառը, ցոյց տալով սենեակի ներսը:

Այդ ճառը բացատրում էր սենեակի պատմութիւնը. թէ ինչպէս այս մէկը սրբազործւած է մի-



Բ Օ Ն Զ Ա

կադօյի այցելութեամբը, միւսում քահանայ էր ձեռ-  
նազրւել արքայորդին. երրորդը մի սուրբի խուցն էր  
եղած և այլն: Վերջն էլ պատմում էր երկար, թէ որ  
արւեստագէտի գործն է այդ սենեակի զարդերն ու  
նկարները:

Ինձ ընկերակցող ճապոնացիները կուանում, նա-  
յում էին ուշի-ուշով խորհրդաւոր սենեակի խորը և  
երկիւղած լուութիւն էին պահում: Մենք անդադար  
առաջ էինք շարժւում և անվերջ անցնում մէկ սենեա-  
կից միւսը: Իմ համբերութիւնս արդէն հատնելու վրա  
էր. արդէն յոգնել էի այդ դատարկ սենեակների զբո-  
ների առաջ կատարած մեր անվերջ այցելութիւննե-  
րից, երբ յանկարծ բազին նայող թղթէ պատի ե-  
տեից ականջիս հասաւ մի ամբողջ խմբերդի ներդաշ-  
նակ ու ալիքաւոր ելեէցը, որ խիստ յիշեցնում էր  
մեր եկեղեցական երգեցողութիւնը:

Ես հազիւ էի զսպում հետաքրքրութիւնս. ձեռ-  
քերս ակամայ դէպի թղթէ պատն էի պարզում մի  
փոքրիկ ծակ բաց անելու համար: Բայց յանկարծ  
երգը լոեց, և ես շտապեցի բօնզայի ետևից:

Հասել էինք լաբիրինտի ծայրը: Բօնզան և ու-  
ղեկիցներս դուրս ելան արդէն. ես էլ ուզում էի հե-  
տեել նրանց, երբ նորից հնչեց խմբերդը, արդէն  
շատ աւելի մօտիկից: Եւ տեսայ, թէ ինչպէս մի ներ-  
քին դռնից դուրս եկաւ մի ամբողջ թափոր: Երկար  
շարքերով գալիս էին վանականները իմ կողմը, ձեռ-  
քերը աղօթքի համար միացրած, մտասոյզ դէմքերով

ու գերեզմանական խորհրդաւորութեամբ։ Հասան ինձ ու անցան առջևից իրանց յուղարկաւոր մեղմ երգեցութեամբը. անցան ու մտան մօտակայ մեծ դահլիճը, ուր կարգով ու հանգիստ նստուեցին ծալապատիկ իրար կողքին շարւած փոքրիկ սեղանների առջեւ։

Երգը լուեց։ Կարծես մի աներեսյթ հրամանով բոլորն էլ հանեցին իսկոյն իրանց գօտիներից մի-մի հովհար և սկսեցին դէմքերին հով տալ։ Եւ մի առժամանակ ամբողջ դահլիճում լաւում էր միայն մի քանի տասնեակ հովհարների այդ խշրտուքը։ Այդ ամենը այն աստիճան մի թատրոնի տպաւորութիւն էր անում, որ ես քիչ աւելի մօտ գնացի և յենւեցի դահլիճը նայող գանդակին։ Ինձ վրա ոչ մի ուշադրութիւն—այնտեղ կայի, թէ ոչ։

Կողմնակի մի դռնով շուտով դահլիճ մտաւ մի բօնզա և ամբողջ խմբի առջևից անցաւ իր տեղը, նոյնպէս մի փոքրիկ սեղանի առաջ։ Եւ լսեցի իրար խփող փայտերի յատակ ու կանոնաւոր բաղխումը—կարծես չափ էին տալիս։

Թողին հովհարները։ Բոլորը մէկանց, մէկ մարդու պէս վեր ցատկեցին հաւատացեալների խորին մի յափշտակութեամբ, ձեռքերը պարզեցին դէպի երկինք, մինչդեռ բահանան ծունկ չորեց։ Յետոյ ընդհակառակը բոլորն էլ փուեցին գետին ամբողջ մարմնով, միայն ձեռքի մատները տարօրինակ կերպով վերև դարձրած, ու մնացին անշարժ ու գետնատա-

բած, մինչդեռ բօնզան ոտքի ելաւ ու պարզեց ձեռքերը ջերմեռանդութեամբ դէպի երկինքը։ Հնչում էր շարունակ նոյն երգի նոյն եղանակը, մերժ քահանայի, մերժ խմբի բերանից։ Նրանք պաղատագին ու յափշտակութեամբ կրկնում էին անդադար իրանց մեծ աստծոյ, Ամիզայի անունը, որի մեծագիր արձանիը գթառատ հայեացրով ցած էր նայում խորանից։ Նրա ոտների տակ էր մի բանի ծաղիկ ու մի երկու մոմ։

Վանականների տարօրինակ զգեստը աւելի էր սաստկացնում բեմական տպաւորութիւնը։

Նախ կարծես մուրացկանի հաղուստ լինէր, գոյնզգոյն կարկատաններով։ բայց քանի նայում էի՝ այնքան զեղեցիկ էր զառնում ու անսովոր։

Սպիտակ երկար շապկի վրայից գցած էր մի սկ թափանցիկ կտոր. սրա վրայով էլ ուսընդանութ կոչկած էր զեղին կրկնոց։

Այս բոլորը սեի, սպիտակի ու դեղինի մի խառնուրդ էր առաջացնում։

Այն ինչ բօնզայի ու ամբողջ խմբի յաջորդական ու կանոնաւոր երկրպագութիւնները չէին դադարում, նոյնպէս ևնրանց սրտաբուղիս ջերմազօթքն ու կանչերը։

Ես ինձ էլեքտրացած, հիպնոզացած էի զգում ձայնի ու շարժումների այդ միակերպ ու միապաղադ ելնէցից. այդտեղ կար և ծովի ալիքների ընթացքը, և կեանքի հոսանքի յարատես ու յաջորդական անխուսափելիութիւնը, և մարմնացումը մարդկային անզօր

ճիգի, որ ստեղծագործութեան գաղտնիքի խորքն է ուղում թափանցել:

Բայց կրկին լսեց փայտիկների բաղխումը, և ամբողջ խումբը միասին նստեց նորից նախկին տեղերը փոքրիկ սեղանների առաջ ու վերցրեց հովհարները:

Փայտիկների բաղխումին յաջորդեց մի ուրիշ ձայն, որ առաջանում էր մի կաշէ բարձի վրա տեղացող զարկերից: Ու հնչեց նոյն մեղեղին, որ մի քիչ առաջ լսել էի թղթէ պատի ետևից, «ամսա, ամսա, այդա, այդա»:

Ամբողջ խումբը դարձեալ ոտքի ելաւ ու՝ վերջին անգամ ձեռքերը պարզելով դէպի Ամիդան, երկար շարժւեց դէպի դուռը:

Ճիշտ մուտքի առաջը դրւած էր մի վիշապի կերպարանք: Առաջին վանականները անցան նրա վրայով. իսկ յաջորդները կողքից:

Երկար ժապաւէնի նման ձգում էր այդ շարքը միջանցքի երկարութեամբ, ձեռքերը միշտ աղօթատարած իրար կցած ու սաղմոսը շըթունքին. «ամսա, ամսա, այդա, այդա»:

Մի ակնթարթ միայն կանգ առան. երգը աւելի ուժեղ հնչեց, բայց իսկոյն սկսեց հետզհետէ թուլանալ, մեղմանալ ու հանգչել նրանց հեռացող բայլերի հետ:

\*\*

Ժօղոյի աղանդը բուդղիստ բազմաթիւ աղանդներից մէկն է: Բուդղայի կրօնը ձապոն է մտել վեցերորդ դարում և մեծ աղղեցութիւն է ունեցել երկրի կուտուրական կեանքի վրա: Բուդղիստներ են եղած երիտասարդութեան դաստիարակը. նրանք էին, որ բժշկութիւն բերին ձապոն, նպաստեցին արւեստների զարգացմանը և ընդհանրապէս մեծ դեր խաղացին ժողովրդի մտաւոր և հասարակական կեանքում:

Նոյն իսկ միկադօներ են եղած, որոնք՝ հրաժարւելով իրանց իշխանութիւնից ու փառքից և չը նայելով իրանց աստւածային ծագման, ցանկացել են բուդղիստ վանական դառնալ: Բուդղիզմը իր նախնական մաքուր ձեռվը չէր, որ մտաւ ձապոն, այլ ենթարկւած շինական ու կօրէական զիտնականների մեկնութիւններին: Յայտնի է, որ բուդղիզմը մեծ ճկունութիւն ունի և ընդունակութիւն տեղական բարքերին ու պայմաններին յարմարւելու: ձապոնում էլ նա, ի հարկէ, նոր փոփոխութիւններ է կրում և իւրացնում է տեղական շինտօ կրօնից շատ գծեր և նոյն իսկ նրա աստւածները:

Ձապոնի բուդղիստ բազմաթիւ աղանդները անվերջ վիճում են աստւածաբանական նրբութիւնների մասին: Նրանց վարդապետութիւններն ու տարբերութիւնները ընդհանրապէս շատ դժւար են հասկացւում, զուցէ այն պատճառով, որ նրանց կար-

ծիրով բարձրագոյն ճշմարտութիւնները մատչելի են միայն սրբութեան գերագոյն աստիճանին հասնողների համար:

Բուղդհիստները բացասաբար են վերաբերում կեանքին: Կեանքը ինքնին մի չարիք է, և այդ չարիքը առաջանում է մեր կըրերից ու տղիտութիւնից: Փրկւելու համար պէտք է թափ տանք մեզանից զգայարանների շղթան և ճանաչենք գոյութեան ունայնութիւնը, ուրիշ խօսքերով՝ դառնանք «բուղդհա», որ ասել է «զարթնած»:

Այդ «բուղդհա» վիճակին, այսինքն աստւածութեանը կարող է հասնել ամեն մարդ, եթէ իր հոգու մի քանի մարմնափոխութիւնների ընթացքում արգար կեանք վարի և ծանր, ծանր քայլերով առաջ շարժիք սրբութեան համփով:

Բուղդհիստ տաճարների պատին յաճախ նկարւած են լինում երեք սրբազն կապիկներ: Դրանցից մէկը իր թաթով խցկում է բերանը, երկրորդը ականջները, իսկ երրորդն էլ աշքերը. այսինքն նրանք ուզում են մսալ համը, խուլ ու կոյը դէպի շրջապատող աշխարհը: Ուրիշ խօսքով, բուղդհիզմի բնորոշ գիծն է երկրայինից խուսափելը և կեանքն արհամարհելը:

Բարեբաղդաբար ճապոնացին ընականից խիստ կենսուրախ է և երբէք չէ կարողացել այդ՝ կեանք սառեցնող յունետեսութեանը ամբողջովին ենթարկւել: Ճապոնացու պէս հեշտ մահան դէմ զնացող չկայ. բայց միենոյն ժամանակ ոչ ոք այնպէս ուրախ սրբ-

տով չի փարում կեանքին, ինչպէս ճապոնացին, նոյն իսկ կեանքի բոլոր զրկանքների ժամանակ: Այս բանի մէջ նրան շատ է օգնում այն հաւատը, թէ նրա բաժին ընկած բոլոր դժբաղդութիւնները հետևանք են իր նախորդ կեանքի մէջ գործած մեղքերի: Եւ եթէ իր կեանքի այս ձեափոխութեան մէջ քափի իր մեղքը, իր հոգու յաջորդ ձեափոխութիւնները աւելի երջանիկ կը լինեն:

Այսպիսով ճապոնացին առնում է բուղդհիզմից այն, ինչ որ ուրախութիւն և ոյժ է առլիս կեանքին, բաց թողնելով նրա յունետեսութիւնը:

Այս տեսակէտից խիստ յուզիչու բնորոշ է ճապոն սիրահարների հոգեբանութիւնը: Եթէ չեն յաջողում ամուսնանալու, նրանք մեղադրում են ոչ թէ իրանց ծնողներին ու հանգամանքները, այլ միայն իրանց, որ նախորդ կեանքում երեկի խանգարած են եղնել ամուսնական սրբութիւնը, կամ մի որեւէ այլ կերպ մեղանչել են իրար դէմ: Այլ և հաւատում են, որ միասին մեռնելուց յետոյ նրանք վերածնելու են մի այլ ամելի երջանիկ կեանքում, ուր կը միանան իրար հետ: Եւ մեռնելիս թողնում են սովորաբար յայտնի ձեւնեցող մի նամակ, ուր խնդրում են իրանց թաղել միասին: Եւ այս թաղումը կատարւում է ընդհանրապէս մեծ շուքով:

Եւ առհասարակ մարմնափոխութեան հաւատը շատ է մեղմացնում մահան մեծ վիշտը. այսպէս, գերատի մայրը կորցնելով երեխային՝ միսիթարւում

Է այն մտքով, որ նա նորից իրան է վերադառնալու մահան խաւարից մի նոր մարմնով։ Երեխայի թաթի մէջ նա զրում է նրա անւան սկզբնատառը և նոր երեխայ ունենալիս, որոնում է իր զրած խորհրդաւոր նշանը նրա ափի մէջ և անպայման հաւատում է, որ իր մեռած երեխայի հոգին է վերադարձել իրան, իր մայրական սիրտը սփոփելու համար։ (Lafcadio Hearn)։

Հասարակ ժողովուրդը հաւատում է նոյն իսկ կենդանիների հոգեվոխութեանը։ Դիւղացին իր եզր թաղելու ժամանակ չերմ աղօթքներ է ուղղում աստւածներին, որ նրա յաջորդ կեանքը այնքան էլ ծանր չը լինի։

Նա հաւատում է, որ մինչև անգամ անշունչ առարկաները երկար գոյութիւնից յետոյ ընդունակ են հոգի ստանալու։

Այս բոլորի մէջ արտացոլում է ճապոնացու քնքոյշ սէրը դէպի իր շրջապատը և դէպի ամեն բան, ինչ ապրում է։ Դա վերին աստիճանի հասցրած մարդկայնացում է, ուր չկայ մարդու այն գոռող, յաճախ կոսիտ մեծամտութիւնը, թէ ինքն է միայն կանգնած տիեզերքի կենդրոնում, և թէ մնացած ամեն-ինչ միայն իր համար է ստեղծւած։

## Կ Ի Օ Տ Օ

Արեկի տակ երկար թափառելուց սաստիկ ցաւում էր զլուխս։

Հիւրանոցում հրաժարեցի ընդհանուր ընթրիքից պատշպամբում, որովհետև անզլիական սովորութեամբ բոլոր կանայք ներկայանալու են զուգւած դեկուէով, ինչպէս և տղամարդիկ՝ ֆրակով։ Սնկողնիս շղարշէ ծածկոցը հրաւիրում էր ինձ հանգստանալու իր հովանու տակ օրւայ տպաւորութիւններից և մոծակների խայթերից, որոնցով վիստում է գեղեցիկ ձապոնը։

Այդ վայրկեանին էր, որ բաղխեցին դուռս։

— Մտէք։

Մեմի վրա երեաց ճապոնացու կերպարանքը, թևի տակ մի կապոց սեղմած, ու դեռ գուռը բոլորովին չը փակած, սկսեց իր բարեները։ Վերջը մի քայլ առաջ գալով մեկնեց ինձ իր քարտը, որտեղից իմացայ, թէ նա զանազան հազւագիւտ առարկաների վաճառական է։ Վաճառականը հէնց այնտեղ էլ բաց արեց իր կապոցը, ուր խիտ իրար կից դարսւած

Էին փոքրիկ արկղիկներ, թէյամաններ ու պնակներ  
և ուրիշ այս տեսակ իրեր:

Այս բոլորը դուրս հանեց նա հանգիստ ու ան-  
վրդով, շարեց կարգով յատակի վրա ու վերջն էլ  
դաշտաւ դէպի ինձ հարցական նայւածքով:

Բայց հէնց արդ վայրկեանին կրկին լսեցի, որ  
դուռս ծեծեցին:

—Մտէք,—գոչեցի ես, զարմանալով, թէ սա ով  
է լինելու:

Դրանը երևաց մի նոր կերպարանք, իս նոր կա-  
պոցով, որ դեռ հեռուից ինձ էր մեկնում իր  
քարտը: Նա էլ ներս մտաւ. և հաղիւ էր իր կապոցը  
ցած դրել, որ նորից դուռը բաղխեցին: Եւ այսպէս  
շարունակաբար: Մէկ այցելուի ետևից փակւում էր  
դուռը իսկոյն յաջորդի առաջ բացւելու համար:

Շուտով սենեակս լցւեց վաճառականներով, իսկ  
սենեակիս յատակը նրանց մանրիկ ապրանքներովը:  
Ի պատիւ նրանց պէտք է ասեմ, որ նրանք չէին աշ-  
խատում ապրանքը անպատճառ վկիս փաթաթել:  
Ցոյց տալով ինձ իրանց արկղիկները, թողնելով մօ-  
տըս իրանց քարտերը, նրանք մէկը միւսի ետևից  
չքացան սենեակիցս, անձայն ու հանդարտ, ինչպէս  
որ եկել էին:

\*\*\*

Սուաւոտը վաղ պարտք համարեցի իմ նախորդ

երեկոյեան այցելուներիս վիզիտը վերադարձնելու:  
Արդէն ինձ շատ էին հետաքրքրել նրանց սիրուն մի-  
նիօն իրերը:

Խանութում ճապոնացին պատկառանքով դիմա-  
ւորում էր ինձ ժպիտն երեսին ու խնդրում, որ սան-  
դուխով բարձրանամ վերև: Այնտեղ ցուցադրւած էին  
նրա ապրանքները:

Շատ գեղեցիկ կտորներ կային դրանց մէջ, մե-  
տաքսով, ու ոսկէ թելով բանած, փափուկ ու նուրբ,  
գոյներն էլ չափազանց մեղմ ու քնքոյշ, իսկ գործ-  
ւածքը ուղղակի հրաշալի:

Ինձ մի մեծ անկողնի ծածկոց ցոյց տւին, որի  
վրա ասեղնազործած էր ծով: Այնտեղ ալիքների ծո-  
ցում բարձրանում էր միայնակ ժայռը, որի վրա փա-  
ռահեղ բազմած էր արծիւը: Իսկ որ գեղարւեստա-  
կան մի ստեղծագործութիւն էր դա: Հեռուից հնար  
չկար ենթադրելու, որ դա ոչ թէ նկարւած, այլ ա-  
սեղնազործած է:

Ճապոնացին ոչ աչքն է ինայում, ոչ էլ չանք  
այդ տեսակ մանրակրկիտ աշխատանքի համար: Դա է  
պատճառը անշուշտ, որ ես ոչ մի տեղ այնքան շատ  
ակնոցաւոր չեմ տեսել, ինչպէս ծապոնում:

Մանւածքների վաճառականի մօտից ես ընկայ  
հազւադիւտ իրեր ծախողի խանութը: Նա նորից շա-  
րեց առջևս իր բըօնզէ ու կլուազօնէ իրերը և սկսեց  
բացատրութիւններ տալ: Հէնց այդտեղ իսկ դուք  
տեսնում էր կլուազօնի պատրաստութեան ամբողջ

բարդ ու մանր աշխատանքը։ Մարդ ուղղակի հիանում է խանութպահների թէ ձեզ և թէ իրար հետ ունեցած սիրալիր վարմունքից։ Ոչ մի կոպիտ խօսք չի հասնիլ ձեր ականջին, ու ձեր աշքերը կը աեսնեն միայն գւարթ դէմքեր։ Չեր բոլոր ցանկութիւնները կատարում են։ Մի տեսակ իրանք են ներողութիւն խնդրում, եթէ ձեր պահանջած զիջումը չեն կարող անել և ստիպւած են մերժելու։

\* \* \*

Կանգնած սպասում էի տըամնային, էլեքտրաքարշին։

Նա դուրս ոլացաւ յանկարծ մօտակայ փողոցից։ Կօնդուկտօրը յամառ նայում էր առաջ, իր տեղը կանգնած, ակնոցը ըթին, որ նրա առանց այն էլ կենդրոնացած դէմքին մի ինչ-որ պլօֆէսօրական արտայայտութիւն էր տալիս։

Նստեցի։

Տրամւայում ծանօթութիւնը հեշտ է կապւում։

— Օհայօ, օհայօ (բարե), — լսում է երկու կողմիցդ, և ուրախ ժպիտներ դիմաւորում են քեզ, հէնց որ ներս ես մոնում։

Եւ սկսում է խօսակցութիւն, ուրախ ու ծիծաղկոտ, և զրաւում ու միացնում է բոլոր ուղևորներին, Հարեանդ, կամ մանաւանդ հարևանուհիդ, որ ի հար-

կէ աւեի աչքի է ընկնում իր հետաքրքրութեամբ, խաբւելով քո արտասահած մի քանի ճապոներէն խօսքերից, անվերջ հարցեր է թափում զլսիդ, թէ ով ես, որտեղից և ինչ բանի ես։

Ես մեծ ճիդ էի գործ զնում մի կերպ տակից դուրս պըծնելու. տալիս էի հիւրանոցիս անունը, արտասահնում էի իրար ետևից իմ անցած քաղաքների շարքը և զանազան շեշտերով կրկնում էի ճապոնացու սովորական բացականչութիւնը. «սօու-դեսկա, սօու-դեսկա» գերմաներէն եօ-ի պէս մի բան, որով, նայած տրտասանութեանդ եղանակին, արտայայտում է թէ ուրախութիւն, թէ վիշտ, թէ զարմանք, թէ հարց ու թէ ամեն բան։

Բայց իմ սխալ շեշտադրութիւնս, հարցի ու բացականչութեանս մէջ եղած յաճախ անհամաձայնութիւնը ամբողջ հասարակութեանը մեծ զւարճութիւն էր պատճառում։

Այնպէս որ հին բարեկամներ էինք արդէն, երբ ոտքի ելայ իջնելու համար. խոր ու խոր բարեներով անշատեցինք միմեանցից։

Ճապոնացու պարզութիւնն ու սրտաբացութիւնը մի մասնաւոր հրապոյը է տալիս նրան։ Ես գոնէ մի անշափ վստահութիւն ունէի միշտ դէպի նրանք։ Մի նոր քաղաք համելիս անփոյթ ընկնում էի փողոցները մեն-մենակ, և երբէք չեմ զգացած շփոթութիւն կամ երկիւզ, ինչ որ շատ յաճախ զգում է կինը եւ-րոպական մի նոր քաղաքում։ Ես բացարձակ կերպով

համոզւած էի, որ այդտեղ ինձ ոչ ոք չի վիրաւորի,  
այլ ընդհակառակը՝ պատահած դէպքում ամեն մի  
անցորդ պաշտպան կը կանգնի:

Սխալում էի գուցէ, ինչպէս հիմա ասում է ինձ  
իմ գատողութիւնս, բայց գլխաւորն այն է, որ այն-  
տեղ նրանք ինձ կարողացել էին ներշնչել այդ վըս-  
տահութիւնը:

Ճապոնում ես ինձ երբէք օտար չեմ զգացել.  
մարդ կարծես կորցնում է այնտեղ ծանօթի ու ան-  
ծանօթի գաղափարը, այն աստիճան բաց ու սիրա-  
լիք է այն ժպիտը, որով ամեն կողմից դիմաւորում են  
քեզ մանկական պարզամտութեամբ:

Երբէք և ոչ մի տեղ ես այնպէս խոր չեմ զգա-  
ցել սիրոյ և եղբայրութեան զգացումը դէպի ինձ  
շրջապատղները, ինչպէս ճապոնում: Այդ աստիճան  
կախարդիչ է ճապոնացու ժպիտը:

\* \* \*

Անհաշիւ են տաճարները—պագողաները սրբա-  
զան Կիոտոյում: Նա ամբողջովին շրջապատւած է այդ  
սրբավայրերով, որոնք կառուցւած են քաղաքի ամե-  
նաբարձր դիրքերի վրա:

Քաղաքի երկու հակառակ ծայրերին բարձրա-  
նում է մի-մի հինգյարկանի պագողա Խէսակա և Տօ-  
շի: Նեղ սանդուխը տանում է քեզ վեր, մինչև զա-

զաթը, որտեղից հրաշալի տեսարան է բացւում ամ-  
բողջ քաղաքի վրա:

Յայտնի է շատ Սանջու-սան-գենդօ տաճարը, ուր  
կանգնած են իրար կողքին գթութեան աստւածու-  
նու, Կւաննօնի ՅՅ, ՅՅՅ արձանները:

Մէջտեղում բազմած է իր գահին աստւածու-  
նու ամենախոշոր արձանը, իսկ նրա երկու կողմից  
խիտ շարքերով կանգնած են նոյն աստւածութեան  
աւելի փոքր մարմացումները:

Կւաննօն այնտեղ «հազարաձեռն» տիտղոս է կը-  
րում, թէև իրօք 40 ձեռք ունի միայն:

Իր այդ 40 ձեռքերում բոնած է բուղդհայական  
նշանները, էմբլեմները՝ լոտոսի ծաղիկը, օրէնքի ա-  
նիւր, արևն ու լուսին և այլն: Նա կարծես իր ձեռ-  
քերը պարզում է ամեն կողմ, աշխարհի բոլոր կա-  
րոտեալներին. միայն երկուսը բոնած է կրծքին ա-  
ղօթքի համար: Մի խիստ յուզիչ աւանդութիւն պատ-  
մում է, թէ նա մերժել է նիրւանա մտնելը՝ միշտ  
մարդկանց հետ մնալու ու նրանց օգնութեան ձեռք  
մեկնելու համար: Ճարունակ քաշած վարագոյրների  
շնորհիւ մշտական աղջամուզ է տիրում արձանների  
այդ սրահում և մի առանձին խորհրդաւորութիւն  
է տալիս աստւածների այդ ժողովին:

Հետաքրքիր է նոյնպէս Բուղդհայի փայտակերտ  
հսկայ արձանը, Դայ-Բուտսու, այսինքն Մեծ Բուղ-  
դհա, որ գտնում է Կւաննօնի տաճարին կից: Արձա-  
նը ներկայացնում է միայն Բուղդհայի զլուխն ու ու-

սերը և համնում է մօտ վախսուն ոտնաշափ բարձրութեան:

Երկու կողմից սանդուխը տանում է նրա զլսի ետեղ, ուր խորան է շինւած:

Բոլոր տաճարներից աւելի ես Դիօնը սիրեցի, ուր և յաճախ գնում էի: Մըրատեղիի չորս կողմից գեղեցիկ սրբազն դռները (տօրի) տանում էին ներս: Դիօնը բաղկացած է իրար դէմ կառուցւած մի շարք շէնքերից: Հրապարակի մէջտեղում գեղեցիկ ծածկի տակ գետեղւած էին սրբութիւնները, որ մի քանի օրից յետոյ պէտք է տանէին ամբողջ քաղաքը թափու տալու:

Ինը բուն տաճարը մեծ չէ. աղօթողները ներս չեն մտնում: Առաջակողմի վանդակի մօտ դրած էր մի մեծ զանձանակ, ուր փող էին ձգում: Այդ փողը սովորական գործածական դրամը չէ. դրանք կլոր փոքրիկ մետաղի կտորներ են, մէջտեղում քառակուսի ծակովը, և գործ են ածւում միայն կրօնական նվիրաբերութիւնների համար:

Ես սիրում էի երկար կանգնել ու դիտել եկող-գնացողներին, տաճարի պատին թեթեակի յենւած: Անց ու դարձ անողների թիւը շատ մեծ էր:

Ահա մի շինտո քահանայ զլսից ցոտ սպիտակ հագած, նրա ետեկից՝ շինականներ իրանց մեծ սընկածե զլսարկներով, և կամ զարդարուն մի քաղաքացի՝ հովանոցն ուսին: Նրանք մէկը միւսի ետեկից մօտենում են տաճարի վանդակին, իրանց լուման զցում



գանձանակը ու պինդ-պինդ քաշում զանգի թելը, որ  
կախ է ընկած տաճարի կտրից զանձանակի գլխին։  
Զանգը մի խուզ հնչին է հանում։ Աղօթողը երեք  
անգամ ծափ է տալիս, կարծես աստծոյ ուշադրու-  
թիւնը իր վրա գրաւելու համար, և սկսում է փսփր-  
սալ իր աղօթքը, ձեռքերը իրար շփելով։ Նորից մի  
զանգ, Յ հատ ծափ, —և ճապոնացին, վերցնելով պա-  
տին թինդ տւած հովանոցը, գնում է իր ճամփով։

Տաճարի մօտ մի այլ շինքում կարելի է տեսնել  
քրմուհու պարը։

Բօնզան դանդաղ զարկերով թմբկահարում է իր  
առաջը զրւած մեծ թմբուկը։ Քրմուհին ամբողջովին  
սպիտակ հազած պտըտում է հանդարտ ու սահուն  
շարժւածքով, դէմքի սառն ու անվրդով արտայա-  
տութեամբ։ Վերջապէս դնում է ձեռքերը ճակատին  
ու քարանում, որից յետոյ բերում-տալիս է ձեզ իր  
թալիսմանը։ Պա մի ոստիկ է սրբազն ծառից, և  
փաթաթւած է սրբազն բառերը գրոտած մի թղթի  
մէջ։

Այդ պարը, որ կազուրա է կոչւում, փոխարե-  
քական, սիմբօլիկ նշանակութիւն ունի, որի հետ  
կապւած է հետևեալ բանաստեղծական աւանդութիւ-  
նը։ Արևի աստւածուհին, Ամատերասու, վիրաւորւած  
իր չար եղբայր Սուլանօից, որ լուսին է, քաշում է  
մի քարայր, ամբողջ աշխարհը խորին խաւարի մէջ  
թողնելով։ Բոլոր աստւածներն ու աստւածուհիները,  
խմբւած այրի մուտքի դէմ, պաղատում են, որ դուրս

գայ, բայց նա խուլ է մնում ու անհաջոտ։ Այն ժամանակ պատւածները դիմում են խորամանկութեան։ սկսում են նկագել ու պարել։ Ամատերասու շի համբերում ու դրսվու դուքս է հանում հետաքրքրութիւնից։ Աստւածները ճարպիկ շարժումով մի հայելի են դնում նրա առաջ, և մինչդեռ նա զմայլում է ինքն իր դէմքով, միւսները արագ խցկում են քարայրի մուտքը։ Այդպիսով նա նորից մնում է դուրս և լոյս է տալիս բոլորին։

Իսկ հայելին ու պարը դառնում են այդ օրից տաճարներում մի սիմբոլ, մի նշան ի յիշատակ այդ դէպիք։

\*\*\*

Ճապոնական Ոլիմպոսում աստւածները շատ են։ Դրանցից արդէն յիշել եմ Իզանագի ու Իզանամի, ուրոնցից առաջացած է Ճապոնում ամեն կեանք ունեցող բան, Ամատերասու, որ միկադոյի նախամայրն է, Ամիդա, որ գաղափարական ու յաւիտենական լոյսի աստւածն է և Բուդհայի մարմնացումներից մէկը և որի անունը պէտք է յիշել միւս աշխարհն անցնելիս, Կւաննօն, զիթութեան աստւածուհին, և Ժիզօ, որ երեխաների, յղի կանանց ու ճամփորդների հովանաւորն է ու պաշտպանը։

Բացի սրանցից պէտք է յիշել և հետևեալները.

Փուղո, իմաստութեան աստւածը, ողեղութեան ճաճանչներով շրջանակւած, մի ձեռքին հատու սուր՝ կրքի ողիների հետ կուելու համար, և միւսում պարան, այս կրքերն ու ցանկութիւնները շղթայելու համար։ Յետոյ գալիս են բաղդատորութեան եօթն աստւածները, որոնք են՝ Երիսու—աշխատասիրութիւն, Դայկօկու, — հարստութիւն, Բենտեն—ընտանիք և պրտղաբերութիւն, Փուկուցոկուժու—երկարակեցութիւն, Ժիրուժին—տաղանդ, Յօտեյ—բարեկեցութիւն, Բիգժամին—փառք։

Հետարբեիր են նոյնպէս որոտի և քամու աստւածները։ Վերջինս քամիներով լիքը տոպլակը դրած է շալակին ու պինդ պահում է բերանը, իսկ որոտի աստւածը պղնձի ձողերով խփում է պղնձի թըմբուկներին։ Երկուսի դէմքն էլ սարսափելի է, մի հագւագիւտ երեոյթ, քանի որ ճապոնական աստւածները խիստ բարի ու մեղմ դէմք ունեն ընդհանրապէս։

Իսկ շար դկերին ներկայացնում են պողերով, գզզգւած մօրուքով, որ իհարկէ միայն երեխաներին է վախեցնում։

Որքան էլ բազմաթիւ լինեն այդ աստւածները, անկարելի է ճապոնացիներին կոպիտ հեթանոս համարել։ Այդ աստւածների արձանները իմ վրաս ճիշտ նոյն տպաւորութիւնն էին անում, ինչ որ Աստւածածնի ու սրբերի արձանները կաթոլիկ եկեղեցիներում։ Դրանք նոյն սիմբօլիներն են և ոչ կուռք։ Սրանք էլ նոյնպէս կանգնեցրած են տաճարների պատերի

մէջ և յաճախ նոյնպէս զարդարւած նոյն լուսապսակ-  
ներով:

\* \*

Ճապոնի հասարակ ժողովուրդը շատ է սիրում  
ուխտ գնալ իր սրբավայրերին:

Գիւղերում բազմաթիւ կրօնական ընկերութիւններ  
կան, որոնց անդամները որոշ վճար են տալիս. դաշ-  
տային աշխատանքից ազատ եղած ժամանակ նրանք  
ամեն տարի այդ փողով ուղարկում են իրանց միջից  
ընտրած մի խումբ, սրբավայրերն այցելելու համար:

Ճապոնացին ոտով շրջել շատ է սիրում, և այդ  
ճամփորդութիւնը թանգ չէ նստում նրան: Բացի զը-  
րանից կան և յարմարութիւններ: Ամեն աւանում ուխ-  
տաւորների համար կայ մի յատուկ պանդոկ, ուր  
նրանք միայն վառելիքի վճարն են տալիս իրանց  
կերակուրը եփելու համար:

Այս թափառումների շարժառիթը յաճախ միայն  
կրօնական չէ. նրանք գնում են աշխարհ տեսնելու, ի-  
րանց հայրենիքի հետ մօտիկից ծանօթանալու և իրանց  
սրբազն տաճարները նայելու նպատակով, քանի որ  
տաճարները միևնույն ժամանակ զեղարւեստի ու հազ-  
ւագիւտ իրերի թանգարաններ են ներկայացնում:

Նրանք նոյնպէս շատ են սիրում ուխտ գնալ  
բարձր սարերը, մանաւանդ իրանց սիրած սրբազն



Ո Ի Խ Տ Ա Ի Ո Ր Ը

Փուշի, ուր բարձրացողների թիւը 10—15 հազարի  
է հասնում ամեն տարի։ Այդ Փուշին մի մասնաւոր  
սէր ու յարգանք է վայելում և զարմանալի նման է  
մեր Փոքր Մասիսին։

\* \* \*

Հասաւ ժողովրդական Մատսուրի կոչւած տօնի  
օրը։

Թմբուկի անընդհատ զարկը վաղ առաւօտից ոչ  
որի հանգիստ չէր տալիս։

Ես իջայ քաղաք իմ հաւատարիմ չին Զիւդաի հետ։  
Բոլոր տների պատերը բաց էին, և այնտեղ, ինչպէս  
օթեակներում, բազմած էին զեղեցիկ ճապոնուհինե-  
րը։ Յանկարծ գէպի ինձ վագեց եւրոպական տարա-  
գով զուգւած մի ճապոնացի երիտասարդ և առա-  
ջարկեց ինձ անգլիերէն, որ երթանք իր մի ծանօթի  
տունը, որի առջևից անցնելու էր թափորը։

Նախ ուզում էի հրաժարել, այնքան անսպասե-  
լի էր այդ առաջարկը, բայց իմ Զիւդաի յանդիմանող  
հայեացքը զգացըեց ինձ, որ ես իզուր էի անվստա-  
հութեամբ վերաբերում այդպիսի սիրալիք ու պարզ  
հիւրասիրութեանք։ Ես յօժարւեցի, ու մենք միասին  
առաջ շարժւեցինք իստ բազմութիւնը ճեղքելով,  
մինչեւ որ երիտասարդը կանգ առաւ մի փոքրիկ տը-  
նակի առաջ։

—Խնդրեմ սպասեցէք մի վայրկեան,—ասաց նա խորհրդաւոր ձայնով.—գնամ տանտիրոջը յայտնեմ ձեր գալը:

Եւ իսկոյն էլ վերադարձաւ ու ինձ վեր հրավիրեց:

—Միայն խնդրեմ, հանէք կօշիկներդ,—յիշեցրեց ինձ սեմի վրա:

Ես հնազանդեցի ու գուղպաներով ոտք դրի ձիւնի պէս մաքուր խսիրի վրա: Ներս մտայ թէ չէ, մի հայեցք ձգեցի շուրջս, տեսայ, որ գտնւում եմ մի ընդարձակ սենեակում, լիբը հիւրերով:

Ինձ աթոռ բերին: Բայց ես իմ մասնաւոր յարգանքը ցոյց տալու համար հրաժարեցի ու նստեցի նրանց նման փոքրիկ կաշւէ բարձի վրա:

Իմ կաւալէրս ամեն ճիգ գործ էր դնում եւրոպացի լինելու. շարունակ գնում, գալիս էր ու ամեն անգամ նստելով կողքիս ներողութիւն էր խնդրում ու հարցնում, արդեօք իր սիգարը ինձ չի խանգարում: Վերջը, չը գիտեմ ինչու, յանկարծ սկսեց պատմել թէ առ այժմ առետրական է, թէև իր միակ փափազն է անպատճառ անցնել Ամերիկա մի քիչ աշխարհ տեսնելու:

Այդ խօսակցութեան միջոցին մտաւ տանտէրը, մի վայելչահասակ գեղեցիկ ճապոնացի:

Մենք փոխադարձ տւինք մեր բարեները, այսինքն ձեռները դրած մեր ծնկներին՝ խոր գլուխ տրւինք միմեանց:

Նախ նա յայտնեց իր զերմ ուրախութիւնը, որ

ես պատւել եմ իր տունը իմ այցելութեամբ, յետոյ հարցը ազգութիւնս, և երբ իմացաւ, թէ հայ եմ, խիստ զարմացած աչքերը չոեց ու հարցը վարանումով.

«Այն հայերից, որոնք շարունակ թուրքերի դէմ կուռմ են»:

Հիմա էլ զարմանալու հերթը իմս էր:

—Ախ, միթէ դուք լսել էք հայերի մասին:

—Ինչպէս չէ. յիշում եմ մի քանի տարի առաջ կոտորածներ կային, եթէ չեմ սխալում: Այստեղ մի ինչ որ միսիօնար փող էր հաւաքում ձեզ ուղարկելու համար: Հիմա ինչ վիճակի մէջ է ձեր երկիրը:

Ես նայում էի նրա երեսին ու չը գիտէի, ինչ պատասխանեմ, ուրախանամ թէ տիսրեմ, որ մեր մեծ ցաւերի ալիքները մինչև ճապոնական կղզիներն էին հասել:

Մինչ այդ՝ ամբոխը աւելանում էր. բոլոր տների պատշգամբները ծածկած էին մարդկային գլուխներով: Ահազին բազմութիւն էր եկել շըշակայ գիւղերից: Գեղջկուհիները զուգւել էին, զարդարւել, որ ետ չը մնան քաղքուհիներից: Ամեն կողմ կարծես գօտիների ցուցահանդէս լինէր. բոլորն էլ մըցում էին իրանց գօտիների կտորներով ու գեղեցկութեամբ:

Փողոցում տղայրը ծախում էին կայանալիք թափորի կոպիտ զոյներով նկարւած պատկերը: Իսկ թափորը ինքը ուշանում էր: Բոլորը լարւած ուշադ-


ըռովթեամբ նայում էին դէպի այն անկիւնը՝ որտեղից  
դալու էր:

Վերջապէս երևաց առաջին կառքը վրան երկ-  
յարկանի մի շէնքով, գրեթէ մի տան մեծութեամբ:  
Վերեփ յարկում տեղաւորւած էին երաժիշտները ու  
նւազում էին անդադար իրանց տարօրինակ գործիք-  
ներով մեր քայլերգի նման մի ինչ-որ եղանակ: Գոր-  
ծիքը պարզապէս մի մետաղի պնակ էր, որի եզեր-  
քին խիում էին նոյնպէս մետաղի բարակ ձողերով,  
ու առաջցնում մի մեղմ ու արծաթի հնչիւն ունե-  
ցող ելեէց: Երաժիշտների առաջ կանգնած էր մի  
տղայ ճերմակեցրած դէմքով ու փայլուն թագը գըլ-  
իխն. ասացին, որ դա մի աստւածութիւն էր ներ-  
կայացնում:

Կառքը դանդաղ առաջ էր շարժւում. նրան բա-  
շում էին երկար հաստ թոկերով մի քանի շարք մար-  
դիկ: Տարօրինակ էր տեսնելը, թէ ինչպէս նրանք  
դանդաղ ու միակերպ կռանում ու ճիզ էին անում,  
բոլորն էլ շարքով պինդ կպած իրանց պարանին: Իսկ  
կառքի ներքեփ յարկում կանգնած էին երկու կառա-  
պան, լայն բացած հովհարնելը ձեռներին: Նրանք  
անդադար թեքում էին մի աջ, մի ձախ, հովհար-  
ները ճօճելով օդի մէջ մերթ դանդաղ, մերթ արագ,  
և հետն էլ երգում էին միակերպ մի երդ, կարծես  
իրանց կառքը բաշող բազմամբոխ լուծը քաշալերե-  
լու համար:

Դժւար տեղերում կամ կառքը անկիւնից ծռե-

ւ ս ս ս ս ս ր ւ



լիս նրանց օգնութեամբ էին վեր ցատկում ուրիշ հրկու հոգի էլ, նոյնպէս հովհարներով զինւած, և չորսը միասին աւելի եռանդուն կերպով շարժում էին իրանց իրաններն ու հովհարները, ու խումբն էլ ցածում աւելի եռանդուն կերպով ձգում էր իր պարանը:

Առաջին կառքին հետեւցին բազմաթիւ զարդարուն պատզարակներ զանազան այլաբանական իրերով ու սըբութիւններով. մէկի մէջ մի փոքրիկ տնակ ու մի գեղջկուհու խրտիլակ, միւսի մէջ մի ինչ որ աստւած, և այսպէս անընդհատ: Ետեւից զալիս էր մի նաւ անիւների վրա դրւած, մէջը նորից երաժիշտներ, այնուհետև մի խումբ նաւաստիներ նաւապետի առաջնորդութեամբ:

Սրանով էլ վերջացաւ թափօրը, որը՝ որչափ հասկանալ կարողացայ, ամառւայ ու պազաբերութեան յաղթանակն էր ուզում ներկայացնել:

արից ըստ մատինաց դժի միջ զիսանի ամբ զիսանու այլ  
զայն ամ, ուստի խաղաղութեան ու համառ ոչ ուրու-  
թի ամեն նուայուց խոյս մասքան դժառ մասքան  
այլ և մասքան առ զայն ամբ ամառ զիսա-  
նու այլ ոչ նուայ խոյս մասքան գրաւ նուն

### ԿԻՕՏՈՆ ԳԻՇԵՐԸ

արակ ամ նուայ ամպայ մազու մազուն

**Կիօտոն մեծ կենդանութիւն** է ստանում գիշերը:  
Փողոցի երկու կողմից վառում են գոյնզգոյն թղթէ  
մեծ լապտերներ, խանութները լցում են լոյսով,  
խսկ փողոցները կեանքով:

Բազմութիւնը հոսում է առաջ. ոչ մի աղաղակ,  
ոչ մի հայրոյանք, ոչ մի կոպիտ ձայն այդ հազար-  
գլխանի զանգւածի մէջ. Ոչ հարբածի կը հանդիպես  
այդտեղ, ոչ էլ իրանց պահել չը գիտցող անձերի:  
Օղի մէջ լսում է փայտէ կօշիկների ամուր թրիկո-  
ցը: Ինչ վերաբերում է կարգապահութեանն ու վայել-  
չութեանը, ճապոն ամբոխը իր նմանը չունի աշխար-  
հիս երեսին:

Փոքրիկ խանութները բառի բուն նշանակու-  
թեամբ ողողւած են էլեքտրական պայծառ լոյսով և  
յիշեցնում են պարահանդիսի քիօսկները, շուրջը  
վիստող ամբոխով: Տրոտուարից զուրկ, հարթ ու նեղ  
փողոցը, որ մի սովորական զահլիճից բոլորովին լայն  
չէ, աւելի մեծացնում է այս նմանութիւնը: Յուցադրած  
առարկաներն աւելի որոշակի աշքի են ընկնում փո-  
ղոցի համեմատական մթութեան շնորհիւ:

Հէնց որ կանգ ես առնում մի խանութի առաջ,  
զգում ես իսկոյն, որ քեզ շըշապատել են: Ետեկից  
եկողները իրանը էլ կանգ են առնում օտարականին  
մի աւելորդ անգամ ես դիտելու համար. նորերը միա-  
նում են սրանց այդ համախմբումից հետաքրքրւած,  
և շուտով տեսնում ես քեզ մի լայն շըշանակի կենտ-  
րոնում, որ խանզարում է փողոցի երթևեկու-  
թիւնը:

Զննում են լուռ ու շատ ամելի ուշադիր, քան թէ  
ցերեկը, բայց նրանց այդ զննելու եղանակը ոչ մի  
անախորժութիւն չի պատճառում. նրանց հետաքրք-  
րութիւնը ոչ կոպիտ է, ոչ էլ գրգռող, այլ միշտ  
լուռ, քաղաքավարի ու պատշաճ: Եւ հէնց որ շարժ-  
ում ես, բոլորն էլ իսկոյն նոյն հոսանքով շարժում  
են առաջ, շարունակելով իրանց զբօսանքը:

Ճապոնացին սիրում է գիշերը ուրախ անցկաց-  
նել: Մի շէնքից լսում է թմբուկի ձայնը, որ անցորդ-  
ներին ներս է կանչում ականջ զնելու թզուկի ծի-  
ծաղաշարժ երգերին, և արգէն դրսից երկում է, թէ  
ինչպէս հմայւած ամբողջ հասարակութիւնը թուլա-  
նում է ծիծաղից:

Մի այլ տեղում պարում է շնիկը և զանազան  
ֆօկուսներ անում. միւս կողմում տէրը ինքը կանգ-  
նած է լուսաւորւած սկնեակի մուտքի առաջ և ներս  
է հրաւիրում նայելու իր օձերին ու սողուններին:  
Այստեղ երգում են, այնտեղ պարում են. քիչ հեռու  
փայլվում են թատրոնի ճրագները, որտեղ ներկայ-

ացումը բնաւ չի ընդհատառում՝ ամբողջ ժամերով։  
Ճապոնական թատրոնը մեծ քառանկինի շէնք  
է։ Երկրորդ յարկում կան օթեակներ բեմի երկու<sup>1</sup>  
կողմից։ Մեզ առաջնորդեցին այնտեղ ու յատկապէտ  
մեզ համար աթոռ բերին։ Պարզ էր, որ այդ աթոռ  
ները, ինչպէս և օթեակները, մի գիշում էր Արևմուտ-  
քի ճաշակին։ Խսկական հետաքրքրականն ու բնորոշը  
ցածն էր, պարտերը, որ խսկոյն զբաւեց իմ բոլոր  
ուշաղրութիւնս։ Նախ ի հարկէ չկան նստարաններ,  
որոնք երկար անվերջ շարքերով բռնում են մեր պար-  
տերի ամբողջ լայնը։ Դրա փոխարէն ամբողջ դահ-  
լիճը կազմւած է քառակուսի փոսերից, որոնք մի-  
մեանցից բաժանելում են մի մարդու անցնելու շափ-  
նեղ ու բարձրադիր ուղիներով, այնպէս որ ամբողջ  
յատակը միասին վերևից նմանում է շահմատի տախ-  
տակին, որի քառակուսիների մէջ նստած են հանդի-  
սականները առանձին-առանձին կամ ընտանիքներով։  
Մինչդեռ ուղիների վրայով վազ են տալիս անդադար  
երեխաներ, առաջարկելով ներքել նստողներին ի-  
րանց զամբիւղի պտուղները կամ զովացուցիչ ըմպե-  
լին։ Նոյն այդ ուղիներով է, որ զերասանները ամեն  
անդամ բարձրանում են բեմ ու ելնում իրանց զերը  
պարտելուց յետոյ։

Զարմանալի պարզ ու նախնական կեանք է թա-  
գաւորում այդ թատրոնական հասարակութեան մէջ։  
Ներկայացումները տեսում են անվերջ երկար, ուրեմն  
ինչու իզուր նեղւեն։ Ճապոնացին այնտեղ իրանց բո-

լորովին տան պէս է զգում։ Նստած իր արկղում՝ նա-  
ճաշում է, խմում, ծխում ու հետեւում խաղին հան-  
գիստ ու հանդարտ։ Եթէ յոգնեցաւ բեմին ու խաղին  
նայելուց, նա անվրդով բաց է անում զբացի արկղից  
իրան բաժանող ուղին և առանց քաշուելու տա-  
րածում է իր մարմնի խոնչացած անդամները ու յա-  
ճախ էլ քնում։

Երբ աչքս քիչ վարժւեց այդ արկղների աշխար-  
հին, նայեցի վերջապէս դէպի բեմը, ուր նոյնպէս  
շատ բան կար մանկօրէն միամիտ ու տարօրինակ։  
Այսպէս օրինակ վարագոյը դէպի վեր չի բարձրա-  
նում, ոչ էլ ընդհանրապէս բացւում է, այլ նրան գո-  
ռով բաց են անում։ Ժառան բռնած նրա փէշից վա-  
գում է զլխապատառ բեմի ամբողջ լայնքովը, մինչև  
որ բոլորովին հաւաքում է։ Խակ մի քանի թատրոն-  
ներում վարագոյը բոլորովին չկայ։ Բայց այդ դէպ-  
րում բեմը շարժական է և դառնում է իր առանցքի  
վրա իր բոլոր տնակների, ծառերի ու միւս դեկո-  
րացիաների։ Հետ միասին, հանդիսականների աշքի  
առաջ։

Բեմի կողմնակի պատի տակ մի փոքրիկ բարձ-  
րութեան վրա նստած էր մի երիտասարդ ճապոնու-  
հի գիտառը ձեռքին։ Օրկեստրի գեր էր կատարում  
նա, նւազում էր ու երգում, խաղին աւելի արտա-  
յայտութիւն տալու համար։ Բնորոշ էր նոյնպէս մի  
ճապոնացու դերը, որ կանգնած էր միւս պատի տակ  
և ձեռքին բռնած երկու ծանր տախտակներ՝ խփում

էր իրար ամեն անզամ, երբ բեմի վրա մի որևէ անարդարութիւն էր կատարում, և կամ երբ դերասաններից մէկը բարկանում էր:

Մենք խաղի կիսին հասանք, որի բովանդակութիւնը հետեւալն էր: Կինը սպասում է իր բացակայամուսնուն, որ այնքան էլ երիտասարդ չէ արդէն: Այդ դրութիւնից ուզում է օգուտ քաղել մի պարոն. բայց դեռատի կինը մնում է անդրդւելի, մինչև որ ամուսինը վերադառնում է վերջապէս: Բայց, Աստւած իմ, ինչ դրութիւն. շարագործները կողոպտել էին նրան ու կուրացըել: Նա հազիւ է գտնում իր տան ճանապարհը ու ընկնում է ներս ողբ ու լացով: Կինն էլ է սուգ բարձրացնում, ու այդ տեսարանը տեսում է ամբողջ մի ժամ: Այդ կողմից ճապոնացիք արդէն խիստ են իրական, նոյն իսկ չափականց:

Մարդը խնդրում է, որ իրան տանեն տաճար, յուսալով, որ աստւածները կօգնեն ու կը բժշկի: Սրբազն վայրերի տեղը բաւական զեղեցիկ էր. ներկայացնում էր մի լեառ ու վրան մի նեղ արահետ. լեռան զագաթին շինւած էր փոքրիկ տաճար: Բեմը բաւական ժամանակ մնում է զատարկ. մինչև որ վերջապէս պարտերով անցնում ու բարձրանում է բեմը երիտասարդ կինը, իր կոյր ամուսնուն առաջնորդելով: Կոյրը ճամփին յաճախ սայթարում է, քիչ է մնում ընկնի արկղներում նստած հանդիսականների վրա, մինչդեռ բեմից անդադար ու կատաղի կերպով դղրդում են պատի տակ կանգնած ճապոնացիք տախ-

տակի հարւածները, տեսարանն անշուշտ աւելի սըրտառուչ դարձնելու համար:

Վերջապէս հասնում են տաճարին, ուր ծերը սուզում է իր ազօթքի մէջ. իսկ կինը, օգտելով ազատ ժամանակից, արագ հեռանում է: Մարդը, ազօթքը աւարտելուց յետոյ, ձայն է տալիս: Ոչ մի պատասխան: Դուրս է գալիս տաճարից, կանչում է նորից ու իր ձայնի մենակութիւնից սարսափած՝ ընկնում է սար ու ձոր, մօտենում է անդնդին, սի սխալ բայլ—ու գլորւում է ներքեւ:

Ճատ չանցած վերագանում է կինը, նա հոգեկան լաւ տրամադրութեան մէջ է, ըստ երևոյթին: Վազում է արահետով վեր, մարդուն ձայն տալով: Նորին լոռութիւն. շտապում է տաճար—ոչ ոք:

Եղածը գուշակելով՝ սարսափահար սկսում է հեկեկալ, ողբալ ու ձեռքերը կոտրատել: Տախտակների դղրդինը էլ բաւական չի համարւում նրա վիշտը շեշտելու համար, բեմի ետեւից լրտում են ճիշ, ոռնոց, հաջոց. այդ բոլորը ձուլած իրար՝ մի վայրենի ժխոր է կազմում:

Նրա սուգի միջոցին երևում է նորից գայթակղիչը և քաղցր խօսքերով գրաւել է ուզում: Տեսնելով, որ խօսքերը հերիք չեն, վճռում է ոյժի դիմել: Այն ժամանակ կինը, իր պատիւը պաշտպանելու համար, հետեւում է իր ամուսնուն և նետուում է ժայռից ցած:

Ճատ հետաքրքրական է գայտակղիչի վերջը. ա-

մեն կողմից նրա վրա են թափւում թաւամազ դևերը և քաշ են տալիս, տանում, երեխ դժոխք:

Ճապոնական դերասանի արտաքինը խիստ յիշեցնում է ինձ հին յունականը. այս տեղ էլ դերասանի գրիմից խսկոյն կարելի է որոշել նրա դերն ու բնաւորութիւնը, թէս դիմակ չկայ: Կատակերգուի բերնի անկիւնները դարձած են դէպի վեր. դէմքը գաջի պէս սպիտակ է, մի լայն ու մշտական ժպիտով:

Ողբերգուի դէմքը, ընդհակառակը, տրագիկ է միշտ, կարծես մի ողբերգական սարսափի վայրկեանին սառել է ու այդպէս մնացել:

Յունականի հետ նմանութիւնը լրացնելու համար ճապոն դերասանն էլ այնպէս ձիգ ու փայտի պէս է ման գալիս, ինչպէս ոտքին կօտուրն հագած յոյն դերասանը, իսկ խօսւածքը նոյնպէս միշտ ուռած, ճարտասանական ու միշտ անբնական մի շեշտով:

Կանանց դերերը կատարում են բացառապէս տղամարդիկ, և ճիշտն ասած՝ խիստ աջող:

Կնոջ դերը խաղացող դերասանին նայելով, բնաւչի կարելի ենթագրել, որ դա տղամարդ է. այն աստիճան կանացի են նրա ձայնն ու շարժումները: Կինը միայն վերջերս է սկսում բեմ դուրս գալ, բայց դեռ խիստ հաղւագիւտ դէպքերում: Թէս ճապոնացին շատ է սիրում իր թատրոնը, բայց դերասանի պաշտօնը յարգանք չունի նրա աշրում: Թէս ընդհանրապէս ճապոնական թատրոնը ուամկական հիմնարկութիւն է համարում. յաճախողը ամենահասարակ ժողովուրդն

է. իսկ ազնւականներն ու բարձր դիրք ունեցող անձնաւորութիւնները գնում են ծպտւած:

Վերջերս ի հարկէ սկսել է արդէն մուտք գործել և եւրոպական բեմը իր չամկետներովն ու համեսգներով: Կան արդէն յայտնի դերասաններ ու դերասանուհիներ, որոնցից մասնաւորապէս մեծ հոչակ ունի դերասանուհի Սաղօ-եակօ, որ մինչև անգամ Պարիզում մեծ աջողութիւն է ունեցել վերջին ցուցահանդիսի ժամանակ:

անգամ է շինած իրար մէջ. դրսի պատեանը քարից, իսկ ներսը փայտակերտ, այնպէս որ երկրաշարժի ժամանակ, երբ քարէ տունը թափում է, փայտակերտը մնում է անվնաս: Երկրաշարժը, ինչպէս յայտնի է, շատ սովորական երևոյթ է ծապոնում, և հինգ իրանք ճապոնական կղզիները ամբողջապէս ծնունդ են հրաբուխային ոյժի գործունէութեան:

Իօկօհամաից հեռու չէ հոչակաւոր հաշիմանի տաճարը Կամակուրայում, որտեղ կանգնած է Բուղդայի հրաշալի հսկայական բրօնզէ արձանը: Այդ տաճարում են պահւած յաղթական տրօֆէները—աւարները, որ ճապոնացիք խլել էին կօրէացիներից երրորդ դարում այն արշաւանքի ժամանակ, որ նրանք կատարել են իրանց աշխարհակալ Քինգօ-Կուր թագուհու առաջնորդութեամբ:

Մեծ Բուղդան, Դայ-Բուտաու, գտնուում է տաճարից ոչ հեռու: Առաջ նրա վրա էլ մի տաճար կար կառուցած. բայց մի երկրաշարժի ժամանակ ծովի մի լեռնադէզ ալիք սրբել է տաճարն ամբողջովին զետնի երեսից առանց Բուղդայի խորին մտածմունքը խանգարել յանդգնելու, և այդ օրւանից Բուղդան բազմած է բաց երկնքի տակ բնութեան ծոցում:

Այս արձանը պատկանում է ճապոնական արւեստի ամենանշանաւոր գործերի թվին. արդէն ճապոնացիք ընդհանրապէս շատ են յայտնի բրօնզը ձուլելու արհեստովը: Արձանի դէմքը հիացում է պատճառում իր արտայայտութեան գեղարւեստական խո-

## Ի Օ Կ Օ Հ Ա Մ Ա Տ Ա · Տ Օ Կ Ի Օ

Կիօտօից մի օրւայ ճանապարհ է մինչև Իօկօհամա:

Դեռ շատ ժամանակ չի անցել, երբ Իօկօհաման մի փոքրիկ աննշան ձկնորսական զիւղ էր:

Բայց մի յիսուն—վաթսուն տարիների ընթացքում այդ զիւղակից ծնւեց մի գեղեցիկ եւրոպական քաղաք, շնորհիւ այն հանգամանքի, որ սկզբում միայն այստեղ էր թոյլ տրւած եւրոպացիների բնակութիւնը. այնպէս որ Իօկօհաման ներկայացնում է եւրոպական քաղաքի մի կատարեալ նմուշը զուրկ այն ամենից, ինչ ճապոնական կնիք է կրում:

Ամեն բան այստեղ եկտոր է ու օտար, թէ կառքերը, թէ երթևեկող հոսանքը, ուր տիրողը եւրոպական դէմքեր են, թէ փողոցներն իրանք, ուր մարդիկուր կարօտով փնտրում է սիրունիկ կոկետ ճապոնական անակները: Ինչ որ ճապոնական է, կարծես ճնշւած, պահւած, փախած լինի դէպի քաղաքի հեռաւոր անկիւնները:

Ինձ հետաքրքրեցին շէնքերը իրանց կառուցման տարօրինակ երկուութեամբ. տունը կարծես երկու


Ղրութեամբն ու վեհութեամբը։ Այդտեղ պարզ դրոշմած է ատտածային անվրդով ու վեհափառ անդորրութիւնը, այդտեղ պարզ դրոշմած է մտքի յաղթանակը մարմնի վրա և կրքերի սպանումը կամքի ոյժով։

Մինչ գնացքը արագ սլանում էր դէպի Տօկիօ, մենք վագոնում ծանր ու բարակ կշռում էինք ու դատում, թէ չը նայելով ճապոնական կեանքի համբաւաւոր էժանութեանը՝ այնքան էլ մեղ էժան չէր նստել առաջնակարգ հիւրանոցներում մեր կենալը, իսկ երբ գնացքը մտաւ Տօկիօ, մենք արդէն վճռել էինք մի փոքրիկ սենեակ վարձել քաղաքի ծայրում. խոյս տալով մեծ հիւրանոցներից երկար հարթակով վագոններից գնում էինք դէպի կայապրահը, երբ յանկարծ կարծես գետնի տակից մեր առաջը բուսաւ մի ճապոնացի լայն յարդէ զլխարկը գլխին, յարձակեց իսկոյն մեր իրերի վրա ու քաշ տևց առանց այլ այլութեան դէպի իր փոքրիկ կառքը:

Բոլորս իրար անցանք:  
Եմ զայրացկոտ բողոքների դէմ նա լուս ու հան-  
գիստ մեկնեց ինձ մի քարտ, որի վրա փրանսերէն  
դրւած էր. «Հետևեցէր նրան, նա ձեզ կառաջնորդէ  
Emile Jiraud-ի մօտ, որ ապրում է ծովեղը մօտ,  
քաղաքի ծայրում...»

**Զեռագրի շարունակութիւնը այնքան խառնակ**

*η u g f n h s v n h*



էր ու շփոթ, որ ես ընթերցումն ընդհատեցի, ենթադրելով, որ պարոն Emile Jiraud-ն երկի իր քաղաքի ծայրում գտնուզ բնակարանի առաւելութիւններն ու յարմարութիւնները թւելիս պիտի լինի։ Այսպէս թէ այնպէս, պ. Jiraud-ի առաջարկը միաձայն ընդունեց, քանի որ կատարելապէս համապատասխանում էր մեր նախորդ վճռին։ Ճապոնացին մի galant շարժումով ցոյց տւեց ինձ իր փոքրիկ կառը. ես նստեցի, ինքը լծւեց ու շարժւեցինք առաջ, ընկերներս էլ մեր ետևից։ Նախ ամեն ինչ լաւ էր գնում, քանի որ մենք անց էինք կենում ընդարձակ լայն փողոցներով, ուր շարժում էր ամբոխը, վազում էին շիները ու զանդահարում էին տրամվայները։ Վերջը ընկանք կողմնակի փողոցներ, ուր կեանքը մեռած էր, և որոնք ոչ մի կերպ չէին ուզում վերջանալ։

— Իսկ որ խիստ խուլ անկիւնումն է ապրում այս պարոն Jiraud, — մտածեցի ես։

Իմ ուղեկիցներս մի թեթև երկիւղով նոյն իսկ ակնարկեցին, թէ մի գուցէ մեղ մի անկիւն տանեն, որտեղից այլևս դուրս դալ չը կարողանանք։ Բայց ահա յարդէ գլխարկը շուռ եկաւ յանկարծ մի վերջին անգամ էլ. մենք մտանք մի բագ ու կանդ առանք մի փոքրիկ միյարկանի տնակի առջև։ Տնակից մեղ էին նայում երկու ճապոնուհի և մի երկարահասակ ճապոնացի իր անսովոր խիտ ու սև բեխ ու միբուքի միջից։

—Ահա, վերջապէս մի ճապոնացի, որ բեխ ու  
միբուք ունի, —մտածեցի ես զարմանալով:

Մեր փոխադարձ լոիկ ուսումնասիրութիւնը տե-  
սեց մի քանի վայրկեան, մինչև որ ես սիրտ առայ-  
ու խզեցի այդ լուսթիւնը, հարցնելով, թէ խօսում է  
ֆրանսերէն:

—Mais oui, Melle, —պատասխանեց երկարաբեխ  
ճապոնացին զուտ պարիզեան արտասանութեամբ:  
—Ուրեմն, խնդրեմ, երկու սենեակ, —ասացի կառ-  
քից իջնելով:

—Բայց, pardon, Melle, իմ տունս հիւրանոց  
չէ, —պատասխանեց նա վիրաւորւած շեշտով:  
Ընդհանուք ապշութիւն:

Այն ժամանակ ցոյց տւի իրան իր քարտը:

Մարդը նայեց զարմանքով, յանկարծ ձեռք խփեց  
ճակտին ու այնպէս վարակիչ կերպով սկսեց ծիծա-  
ղել, որ մենք էլ ժամացինք ակամայ, առանց հա-  
կանալու, թէ բանն ինչումն էր:

—Այ մարդ, ես քեզ ում ետեիցն եմ ուղարկել,  
—զարձաւ նա ծառային, որ կանգնած էր մի շատ  
անյարմար զըութեան մէջ:

—Կայարան, ձեր ազգականների, —կակազեց յար-  
դէ զլսարկը:

—Եւ մինչև հիմա զու նրանց դեռ չես ճանաչում.  
Քանի անգամ տեսել ես ու բերել ինք:

Ծառան մի ոտից միւս ոտի վրա էր անցնում,  
ու վերջապէս մըթմըթաց.

—Ե՞ն, ես ինչ գիտնամ, այս բոլոր եւրոպացիք  
այնպէս նման են միմիանց:

Բանը պարզեց ընդհանուք ծիծաղով, պ. Jiraud  
մեզ ներս հրաւիրեց միասին նախաճաշելու և ծա-  
ռային նորից կայարան վազցնել տւեց:

Բանից զուրս եկաւ, որ այդ միակ երկարաբեխ  
ճապոնացին մի պարզ ֆրանսիացի էր, ֆրանսիական  
դեսպանատան ատաշէ: Բայց ինչպէս ճապոնում ապ-  
րող շատ եւրոպացիներ, նա իր կեանքն ու կենցաղը  
բոլորովին յարմարեցրել էր ճապոնականին, սկսելով  
իր արդէն իսկական ճապոնուհի կնոջից մինչև իր եր-  
կար ու յարմար ճապոնական խալաթը:

Նախաճաշից յետոյ մեր ֆրանսիացի ճապոնա-  
ցին սիրալիք կերպով մեզ ճամփայ դրեց, նախապէս  
տալով մի հիւրանոցի հասցէ: Եւ մենք մի քառորդ  
ժամ յետոյ ընկել էինք նորից մեր ճակատագրական  
առաջնակարգ հիւրանոցը:

Տօկիօ ահազին քաղաք է. մինչև հիմա իմ տեսած-  
ներից ամենամեծը: Իսկոյն մարդու ուշադրութիւնն  
են զրաւում ամեն կողմ փուած ընդարձակ պուրակները  
պարկերը: Դրանցից ամենազրաւիչը Ուէնօ կոչւած  
պարն է, ուր աճում են հրաշալի կերասենիներ: Ապրիլ  
ամսին այդ ծառերը ծածկում են իրանց քնքոյշ ու  
սպիտակ ծաղկիներովը, ու ամբողջ քաղաքը գալիս է  
հիանալու: Երեխաներին յատուկ մի օր արձակուրդ  
են տալիս ու տօն են սարքում, որ զան բնութեան  
այդ զեղեցկութիւնը վայելեն:

Խսկ բանաստեղծները հնչիւն երգեր են հիւսում  
այդ ձիւնափայլ անարատ ծաղիկը գովարանելու, որ  
ամի անարատ ամպէ, զինջ երկնքից իշած ու փա-  
թաթւած ծառի սաղարթին ու կախ ընկած նրա  
ամեն մի ճիւղից ու ոստից»:


Աւելացնեմ միայն, որ այդպէս սիրւած ու երգ-  
ւած ծառի պտուղը ճապոնացին չի ուտում:

Խսկ Շիբա—պարկը հոչակւած է իր տաճարնե-  
րով, ուր թաղւած են սիօգունները, ծապոնի նախ-  
կին աշխարհական տէրերը։ Այդ տաճարները իրաւամբ  
համարւում են ճապոնական գեղարւեստի հրաշալիքը։

Նախ պէտք է անցնես մի քանի բաղ, որոնք մի-  
անում են իրար հետ գեղեցիկ դարբասներով։ Վիշապ-  
ները գալարւում են դրանց սիւների շուրջը։ Բագից  
բագ ձգւում են երկար գալերիները, որոնց արտա-  
քին պատը ամբողջովին ծածկւած է հրաշալի պա-  
նօների (panneau) մի երկար շարքով։ Ուր էլ որ  
դարձնում ես աշքդ, ամեն տեղ հիանալի արւեստով  
փայտի վրա կատարած փորագրութիւններ, որոնք գոյ-  
նզգոյն ծաղիկների ու պէս-պէս թուչունների հրաշ-  
կերտ մի հիւսւածք են ներկայացնում։ Բագում շար-  
ւած են իրար կողք բրօնզէ ու քարէ խոշոր գեղեցիկ  
պլատերներ, որոնք դայմիունների կողմից բերւած նէր-  
ներ են համգուցեալ սիօգունի յիշատակը յարգելու  
համար։

Դարբասներից մէկի դրան ճակատին կախւած է  
«Արքայական» կոչւած տախտակը, որ միկազօի նւէրն

շ ւ ի ւ ս ս ւ ձ ւ լ



Է և որի վրա ոսկէ տառերով գրւած է հանգուցեալ  
սիօդունի անդրաշխարհիկ անունը: Ճապոնացիք խիստ  
գնահատում են գեղեցիկ գիրը, և ճիշտն ասած՝ ճա-  
պոնական գիրը շատ գեղարւեստական է: Իգուր չեն  
ասել, որ նրանք նկարում են այնպէս, ինչպէս գրում  
են, և գրում են այնպէս, ինչպէս նկարում:

Իմ հիացումս աւելի սաստկացաւ, երբ ես քա-  
թանի հողաթափները կօշիկներիս անցնելով՝ մտայ  
տաճարը: Շուրջը ամեն բան յղկւած, փորագրւած  
ու ոսկեզօծ է այն աստիճան, որ մարդու աշըրը  
շամուռմ է: Ամբողջ առաստաղը բաժանւած է քառա-  
կուաիների, յղկւած ու լակւած, իսկ ամեն մի բա-  
ռակուսիի մէջ փիւնիկ թռչունի պատկերն է: Առաստա-  
ղի տակ, պատերի վրա փորագրւած են ծաղիկների մէջ  
թռչկոտող մանրիկ թռչուններ, որոնք հիացմունք են  
պատճառում իրանց ընական ու մաքուր աշխատան  
քովը: Աւելի ցած նկարւած են առիւծներ. իսկ գետնին,  
ձիւնափայլ խսիրների վրա շարւած են գեղեցիկ,  
յղկւած փոքրիկ սեղանիկներ ու արկղիկները, որոնց  
մէջ սըբազան ձեռագիրներն են պահւում: Ոսկեփառ  
խորանը զարդարւած է նըրանկար ծաղկամաններով,  
ուր օրօրւում է լոտոսը, բուղդիստների համար մաք-  
րութեան խորհրդանշանը:

Այդ բոլոր շքեղութիւնից յետոյ մի տարօրինակ,  
գուցէ և կըթիշ հակապատկեր է ներկայացնում սիօ-  
դունի գերեզմանը, որ աշքի է ընկնում իր գեղեցիկ  
ու ազնւական պարզութեամբը:

յանցումներ և հայր Խոյեան միա այլ դպր և Հայի գլուխական քայլանութեալավայրն ամերուց  
առ Դաստ մուշք և պայտ միջերք մն Առանձնամբ  
մէջ դրու և անթառանձնարք ուստ զայր մաքանչու  
հայր սիրահայրուն ու անցութ զայր ու քայլ  
հայր սիրահայրուն ու անցութ զայր ու քայլ

## Ն Ո Ր Ճ Ա Պ Ո Ն

Տասնեիններորդ գարու սկզբին սիօգունի իշխանութիւնը արդէն բոլորովին անտանելի էր դաշճել ժողովրդի բոլոր խաւերին իր վերին աստիճանի բրոնակալ կառավարութեամբը, ուր անհատի ազատութիւնը ճնշւած էր բացարձակապէս:

Եւ բոլորի սրտերը ազատութեան յոյսով ակամայ ձգտում էին դէպի միկադո, որ մնում էր բաշւած կիոտում և որի անւան հետ կապւած էին հին դարերի բազմաթիւ աւանդութիւնները, որոնք այնքան սիրելի էին ժողովրդին:

Երկիրը սաստիկ յուզման մէջ էր Գործը աւելի ևս բարդեց, երբ ձապոնի ափերին խարիսխ ձգեց ամերիկական նաւատորմիղը Parry-ի հրամանատարութեամբ. Ամերիկացիք պահանջեցին, որ ձապոնի նաւահանգիստները բաց լինեն ամերիկեան ապրանքների համար. Այդ պահանջը սաստիկ անախորժ էր ճապոնացիներին, մանաւանդ անցեալում օտարների հետ ունեցած փորձերից յետոյ:

Սուազին եւրոպացիները պորտուգալցիք ու հոլանդացիք էին, որոնք ոտք դրին ձապոն տասնեւցե-

բորդ դարում և շատ սիրալիք ընդունելութիւն գտան: Նրանց հետքովը անմիջապէս եկան միսիօնարները, որոնք և վչացըրին ամեն ինչ: Օգտւելով իրանց առաջին աջողութիւնից, նրանք դիրք գրաւեցին, խրոխտացան, սկսեցին խառնել երկը ներքին վարչական գործերի մէջ և մեծ զժգոհութիւն զբգուեցին իրանց դէմ, որի հետևանքն եղաւ 1632-ի քրիստոնեաների ընդհանուր կոտորածն ու հալածանքը: Այդ օրից ձապոնը փակ մնաց եւրոպացիների համար. կառավարութիւնը խստիւ պատժում էր ամեն մի մարդու, որ համարձակում էր նրանց հետ յարաբերութիւն կապել կամ նրանց գրեթե կարդալ:

Եւ ահա յանկարծ այս բոլորը վերացաւ, կարծես մի կախարդական դաւազանով: Ճապոնը տեղի տևց հանգամանքների ուժի առաջ, աւելի զօրեղանալու ու յաղթող հանդիսանալու համար: Նա լաւ էր հասկանում, որ մնում էր երկուսից մէկը՝ կամ վտանգի ենթարկելով ճապոնի անկախութիւնը մնալ իր նախորդ առանձնութեան մէջ իր բոլոր առանձնայատկութիւններով, կամ օտարին չը հպատակւելու համար հիմնապէս փոխել իր ընթացքը և իւրացնել այն ամենը, ինչով ուժեղ էր այդ օտարը:

Եւ մի անգամ այդ ճամփի վրա ոտք դնելուց յետոյ, ձապոնն էլ կանգ շառաւ ու նրա քայլերը եղան զարմանալի արագ ու կտրուկ: Այդ գործում խիստ մեծ դեր է կատարել արդի միկադօն՝ Մուտաու-Հիտօ, որ, ժողովրդի լաւագոյն տարրի վրա յենած, միաց-

ըեց իր ձեռքում հոգեոր ու աշխարհական իշխանութիւնները և մէկը միւսի ետևից սկսեց իր բարեփոխութիւնները։ Նրա առաջին գործը եղաւ թողնել Կիօտօ, որտեղ նա իրան շղթայւած էր զգում՝ դարաւոր ծէսերով, և իր մայրաքաղաքը հաստատեց իեղօ (Տօկիօ), որ ծովի ափին լինելով շատ յարմարութիւն էր տալիս եւրոպացիների հետ անմիջական յարաբերութիւններ պահպանելու։

Երկրում այնքան մեծ էր շարժումը և նոր ճամփով գնալու պահանջը այնքան խիստ, որ դայմիօսներից շատերը հայրենասիրաբար հրաժարում էին իրանց սեփական իշխանութիւնից և դարաւոր իրաւունքներից յօդուտ կայսեր։ Դրանով սաստիկ հեշտանում է միկադոի գործը։ Եւ կարճ ժամանակում վերջնականապէս ընկնում են ֆէօդալական կարգերն ու դասակարգերի առանձնաշնորհները։ Այլ ևս դասակարգերի խըտրութիւն չկայ, և բոլորը հաւասար են օրէնքի առաջ։

1889-ին Ճապոնը դառնում է սահմանադրական պետութիւն։ Օրէնսդիր մարմին դառնում են երկու պալատները, իսկ գործադիր ոյժը՝ միկադօն է ու նրա ընտրած նախարարները։ Սահմանադրութիւնը յայտարարում է անձնաւորութեան և բնակարանի անձեռնմխելիութիւնը, մամուլի և ժողովների ազատութիւնը, ի հարկէ օրէնքի սահմաններում։ Դատաստանական իշխանութիւնը բաժանում է գործադիրից, և դատաւորները դառնում են անփոփոխելի։ Այսպիսով ծապոնի կառավարութիւնը նպատակ է դնում ար-

ժանի տեղ գրաւելու քաղաքակրթւած պետութիւնների շարքում և շատ կարճ ժամանակի մէջ հասնում է իր նպատակին, ցոյց տալով մի զարմանալի տոկունութիւն, եռանդ ու կենսունակութիւն։ Կեանքի ոչ մի կողմը նա բաց չէ թողնում իր աշքից, միշտ պատրաստ սկսելու նոր ձեռնարկութիւններ, չնայելով ոչ մի նիւթական միջոց երկրի տնտեսական դրութիւնը բարձրացնելու համար։

Ճապոնական ըեփօրմների ալիքները յեղաշրջեցին նոյնպէս և կրթութեան գործը, թէև, ճիշտն ասած, առաջ էլ ծապոնը մեծ ուշադրութիւն էր դարձնում ժողովրդի կրթութեան վրա։ Բոլոր դասակարգերը անխտիր ուսում էին ստանում, թէև ի հարկէ այդ ուսումը շատ տարրական էր ու գործնական ընաւորութիւն էր կրում։

Ճապոնի նախկին վարժապետը Զինաստանն է։ ամբողջ տասը դար բուդդիստ տաճարներն են եղել գրանց ուսումնարանները։ 17-րդ դարից սկսում է մի մասնաւոր սէր դէպի Կօնֆուցէի վարդապետութիւնը, մանաւանդ բարձր շրջաններում։ Ճապոնական կրթութիւնը այն յատկանիշն ունի, որ աշակերտի խելքը զարգացնելիս՝ նրանք միշտ մեծ ուշադրութիւն են դարձնում և սրտի կրթութեան վրա։ Այդ տեսակէտից ուսումնարանն ու ընտանիքը միշտ ձեռք ձեռքի են գնում։ Նրանք զարգացնում են սէր դէպի իւրայինները, դէպի հանրութիւնը, դէպի թագաւորն ու հայրենիքը։ Այժմ կառավարութիւնը ոչ մի ջանք չի խնայում

հնար եղածին չափ շուտով իւրացնելու եւրոպական կրթութեան եղանակը, և այդ պատճառով էլ արդի դպրոցական կազմը ամբողջապէս արևմտեան է։ Մեծ է մանաւանդ ամերիկացիների խաղացած դերը այդ գործում։ Այժմ ամենախուլ անկիններում կան նախնական դպրոցներ։ Եւ դպրոցը պարտադիր է ամենքի, անխտիր թէ տղայի ու թէ աղջկայ համար։ Ճապոնը անզրագէտ չունի։ Գիւղական ու քաղաքային դպրոցների հոգսը ինքը գիւղը կամ քաղաքն է քաշում։

Կրօն բնաւ չեն անցնում։ դրա փոխարէն կան բարոյագիտութեան դասեր։ Մասնաւորապէս շեշտած են բնական գիտութիւնները, որոնց անցնելու եղանակն էլ բացառիկ կերպով լաւ է ու գործնական։ շատ սովորական բան է դպրոցական այցերն ու պրտոյտները ուսուցիչների առաջնորդութեամբ իրանց հայրենիքի ու բնութեան հետ մօտիկ ծանօթանալու համար։ Դպրոցը տալիս է և երկրագործական ծանօթութիւններ, որին զոյգ է ընթանում գործնական գարժութիւնը՝ յատուկ այդ նպատակով շինւած տիպար ագարակներում։ Մարմամարզութիւնն ու ֆիզիկական խաղերը պարտագիր են բոլոր դպրոցներում և շատ են գոված։ Ընդհանրապէս դպրոցներում տիրող ոգին աւելի մտերմական է ու ընկերական։ ուսուցիչը աշակերտների վերաբերմամբ մեծ ընկերոջ դեր է խաղում։ պատիժ ասած բանը համարեա թէ չկայ։ Քաղաքներում կան ուսուցչական երկսեռ վար-

ժարաններ։ Շատ բարձր են և օրինակելի նրանց մասնագիտական տեխնիկ վարժարանները, իսկ համալսարան ունեն երկու հատ՝ մէկը Տօկիօ, միւսը Կիոտո, երկուսն էլ արքունի։ Կան և ազատ համալսարաններ։ Դրանցից մէկը յատկապէս կանանց համար է, հիմնւած Տօկիօյում 1901-ին։ Ընդհանրապէս կանանց բարձրագոյն կրթութեան խնդիրը այժմ մեծ քայլերով է առաջ գնում, մանաւանդ շնորհիւ Գարուկա թագուհու ձեռներէցութեանը։ Ճապոնն ունի արդէն իր գիտնականները, որոնք անուն են վայելում նոյն իսկ եւրոպայում։ Ճապոնի արագ առաջադիմութեան գլխաւոր նշաններից մէկն է և նրա մամուլի արագ գարզացումը։ Նրանց պարբերական հրատարակութիւնների թիւը հասնում է մինչև 1500-ի (Dumolard)։ Նրանց գինն էլ շատ էժան է։ Դա աւելի ևս զարմանալի է, եթէ յիշենք, որ ճապոնական այբուբէնը շաարդ է և դեռ չէ թօթափել շինականի լուծը։ Ճապոնական այբուբէնով, որ 48 տառ ունի, կարելի է արտայայտել միայն հասարակ խօսակցութիւնը, իսկ աւելի բարդ գաղափարների արտայայտութեան համար պէտք է դիմել 15 հազար շինական նշանների օգնութեանը, այնպէս որ պարզ այբուբէնի պահանջը այժմ խիստ մեծ է և երեկի երկար սպասել չի տալ։ Այժմեան այբուբէնով ճապոնացիք գրուա են վերեկց ներքեա, իսկ տողերը իրար յաջորդում են աջից ձախ։


፩ ተ የ ት ሂ ሃ በ ት እ

Տօկիօից անցանք գեղանկար Նիկո, որ յայտնի  
է իր զամբարան—տաճարներով, որոնք կառուցւած  
են ձապոնի սիրած ու մեծարած հերոս Իէսոսի յի-  
շատակին:

**Այդտեղից նազասակի արդէն ստիպւած էինք  
խստ շտապել, որպէս զի կլարդիվոստոկ մեկնող կա-  
մաւոր նաւատորմղի շոգենաւին հասնել կարողանանք:**  
**Եւ հագիւ հասանք:**

Մեկնող շոգենաւի տախտակամածի վրա դարձեալ եռում էր նոյն առևտուրը։ Եւ ես դժւարութեամբ անցայ յատակին փոած քաղմատեսակ ապրանքների միջով, մինչև հասայ նաւի ծայրը, ու մի վերջին հայեացք ձգեցի քաղաքին ու կապոյտ ծոցին, որոնք մայր մտնող արեկ ճառագայթների տակ մի առանձին ոսկեզօծ փայլ էին ստացել.

Հսւեց շոգենաւի սոյլը։ Վաճառականները մի ակնխարթում հաւաքեցին իրանց իրերը, կապեցին ու, խոր-խոր դլուխ տալով, արագ անհետացան նաւի սանդուկից։



Խարիսխն ահա քաշւած է արդէն, ու մենք շարժ-  
ռեցինք առաջ:

Կամաց անցնում, ետ-ետ են գնում ու կորչում  
աչքերիցս ցած ու հարթ ծովեզըն ու քարափը իր  
փայտէ տներով, ջօնկերն ու նաւակները իրանց բեռ-  
ներով, ու վերջն էլ զմբուխտի կղզեակները իրար ե-  
տևից լողում են, անցնում ու քիչ-քիչ թագում կա-  
պոյտ ու մթնող հեռաւորութեան մէջ:

—Սայնարան (մնաս բարով), ձապոն,—ասում եմ  
ես ակամայ, և զգում եմ, որ տխուր եմ:

Մեքենան արագացրեց իր կանոնաւոր դղբդիւ-  
նը: Զով քամին դէմ վազեց մեզ, բաց ծովն էր մեր  
առաջ իր լայն ալիքներով, որոնց վրա խտացող գի-  
շերը վառում էր իր անթիւ անհամար մանրիկ ճը-  
րագները:

Աչքերս յառած՝ նայում էի մութին, ու իմ ե-  
րևակայութեանս մէջ «ծագող արեի» կղզիներն էին  
դեռ միշտ և նրանց բնակիչների փոքրիկ շնորհալի  
կերպարանքները, որոնք ինձ իրանց գրաւիշ ժպիտն  
էին ուղարկում և մի առանձին հմայրի տակ էին պա-  
հում հոգիս: Եւ ինչքան խորասուզում էի իմ յիշողու-  
թիւններիս մէջ, այնքան աւելի առեղծւածային ու  
անբացատրելի էր թւում ինձ այդ ժողովրդի հոգին:  
Ի՞նչ հմայրով նա հասել է իր այդ զարմանալի հո-  
գեկան պարզութեանն ու իր այդ անվըդով փիլիսո-  
փայութեանը, որ մտել թափանցել է մինչև ժողովը-  
դի հողու խորըը: Եւ ի՞նչ հրաշքով նրա փափուկ,

քնքուշ ու կանացի սիրտը ձուլել է այդ վսեմ ա-  
րիութեան ու դիմացկունութեան հետ, որ ոչ մի ան-  
ջրպետի առաջ կանգ առնել չը գիտէ, չի սիրում կէս  
ճանապարհները ու գնում է առաջ արագ և վստահ,  
ճակատազրական անողոքութեամբ:

Քամին բուռն ոյժով խփեց դէմքիս, ու ես  
սթափւեցի: Խոր մութն էր արդէն ծովի վրա:

Ճուռ եկայ ու ուղղւեցի դէպի խցիկս:

— Սայնարա, ճապոն:



« Եթ ու միջնո՞ւ ի՞ւ նորո՞ւ նույն սովո՞ւ  
մի՞ աղմանիրք օճախ բարե՞ա չի՞ սմանելուայսուց  
վյուղուց թիզզուի պահպանուց չմասց և ուշի՞ ուր  
մասիս չժառո՞ր չմասց ևս զնո՞ր պահպանուայսուց  
ուր մի՞ ցամ զբանի մինմասու չի՞ և նորիկու մի՞  
ուրուչ ևս չի նորուասոցոյ մազցի՞ և սիրո՞ նու՞  
ու մինմասուայսու հրեմ մազցի՞ չի սիրմանի՞  
միջո՞ւ պայխուս քա՞ ևս նու՞ ու չի մասուայսու  
ու մրանակոյ քա՞ և լ լուս ու խոզուն? չ՞ և  
ուսիմի խորտիս քա՞ ո՞ւ ու մինմասուայսու մայմ  
պայխուս մզմո՞ւ և լուսականի քա՞ ու այսամիակու  
քայիսոյ այս խոզաց՞ չո՞ւ թ պայխուս ուրու՞ գր

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431079

21767